




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format  
Adapt — remix, transform, and build upon the material

891-99032

U-952











ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐ

---



13 APR 2011

Nr.

ՆՈՐ ՄԵՏԵՆԵԳՐԱՆ

4

891.99.092

Ա-9521

W


# ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՐԱԳԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ԲՆԱԳԱՏԱԳԱՆ ՎԵՐԱՆԵՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ՍԻՄԷՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ



ՎԻԵՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1922

1939

10 936

30.5.0



## Ց Ա Ն Կ

|                                            |    |
|--------------------------------------------|----|
|                                            | Էջ |
| I. Գրագեւոր . . . . .                      | 1  |
| II. Կեանքը . . . . .                       | 5  |
| III. Միջավայրը եւ ազդեցութիւններ . . . . . | 11 |
| IV. Իրապաշտական վէպը . . . . .             | 20 |
| V. Քաղաքական վէպը . . . . .                | 27 |
| VI. Աշխատանքական վէպը . . . . .            | 46 |
| VII. Արփիարեանի դերը . . . . .             | 63 |

542  
43

## I.

## Գ Ր Ա Պ Է Տ Ը

Արեւմտահայ գրականութեան մէջ մասնաւորապէս եւ հայոց գրականութեան մէջ ընդհանրապէս այս տաղանդաւոր հեղինակը ունեցել է շատ ծանր ճակատագիր:

Հակառակ իր գրական փայլուն ընդունակութիւններին եւ իր հրապարակագրական կարողութիւններին՝ Արփիար Արփիարեանը չէ գնահատուել մեր դժբախտ միջավայրում իր կենդանութեան ժամանակ, չէ գնահատուել տարաբախտաբար նաեւ այնուհետեւ:

Երկու անգամ մահափորձ է կատարուած այդ երախտաւոր գրագէտի վրայ, առաջին անգամ Կ. Պոլսում, երկրորդ անգամ 1903 թուին Վենետիկում: Առաջին մահափորձից յետոյ նա գրեց մեր նոր ժամանակի վիպագրութեան ամենակարեւոր երկերից մէկը — «Կարմիր ծամուցը»: Երկրորդ մահափորձից յետոյ գրեց մեր աշխատանքական արձակի ամենահամարձակ էջը — «Ոսկի Ապրիլներ»:

Մի բարեբախտութիւն եղաւ հայոց գրականութեան համար, որ Կ. Պոլսի եւ Վենետիկի գնդակները չհասան իրենց նպատակին: Բարեբախտութիւն եղաւ, որովհետեւ այսօր հայոց գրականութիւնը ունի երկու արժէքաւոր երկեր, որոնք դարաշրջան են բնորոշում եւ որոնք չեն լինի այլապէս:

Բայց անիծեալ ճակատագիրը երրորդ անգամ անողոք եղաւ գրագէտի հանդէպ, աւելի եւս անողոք եղաւ մեր գրականութեան համար: Արփիար Արփիարեանի դէմ չարաբաստիկ մահափորձը կրկնուեց 1908 թուին Կահիրէում, եւ այս անգամ այլ եւս չ'ազատուեց նա: Անհատը ընկաւ անէութեան գիրկը մի ծանր վարկեանի մէջ, թերեւս չգաղով սարսափելի եւ յանկարծական իրողութեան բոլոր տագնապը: Բայց նրանից յետոյ մենք զգացինք, եւ զգում ենք մինչեւ հիմա, թէ ինչ կորուստ ունեցաւ հայոց հաւածուած գրականութիւնը: Մենք զգացինք, որ «Կարմիր ծամուց» ներ եւ «Ոսկի Ապրիլներ» ներ ստեղծագործող գրագէտը անդառնալի կերպով հեռացաւ մեզանից, թափուր թողնելով իր տեղը երկար ժամանակ:

Արփիարեանը մեզանից հեռացաւ դեռ այրական հասակում, աշխատանքի եւ մտաւորական կեանքի կատարեալ կարողութեան մէջ: Նա գիտէր



մեր պատմութիւնը, մեր իրականութիւնը, մեր լեզուն, մեր գրականութիւնը, ինչպէս քչերը գիտէին նրա ժամանակ եւ աւելի եւս քչերը գիտեն հիմա: Փորձառութիւններ ունէր նա մեր միջավայրի զանազան խաւերից: Ճանաչում էր եկեղեցականին, հարստին, մտաւորականին, արհեստաւորին, գործաւորին: Եւ ինչ որ չափազանց գնահատելի է եւ զարմանալի, այդ գրագէտը գնում էր կեանքի հետ, չբարանալով մի իդէալի վրայ, երբ իրականութիւնը իր զարգացման յարատեւ շարժման մէջ ցոյց էր տալիս հին իդէալների ապիկա-րութիւնը, փաստագրութիւնը:

Իրականութեան կատարեալ զգացումն ունէր նա:

Ծնուելով եւ մնուելով մի միջավայրում, որ կրում էր ամիրայական նութեան եւ միջնադարեան եկեղեցականութեան խոր կնիքը — Արփիարեան չյամառեց իր սքոլաստիքական դաստիարակութեան մէջ: Գրաբարի կապանք-ների մէջ մինչեւ քսան տարեկան հասակը մնալով ակամայ կերպով — նա դպրոցից յետոյ ծառացաւ գրաբարեան նուիրական դարձած աւանդութիւն-ների դէմ: Գաղութային իրականութեան եւ մտայնութեան մէջ մեծանալով — նա զգաց, որ հայ գրականութիւնը կարող է գոյութիւն ունենալ միմիայն գաւառական ոյժերով եւ գաւառական հողի վրայ հիմնուելով: Բարոյական համակերպութեան միջոցով իր մանկական եւ պատանեկան տարիները կերակրելով — Արփիարեան զգաց, որ ոյժի ազդեցութեամբ միայն ժողովուրդները կարող են իրենց համար մարդկային կեանք ապահովել, անշուշտ այս ոյժը իմաստութեամբ եւ իրականօրէն գործադրելով:

Եւ վերջապէս, ազգային ռոմանտիզմի հոսանքի մէջ ընկնելով, գնալով որոշ ժամանակ այդ նոր հոսանքի հետ — Արփիարեան յիսուն տարեկան հասակում զգաց, որ նա եւս հնացաւ մեր մշտանորդ կեանքի համար: Եւ զգալով այդ գնաց հոսանքի դէմ, ցոյց տալով որ մեր ժողովրդի փրկութիւնը արտաքին միջամտութեան մէջ չէ, որ այլասերուած եւ դրամատիրական եւրոպան չի կամենայ եւ չի կարող հայ աշխատաւոր զանգուածների իդէալները իրագործել:

Բոլոր այս խնդիրները մենք քննում ենք այնչափ, որչափ կապուած են Արփիարեանի գրական գործունէութեան հետ: Մենք դիտում ենք գրագէտը եւ տալիս ենք այն, ինչ նրա գրական ստեղծագործութեան մէջ տեսնում ենք: Իբրեւ կուսակցութեան մարդ, իբրեւ քաղաքական գործիչ, իբրեւ հրապարակագիր — Արփիարեան չի կարող այսօր արժէքաւոր լինել: Ինչ որ մնացել է նրանից մեր սերնդի համար, ինչ որ կը մնայ այսօրհետեւ եւս — Արփիարեանի գրականութիւնն է: Այդ գրականութեան մէջ ցոլանում է 80-ական թուականների մեր հասարակական եւ տնտեսական իրականութիւնը: Այդտեղ ներկայացուած է 90-ական թուականների մեր ժողովրդական յեղափոխու-թիւնը ոչ իբրեւ ծրագիր, այլ իբրեւ իրողութիւն, կենդանի, ապրող տիպերով:

Այդտեղ ցոլանում է վերջապէս 900-ական թուականների մեր աշխա-

տաւորի կեանքը եւ մեր աշխատաւորական իդէալը, որ սրբագրում է հինը եւ որ նոր ճամբաներ է ցոյց տալիս մեր ժողովրդին:

Այս բոլորը սակայն դրուած է ոչ թէ հրապարակագրական ձեւի մէջ իբրեւ գաղափար, այլ գրական-գեղարուեստական ամբողջութեան մէջ, իբրեւ կենդանի ապրում, իբրեւ կենդանի մարդ:

Իբրեւ հրապարակագիր՝ Արփիարեան մշակուած չէր ժամանակի ընկերա-բանական եւ տնտեսական գիտութիւններով: Բայց Արփիարեան կեանքի փոր-ձառութիւն ունէր պատկառելի չափով, Արփիարեան կեանքի իմաստութիւնը ունէր — եւ տեսնում էր այն, ինչ որ ուրիշները կարգում էին:

Հրապարակագրութեան մէջ Միքայէլ Նալբանդեանից յետոյ գալով ժամանակագրական կարգով, այնուամենայնիւ նրան բնաւ հաւասար չէր, նրան ամենեւին չէր կարող հասնել: Այն, ինչ որ 60-ական թուականներին Նալբանդեանը հասկացել էր եւ աւանդել նոր սերունդին, Արփիարեան 80-ական թուականներին տակաւին չէր հասկացել, ինչպէս չէր հասկացել նրա ժամանակակից եւ նրա բարեկամ Գրիգոր Արծրունին:

Այս տեսակէտից, թէ Գրիգոր Արծրունու հրապարակագրութիւնը Կովկասում եւ թէ Արփիարեանի հրապարակախօսութիւնը Կ. Պոլսում առաջադիմութիւն չէր: Բայց իր միջավայրում, Կ. Պոլսի այն ժամանակուայ յետա-մնաց պայմանների մէջ — Արփիարեան այնուամենայնիւ ամենաուժեղն էր եւ ամենէն առաջադէմը: Գրիգոր Օտեան, Մատթէոս Մամուրեան, Չիլինկիրեան, Մինաս Չերազ, որոնք նրանից աւելի վաղ էին հրապարակագրական ասպարէզ մտել, Բիւզանդ Բէշեան, Գրիգոր Զոհրապ, Յովհաննէս Շահնազար, որոնք գրում էին նրա ժամանակ եւ նրանից յետոյ — ամբողջութեան մէջ չկարողացան գերազանցել Արփիարեանին կամ նրան հաւասարել: Այդ հրապարակագիրների համեմատութեամբ Արփիարեան կասկածելի առաւելութիւններ ունէր: Աւելի նոր էր, կենդանի, ժամանակակից, քան նրանցից որ եւ է մէկը: Ուժեղ խառնուածք ունէր իր հրապարակագրութեան մէջ, ժողովրդական էր, համարձակ էր, շեշտակի էր:

Այսպէս էր նա «Արեւելք»-ի մէջ 80-ական թուականներին, այսպէս էր մանաւանդ «Հայրենիք»-ի մէջ 90-ական թուականներին, այսպէս էր նաեւ «Նոր Կեանքի» մէջ՝ իր բոլոր պաշտօնակիցների բաղդատութեամբ:

Բայց այսքանը միայն: Եւ այսքանը ապահովաբար բաւական չեղաւ, որ մեր հրապարակագրութեան մէջ Արփիարեան մնայ իրենից յետոյ, որովհետեւ նա չկարողացաւ Նալբանդեան լինել կամ նրա գործը շարունակել:

Գեղարուեստական գրականութեան մէջ սակայն նա աւելի եղաւ, եւ այստեղ նա Միքայէլ Նալբանդեանի պէս նորագոյն ժամանակի ոգին զգաց եւ վերարտադրեց:

Այս ոգու զգացողութիւնը եւ վերարտադրութիւնը որքան էլ սակաւա-թիւ գործերի մէջ անձնաւորուէր — այնուամենայնիւ մնալու էր, ապրող եւ գեղեցիկը այդտեղ էին:



Կովկասահայերի մէջ 80 ական թուականներէից յետոյ սկսուեց իրական վիպագրութիւնը, որի գեղարուեստական արտայայտիչները եղան Ղէօ եւ մասնաւոր Շիրվանզադէ: Գրեթէ միեւնոյն ժամանակ Կ. Պոլսում հիմք դրուեց իրապաշտական վիպագրութեան, որի ներկայացուցիչը եղաւ Արփիար Արփիարեան: Գրիգոր Զոհրապ, Տիգրան Կամսարական, Լեւոն Բաշալեան եւ ուրիշները Արփիարեանի ստեղծած ճանապարհով գնացին եւ զարգացան նրա գաղափարական ազդեցութեան ներքոյ:

90 ականի վերջերում եւ 900 ականի սկիզբներում կովկասահայ քաղաքական եւ սոցիալական արձակը արտայայտուած էր մեծ մասամբ Աւետիս Ահարոնեանի երկերի մէջ, որ Բաֆֆիի երկերի արձագանգն էին եւ որ ընդհանրապէս երեւակայական գործեր էին: Արփիարեան այդ ժամանակ ներկայացրեց մեր քաղաքական իրականութիւնը՝ կենդանի մարդկանց միջոցով: Ոչ Բաֆֆիի պէս ծրագիրներ էր տալիս նա յեղափոխական շարժման համար, եւ ոչ էլ Ահարոնեանի պէս լալիս էր այդ շարժման անյաջողութիւնը — այլ նկարում էր շարժման անձերը եւ պատկերացնում էր շարժումը իրական եւ ճշմարիտ հոգեբանութեամբ: «Կարմիր ծամուց»ը այդ գրականութեան լաւագոյն արտագրութիւնն է իբրեւ հոգեբանական եւ գեղարուեստական երկ, եւ ոչ իբրեւ քաղաքական պրօպագանդա:

Բայց Արփիար Արփիարեան չմնաց այդ կէտի վրայ եւ մեր վիպագրութեան համար նոր ուղիներ բաց արեց: Այստեղ արդէն նա մենակ էր իր ժամանակ, մենակ է տարաբախտաբար մինչեւ հիմա:

Ահա թէ որտեղ է գրագէտի մեծութիւնը:

Իբրեւ գրագէտ՝ Արփիար Արփիարեան ազնիւ կեանք ունեցաւ: Ապրեց նա ծանր եւ տաժանելի պայմանների մէջ, չարքաշ, նեղութիւններով լի, ամենօրեայ եւ շարունակական զոհողութիւններով:

Եթէ մինչեւ անգամ ապագայի անաչառ պատմաբանը հաստատի, թէ այդ տաղանդաւոր հեղինակը, տկար եւ անգիտակից ժամերին, մարդկայնօրէն մեղքեր է գործել — ապա գրականութեան համար նա լիովին սրբագրել է իր մարդկային թերութիւնները, այնքան սրտառու է եւ ազնիւ երկերով, այնքան դառն կեանքով եւ մանաւանդ այն ողբերգական մահով: Որովհետեւ ո՞վ է, որ մեր անկատար աշխարհում կարող է աւելին պահանջել: Եւ բարոյապէս որքա՞ն անմեղ են նրանք, որոնք մեռնում են փառքի գագաթնա՝ կէտին, հասարակութեան ովսանաները վայելելով:

Իսկ եթէ տխուր առեղծուածք լուսաւորուի Արփիարեանի անմեղութեամբ — այն ժամանակ նրա անունը պիտի մնայ մեր գրականութեան մէջ իբր իսկական նահատակի անուն:

Նա պիտի ներկայանայ յետորդ սերնդին աւելի ողբերգական կերպարանքով, քան մեր նոր գրականութեան որ եւ է մէկ հեղինակը, որովհետեւ նրա մահը հազարապատիկ աւելի դառն էր:

Արփիար Արփիարեան մեր գրականութեան մէջ յեղաշրջում մտցրեց: Նրա գործը ոչ միայն ազնիւ է իր խորքով, այլ եւ գեղեցիկ է իր արուեստով:

Եւ ինչ որ այդ ողբերգական գրագէտին բարձրացնում է սերունդների աչքում, այդ նրա գործի ոչ միայն պատմական մասն է, այլ եւ ներկայ արժէքն է, որով նա կարող է այսօր էլ օրինակ լինել նոր գրողներին...

## II.

### Կ Ե Ա Ն Ք Ը

Արփիար Արփիարեանի կեանքի վրայ մենք շատ համառօտ կանգ կառնենք: Եւ կ'աշխատենք այնպիսի էջեր մատնանշել, որոնք անմիջապէս կապուած են նրա գրական գործունէութեան հետ:

Ծնուել է նա մի ճանապարհորդութեան ընթացքում, երբ նրա ծնողները Ակնի Ապուշէս գիւղից Կ. Պոլիս էին գնում, 1850 թվին, Սամսոն նաւահանգստում: Գրիգոր Զոհրապ, Արփիարի մասին գրած իր սրամիտ յօդուածում, այս պարագան խորհրդածութեան նիւթ է դարձնում եւ Արփիարեանի կեանքը համեմատում է ալեկոծ, խորունկ եւ տատանուող ծովին:

«...Նաւագնացութեան մը միջոցին, ծովի վրայ լոյս տեսած այս երիտասարդը, առկէ թերեւս, անդունդի վրայ քալող մարդու քայլուածքն ունի եւ զլսի պտոյտը:»

«...Իր անհաւասար գրականութիւնը այս ծովին պէս լեցուն է անկումներով եւ բարձրացումներով...»<sup>1</sup>

Կ. Պոլիս հասնելով Արփիարեանի ծնողները տեղաւորուում են Օրթագիւղ, ուր եւ մեծանում է նրանց զաւակը:

Այսպէս, Արփիարեան չէ ծնւում գաւառական ժողովրդի միջավայրում, բայց ապրում է մի ընտանիքում, որ դեռ նոր էր գաղթել գաւառից եւ պահում էր գաւառի սովորութիւնները, բարքերը, լեզուն:

Ծնողների գաղթականութեան պատճառները մեզ յայտնի չեն, բայց յայտնի է, որ Ապուշէսը եւ առհասարակ Ակնի շրջանը շատ սակաւահող երկիր է եւ գիւղացիները չէին կարողանում երկրագործութեամբ իրենց օրական ապրուստը հայթհայթել:

Կ. Պոլիս տեղափոխուելով՝ ծնողները չեն կտրուում գաւառից: Թղթակցութիւններ են ստանում հայրենիքից, որոնց մէջ սրտաճմլիկ ոճերով պատուում է գաւառի կեանքը, մնացողների վիճակը, ժողովրդի ամենօրեայ ողբերգու-

<sup>1</sup> «Ծանօթ գէմբեր — Արփիար Արփիարեան», Գր. Զոհրապի:



Թիւնը: Այդ նամակներից շատերը կարդում է Արփիարեան եւ տակաւին մանուկ հասակից կապում է գաւառի կեանքի հետ:

«...Մանկութենէ ի վեր կարդացած եմ այդ նամակները, լսած եմ ակնցիներու պատմութիւնները, տեսած եմ անոնց արցունքները, ու այդ ամենը վրաս խոր տպաւորութիւն թողած են, եւ սիրտս լեցուցած են այնպիսի զգացումներով, զորս միայն պիտի կարենամ մասամբ բացատրել, եթէ օր մը ինձ հնարաւոր ըլլայ գրել ակնցիներու կեանքէ այն վէպը, որուն կը տենչամ երկարատեւէ ի վեր<sup>1</sup>»:

Այս միջավայրը անջնջելի տպաւորութիւն է թողնում Արփիարեանի զգայուն մտքի վրայ, եւ հասուն տարիներում նրա հրապարակագրական եւ գրական աշխատանքների ուղղութիւնը մեծ չափով պայմանաւորում է:

Ազգայնական կրթութիւնը Արփիարեան ստանում է Օրթագիւղի Թարգմանչաց դպրոցում, որտեղ նա կուսում է Արփիար ֆիլիպպոսեան:

Օրթագիւղի դպրոցը բացառութիւն չէր ներկայացնում այն ժամանակուայ մեր դպրոցական հիմնարկութիւնների մէջ: Քերականութեան, ճարտասանութեան, գրաբարի դաստիարակութիւնն էր, որ տակաւին յամառում էր իր միջնագարեան տիրապետութեան մէջ եւ չէր ուզում ենթարկուել նոր մանկավարժութեան ու հոգեբանութեան տարրական օրէնքներին: Այդպիսի դպրոցում էր սովորել Պետրոս Գուրեան, մեր նորագոյն բանաստեղծութեան հիմնադիրը: Այդպիսի դպրոցում սովորեց նաեւ Արփիար Արփիարեան, մեր նոր արձակի եւ իրապաշտական գրականութեան ներկայացուցիչը:

Այդ դպրոցից դուրս գալով՝ Արփիարեան եղաւ գրաբարեան դաստիարակութեան համոզուած հակառակորդը եւ աշխարհաբարի տաղանդաւոր պաշտպանը:

«...Մենք գրաբարի... հակառակորդ ենք, երբ կուզուի դպրոցին մէջ մատուցել տղոց միտքը շարժելով գրաբարի անպէտ, վնասակար ուսուցումով, երբ աշխարհաբար գրելու համար կուզուի կուրօրէն հետեւել գրաբարի կազմակերպութեան<sup>2</sup>...»:

Օրթագիւղի դպրոցի մասին յետագայում մի քանի հետաքրքրական յիշողութիւններ է հրատարակել Արփիարեան<sup>3</sup>: Այդ յիշողութիւնների մէջ չափազանց դառն տրամադրութեամբ է արտայայտուել դպրոցում տիրող մտաւոր եւ բարոյական դաստիարակութեան նկատմամբ: Առանձնապէս բացասական կերպարանքով է ներկայացրել նա կրօնագիտութեան ուսուցիչ Աւետիս Պէրպէրեանին, որ նրա հաղորդագրութեան համաձայն եղել է խստաբարոյ, դժան եւ բարբարոս: Այդ ուսուցչի բարոյական ամբողջ դաստիարակութիւնը արտայայտուած է եղել «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ

<sup>1</sup> «Հայրենիք», Կ. Պոլիս 1891 թ., Օգոստ. 8:

<sup>2</sup> «Կեանքի Լեզուն», Արփիարեան, «Հայրենիք», Կ. Պոլիս, 4 Հոկտեմբ. 1892:

<sup>3</sup> «Անցեալի Յիշատակներէն», «Հայրենիք», Կ. Պոլիս 1892 թ., Մարտ 8:

Թիկամբ» հին սկզբունքի մէջ, որ նա ըմբռնել է կատարելապէս բառացի իմաստով, ուղղուած իր մատաղհաս եւ անպաշտպան աշակերտների դէմ:

Այս նկարագրութիւնը զարմանալի կերպով նման է այն նկարագրութեան, որ տուել է Պերճ Պոօշեան կովկասահայ հին դպրոցների վերաբերմամբ: Գրանից երեւում է, որ հայ հեղինակները թէ արեւելահայերի եւ թէ արեւմտահայերի մէջ սարսափելի ծանր դժուարութիւններով են իրենց համար ճանապարհ բաց արել կեանքի եւ գրականութեան ասպարիզում: Միւս կողմից, Գրիգոր Զոհրապ, որ տարբեր ձեւով է ներկայացնում Աւետիս Պէրպէրեանին իր յիշողութիւնների մէջ — դպրոցական ընդհանուր ուժեղ մասին նոյն դիտողութիւններն է հաղորդում:

Այս պայմաններում, անշուշտ, Արփիար Արփիարեան շատ բան չէր կարող ստանալ Օրթագիւղի դպրոցից: Միակ բացառութիւնը, որի մասին Արփիարեան խօսում է մեծ յարգանքով եւ սրտառուչ երախտագիտութեամբ՝ թուաբանութեան ուսուցիչ Գաբրիէլ Ներշապուհն է եղել<sup>1</sup>: Այս ուսուցիչը թուաբանութեան չոր դասերից զատ՝ սովորեցնում էր ամեն ինչ: Նա բանաստեղծութեան էր, ինչպէս արտայայտուում է Արփիարեան: Վիկտոր Հիւգօի մասին առաջին անգամ նրանից է լսել: Խօսել է Ֆրանսիական գրականութեան լաւագոյն ներկայացուցիչների մասին, բացատրել է, կարեւոր դէպքերում կարդացել է ընտիր էջեր — մի խօսքով բաց է արել ուսումնաճարաւ պատանիների սիրտը: Տարիներ յետոյ, երբ Գաբրիէլ Ներշապուհն հեռանում է դպրոցից, միայնութեան մէջ բանաստեղծութիւններ է գրում եւ հրատարակում է «Մոռցուած մարդը», ծածկանունով — Արփիարեան խիստ վիշտ է գգում, քանի որ Ներշապուհն բնաւ մոռացուած չէ իր աշակերտների համար:

Օրթագիւղի դպրոցում Արփիար Արփիարեան մնում է մինչեւ 1865 թուականը, եւ ստանում է այն, ինչ որ այդ յետամնաց ժամանակներում եւ այդ միջավայրում կարելի էր ստանալ:

1867 թուին մեկնում է Վենետիկ, մտնում է Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, ուր աշակերտում է բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանին:

Ռաֆայէլեան դպրոցում Արփիարեան կատարելագործում է հայերէն լեզուն, հայոց պատմութիւնը, հայ գրականութիւնը, ծանօթանում է իտալական եւ ֆրանսիական գրականութիւնների հետ, որ յետագայում որոշ չափով ազդեցութիւն են ունենում նրա գրական գործունէութեան վրայ: Ասում ենք որոշ չափով, քանի որ Արփիարեանի իրապաշտական գրականութիւնը աւելի մեծ չափով կապուած է ուրիշ ազդեցութիւնների հետ, որոնց մասին քիչ յետոյ առիթ կունենանք խօսելու: Ոչ այն դաստիարակութիւնը, որ նա ստացաւ Օրթագիւղի Թարգմանչաց դպրոցում եւ ոչ այն, որ նա ստացաւ Վենետիկ — իրենց ներքին սկզբունքներով իրապաշտական չէին: Կեղծ դասականութեամբ

<sup>1</sup> «Օրը Օրին», «Հայրենիք», Կ. Պոլիս 1892, Սեպտ. 4:



Թեան եւ մասամբ ուսման տիրույթի բարոյական միջավայրեր էին նրանք, որոնք տալիս էին գլխավորապէս Պէշիկթաշեանի, Հէքիմեանի, Թերզեանի, Աճէմեանի նման գրագէտներ:

Անկախ ստացած դաստիարակութեան ուղղութիւնից՝ Արփիարեան Վեներտիկեան դպրոցում ձեռք բերեց մտաւոր պաշար, որ յետագայում օգնեց նրան գրական եւ հրապարակագրական ասպարիզում:

Վեներտիկի դպրոցն աւարտելուց յետոյ Արփիարեան վերադարձաւ Վ. Պոլիս: Սկզբում եղաւ քարտուղար հայոց պատրիարքարանի մէջ, յետոյ սեղանաւորի մօտ հաշուակալի պաշտօն ստանձնեց: Բայց այսպիսի պաշտօնները չէին կարող բաւարարութիւն տալ Արփիարեանի բնոյթին — եւ նա կարճատեւ խարխալութեան յետոյ գտնուեց իր իսկական ճանապարհը, հանրային գործունէութեան, հրապարակագրութեան եւ գրականութեան ասպարէզը: Արփիարեան ընտրուեց երեսփոխան Ազգային ժողովի, նշանակելի գեր է կատարում Արարատեան ընկերութեան հիմնադրութեան մէջ, որ նպատակ ունէր Հայաստանի գաւառներում ժողովրդական դպրոցներ բաց անել եւ որ այդ առաքելութեամբ Վասպուրական է ուղարկում Մկրտիչ Փորթուգալեանին: Արփիարեան գաղափարական յարաբերութեան մէջ է մտնում ոչ միայն գաւառի հայութեան, այլ եւ կովկասահայերի հետ: Աշխատակցում է Գրիգոր Արծրունու «Մշակ»-ին կանոնաւոր եւ սերտ կերպով, անցնում է Կովկաս հանրային գործերով, լինում է Թիֆլիս, Երեւան, Էջմիածին, ծանօթանում է կովկասեան կեանքի ու տրամադրութիւնների հետ, ինչպէս եւ արեւելահայ գրողների — Բաքիի, Պերճ Պաօշեանի, Ղազարոս Աղայեանի եւ միւսների հետ: Վ. Պոլիս վերադառնալով՝ «Արեւելք»-ի եւ «Մասիս»-ի մէջ, 1884-ին, մի շարք յօդուածներ է հրատարակում եւ աշխատում է ամեն կերպ արեւելահայութեան եւ արեւմտահայութեան գրականութիւնները, կեանքը, տրամադրութիւնները իրար մերձեցնել: Արփիարեանի գերը այս տեսակէտից լինում է բաւական նշանակալից, այն ժամանակուայ համար մանաւանդ, երբ գրական-բարոյական կապը այդ երկու հատուածների միջեւ դեռ նոր էր սկսւում:

Այս շրջանից է սկսւում Արփիարեանի գրական-գեղարուեստական գործունէութիւնը: 1885 թուականին հրատարակում է նա իրապաշտական գրականութեան երեք նախափորձեր — «Դատապարտեալը», «Երազի մը Գինը» եւ «Կատակը» — ամփոփուած մի հատորի մէջ, որ կրում էր «Կեանքի Պատկերներ», ընդհանուր խորագիրը: 1889—1890 թուին Արփիարեան մտնում է Հնչակեան կուսակցութեան մէջ, քաղաքական գործունէութեան համար ձեռնադրւում է 1890-ին, ապա ազատ արձակուելով՝ 1891 թուին Զովհանէս Շահնազարի հետ հիմնում է «Հայրենիք» օրաթերթը:

Այս օրաթերթը, ուր մասնակցում էին ժամանակի երիտասարդ գրական եւ հրապարակագրական ոյժերը, Վ. Պոլսի մտաւորական-հասարակական կեանքում նշանակելի երեւոյթ էր: Ժողովրդական-դեմոկրատական սկզբունք-

ների պաշտպան էր նա ընդհանրապէս՝ ուղղուած վսեմաշուքների աւատական հոգեբանութեան եւ մտայնութեան դէմ: Կովկասի իր մէկ բարեկամին գրած նամակի մէջ՝ Արփիարեան խօսում է վսեմաշուքների եւ «Հայրենիք»-ի յարաբերութիւնների մասին, որից երեւում է թէ ինչպիսի չափաւոր ծրագիր ունէր թերթը եւ թէ Վ. Պոլսի ամիրայական միջավայրում այդ չափաւոր ծրագիրն անգամ ինչպիսի հակառակութիւն էր գտնում:

«... Աղնուշուքներու եւ վսեմաշուքներու շրջանակները «Հայրենիք»-ի սիրող չեն: Երեւակայեցէք, որ անոնց անունները պարզ կը գրենք, առանց շողջողուն տխրոյսներու, առանց զանազանելու «հասարակ մահկանացուներէն»: Անոնց հարսանիքներն ու մեռելները, անոնց ուղեւորութիւնները մեզ համար կարեւորութիւն չունին եւ չենք գրեր՝ զոհանակութեամբ, կամ «խորին ցաւով»:

Վ. Պոլսի հարուստ դասակարգի թշնամութիւնը լոկ տեսական չէր դէպի «Հայրենիք»: Այդ թշնամութիւնը գործնական արտայայտութիւն է ստանում նրանով, որ վսեմաշուքները աշխատում են փակել տալ թերթը թուրք կառավարութեան միջոցով: Արփիարեան եւ իր ընկերները ծանրածանր դժուարութիւններով են կարողանում փակուած թերթը վերստին հրատարակել եւ շարունակել իրենց պայքարը մեռնող դասի դէմ:

Յետագայում Պ. Արշակ Զօպանեան խօսելով Արփիարեանի եւ նրա վարած այս պայքարի մասին, հետեւեալ պարզունակ ձեւով է պատկերացնում այն:

«... Հայրենիք, ի մեծ սխալներէն մէկը եղաւ անհաշտ ու մոլեգին կռիւ մղել ամբողջ հարուստ դասակարգին դէմ: Եթէ «Հայրենիք» հարուստներէն մէջէն բռնուելիք կողմեր ունեցողներուն նկատմամբ բարեկամական քննադատութեան, անթոյն խորհրդատուութեան մեթոդը գործածած ըլլար, անոնցմէ մէկ կարեւոր մասը իր բանակին մէջ պիտի ունենար, եւ անոնցմով պիտի կարենար իրագործել ծրագիրներ, որոնք միայն կ'ծու քրոնիկներով չէ որ կրնան իրագործուիլ: Արփիարեանի ուղղութիւնն էր, որ գլխաւոր պատճառ կազմեց այդ անջատումին<sup>1</sup>»:

Բայց Արփիարեանի առաւելութիւնը իսկ եւ իսկ այնտեղ էր, որ նա չէր կամենում կամ չէր կարողանում տեսնել «բռնուելիք կողմեր ունեցող» հարուստներ: Եւ եթէ այդ «ուղղութեամբ» էր նա տարբերւում Վ. Պոլսի եւ «Հայրենիք»-ի իր ընկերներից — ապա դա վարձք է եւ ոչ մեղք, եւ այդ է, որ նրան հետաքրքրական եւ ուսանելի է դարձնում նաեւ ներկայումս:

1895 թուականի Սեպտեմբեր 18-ին Վ. Պոլսում տեղի է ունենում Հնչակեանների ցոյցը: Ցոյցից յետոյ շատ հայեր թագնուեցին եւ յետոյ դաշտին անցան արտասահման: Արփիար Արփիարեան հեռացողների մէջ էր:

<sup>1</sup> «Արփիար Արփիարեան», յօդուած Ա. Զօպանեանի. «Անահիտ», 1901 թ. փետրուար:



1896 թվականից մինչև 1901 նա ապրում է Լոնդոնում Հնչական կուսակցութեան գործերով: Վարում է այնտեղ «Նոր-Կեանք», եւ «Մարտ» թերթերի խմբագրութիւնը իրեն յատուկ տաղանդով, ապա անցնում է Պարիս, որտեղից 1902 թուին տեղափոխւում է Վենետիկ, ուր եւ հիմնում է «Հայ Հանդէսը»: Այդ ժամանակուանից Արփիար Արփիարեանի համար սկսւում են ծանր, ողբերգական տարիները: Տարիքն արդէն բաւական առաջացած է: Երիտասարդական հասակում կարող էր ամեն տեսակ ներդրութիւններ տանել եւ փոյթ չէր: Բայց հիմա մենակ, լքուած իր ընկերներից եւ բարեկամներից, զուրկ նիւթական յետին միջոցներից — Արփիարեան շարունակում է կրել կեանքի անտանելի բեռը եւ աշխատել հայ գրականութեան համար: Այդ շրջանին է պատկանում նրա «Կարմիր ծամուց», ուժեղ, գեղաբուսական գրուածքը, որ արտադրել է նա ամենագիտարին պայմաններին մէջ:

Երկրորդ մահափորձից յետոյ, 1903 թուին, Արփիարեան դադարեցնում է «Հայ Հանդէսը»: Ապա տեղափոխւում է Եգիպտոս, ուր եւ վարում է «Շիրակ», ամսագրի խմբագրի պաշտօնը: Հրապարակագրական եւ այլ տեսակի բաղմնութիւ յօդուածների հետ միասին՝ նա այդ շրջանում արտադրում է երկու գեղարուեստական գործ: Այդ գործերից մէկը, «Մինչեւ երբ», խորագրով մի հետաքրքրական պատմութեամբ, վերամշակութիւնն է մի պատմութեամբ, որ Արփիարեան հրատարակել է 1889 թուի «Մասիս»-ի մէջ: Երկրորդը, «Ոսկի Ապրիլ», խորագրով, աւելի մեծ եւ ամբողջական գործ է, ներկայացնում է մեր աշխատաւորական գրականութեան ամենէն համարձակ, խիղախ եւ տաղանդաւոր էջը:

Մինչ այսպէս մեծամեծ զոհողութիւններով եւ տանջանքներով հարստացնում էր նա մեր մտաւորական գանձարանը — կրկնում է երրորդ անգամ յամառ, աղէտաւոր մահափորձը, 1908 թուի Յունուար 30-ին, եւ Արփիար Արփիարեան անշնչացած ընկնում է Կահիրէի փողոցում:

Ահաւասիկ եղբրական եւ հերոսական կեանքը այս համարձակ, ինքնուրոյն, ուժեղ գրագէտի, որի կորուստը մինչեւ այժմ էլ այնքան զգալի է մեր գրականութեան համար եւ որի աղէտալի ճակատագրի առջեւ ամենասառնասիրտ մարդն անգամ կը յուզուի մինչեւ հոգեկան խռովութիւն:

Իր մահից ընդամենը կէս տարի առաջ «Քառութեան կանթեղ», խորագրով մի յօդուածի մէջ Արփիարեան պատմում է հետեւեալ սրտառու զրոյցը:

«... Վենետիկ, երբ իրիկունները մութը կը կոխէ, սուրբ Մարկոսի գմբէթին ներքեւ, հրապարակին վրայ նայող անկիւն մը, կանթեղ մը կսկսի պլլլլալ: Հանրապետութեան օրով ոճրի մը առիթով հացափառ մը իբր եղբունգործ մահուան կը դատապարտուի: Խեղճը կախուելէն յետոյ՝ անոր անմեղութիւնը կը յայտնուի: Անկէ ի վեր հարկւաւոր տարիներ են՝ Վենետիկը իր սխալումը քաւելու խղճահարութեամբ ամեն գիշեր կանթեղ մը կը վառէ անմեղին հոգուն:»

Արփիարեան զգում էր արդեօք, որ մի տարի չանցած ինքն էլ պիտի գնդակահար ընկնի ստեղծագործական աշխատանքի մի բեղմնաւոր շրջանում:

Վենետիկի պէս «քառութեան կանթեղ» չենք վառել մենք ողբերգական Արփիարեանի համար: Միստիքական գործերը հին ժամանակների հետ անցել են յաւէտ:

Բայց Արփիարեանի իրական գործը մնում է մէջ տեղ: Եւ մենք պարտաւոր ենք այդ իրական գործը ճանաչել, գնահատել եւ ներկայի համար արժէքաւոր դարձնել:

### III.

#### Մ Ի Զ Ա Վ Ա Յ Ր Ը Ե Ի Ա Զ Գ Ե Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ի

Արփիար Արփիարեանի գրական գործը առաջացաւ որոշ միջավայրի մէջ եւ որոշ ազդեցութիւնների ներքոյ: Ար կամենայինք գէթ համառօտ կերպով այս խնդիրը ներկայացնել, որպէս զի նրա գործը աւելի պարզ երեւայ ընթերցողին:

Կենսագրութեան մի քանի տուեալներից արդէն որոշ չափով կարելի է նրա գործի էութիւնը կռահել:

Առանց դաւառական հողի վրայ ապրելու, նա իր գաւառացի ծնողներից շատ բան իւրացրեց այդ ուղղութեամբ: Տեսանք թէ ինչպէս Ակնի հետ մշտական յարաբերութեան մէջ էր նրա ընտանիքը եւ թէ ինչպէս Ակնից ստացուած թղթակցութիւնները նրա մանկական հոգուն այնքան կարեւոր սնունդ տուին: Այս բարոյական միջավայրում էր մեծացել Արփիարեան եւ այստեղից էր նրա մէջ միտք ծագել՝ գրելու մի ընդարձակ վէպ Ակնի կեանքից, ինչպէս տեսանք նախորդ էջերում:

Արփիարեան սակայն չի կարողանում գրել այս վէպը, որովհետեւ կեանքի պարագաների բերումով նա չի կարողանում գաւառում ապրել եւ անմիջապէս ծանոթանալ գաւառի եւ գիւղի իրականութեան հետ:

Բայց այն, ինչ որ նա ստացել էր իր գաւառական ընտանիքում մանուկ հասակից, ուղղութիւն է տալիս նրան յետագայում եւ ուրիշ տեսակէտով դեր է կատարում նրա գրական-գաղափարական կեանքում: Արփիարեան գրելով իրական վէպեր Կ. Պոլսի հասարակական կեանքից, արտադրելով «Կարմիր ծամուց»-ը, ստեղծելով «Ոսկի Ապրիլ»-ը՝ ամեն կերպ աշխատում էր գրականութիւնը կապել ժողովրդական կեանքին եւ մեր ներկայ իրականութեան:



Այս կարեւոր աշխատանքը կատարելու համար նա անշուշտ շատ բան ստացաւ ժամանակի իրապաշտական գրականութիւնից, սոցիալական կեանքից եւ գաղափարաբանութիւնից, որոնք զարգացրին նրա մանկական տարիները լաւագոյն տարրերը եւ որոնց վրայ մենք կանգ կառնենք քիչ յետոյ:

Օրթագիւղի թարգմանչաց վարժարանը Արփիար Արփիարեանին շատ բան չտուեց: Ինչ որ Պետրոս Գուրեան ստացաւ Սկիւտարի ճեմարանում, մատաւորապէս նոյնը ստացաւ Արփիարեան իր թաղի դպրոցում: Սքոլաստիքական դաստիարակութիւնը կաշկանդել էր մտքերը եւ տաղանդաւոր պատանիները պէտք է յագուրդ տային իրենց հոգեկան պահանջին՝ արտագոյրցական ընթերցանութեամբ եւ դրսի կեանքի ամենօրեայ տպաւորութիւններով:

Գպրոցը նրանց տալիս էր միայն որոշ պաշար, սովորեցնում էր լեզուը եւ աղաւաղելու մեթոդով՝ որոշ լեզու, ինչ որ պատանիներին ծառայում էր իբրեւ միջոց եւ իբրեւ զէնք, սեփական նախաձեռնութեամբ կեանքի ծանր ճանապարհով առաջ ընթանալու:

Գպրոցական այս աղքատիկ պաշարի մէջ պէտք է գնել մասնաւորապէս այն ծանօթութիւնները, որ պատանիները ստանում են օտար գրականութիւնից, առաւելապէս ֆրանսիական գրականութիւնից: Սրապիտն թղթեան ծանօթութիւններ էր տալիս իր աշակերտներին — նրանց թուում եւ Պետրոս Գուրեանին — ֆրանսիական ուսմանտիք բանաստեղծների գործերից: Իսկ Գաբրիէլ Ներշապուհ ծանօթութիւններ էր տալիս ֆրանսիական ուսմանտիք վիպասանների գրութեանցից թարգմանչաց դպրոցի իր աշակերտներին, որոնց թուում եւ Արփիար Արփիարեանին:

Այսպէս, ծանր եւ դանդաղ քայլերով առաջ էին գնում մեր գրագէտի սկզբնական տարիները:

Վենետիկի Մուրատ-Ռաֆայէլեան դպրոցում — ինչպէս արդէն տեսանք — նա իրական եւ ժամանակակից գրականութեան տեսակէտից նոյնպէս շատ բան չէր կարող ձեռք բերել: Գպրոցական դաստիարակութիւնը այդպէս է ընդհանրապէս ոչ թէ միայն մեր, այլ եւ եւրոպական բազմաթիւ հաստատութիւնների մէջ: Նշանաւոր եւրոպացի գրագէտների կենսագրութիւնը ուսումնասիրելիս՝ մենք շատ յաճախ նոյն երեւոյթն ենք տեսնում: Եւ այդ մանաւանդ այնպիսի գրողների նկատմամբ, որոնք որոշ յեղաշրջում են առաջ բերում իրենց ժամանակի գրական նիւթի եւ ձեւի մէջ:

Արփիար Արփիարեան մեր գրականութեան այնպիսի առաջամարտիկ հեղինակներից է, որոնց չէր կարող անշուշտ շատ բան տալ դպրոցական սահմանաւորուած դաստիարակութիւնը, ինչ որ բնաւ զարմախալի չէ:

Վենետիկում էլ սակայն Արփիար Արփիարեան ստանում է որոշ զէնք, որով ինքը յետոյ առաջ է գնում, ինքնակրթութեամբ եւ սեփական աշխատանքով: Եւրոպական գրականութիւնը այստեղ աւելի եւս բացում է նրա առաջ: Վարդուի է ֆրանսերէն, կարգում է խալիբերէն, բայց թէ ինչ ուղղութեամբ է կարգում գլխաւորապէս — կենսագրական տուեալների մէջ

որոշակի յայտնի չէ: Մի քանի նիւթերից կարելի է եզրակացնել, թէ Արփիարեանի այդ շրջանի ընթերցանութեան գրքերը առաւելապէս լինում են իտալական եւ ֆրանսիական ուսմանտիքները:

Այդ գրականութեան ազդեցութիւնը նկատուում է Արփիարեանի մանաւանդ սկզբնական աշխատանքների մէջ, բայց այն ոչ թէ ընդհանուր առումով, այլ նրա զանազան էջերի վրայ, որոնք յամենայն դէպս չեն կարողանում աղարտել Արփիարեանի գրական դէմքը:

Եթէ դպրոցական ժամանակաշրջանը եւ ուսմանտիք գրականութեան ընթերցանութիւնը Արփիար Արփիարեանին շատ բան չեն տալիս նոր տեսակէտով — ապա Վ. Պոլսի կեանքը, ուր նա անցնում է դպրոցական տարիներից յետոյ, բաւական ուսանելի է լինում նրա համար: Գիտում է նա այդ կեանքը — եւ ամենօրեայ դիտողութիւնից անգնահատելի նիւթեր է ժողովում:

Այդ ժամանակաշրջանում, անցեալ դարի 80-ական թուականներին, մեր հասարակական կեանքը թէ՛ Վովկասում եւ թէ՛ Վ. Պոլսում բաւական իրար նման գծեր են յայտնաբերում: Դա այն շրջանն էր, երբ մեր գիւղը կորցնում է իր առաջնակարգ բացառիկ նշանակութիւնը եւ երբ զարգանում է քաղաքի կեանքը:

Գրամատիրական հասարակարգի ազդեցութեան ներքոյ գիւղի նահապետական դրոշմը ենթարկւում է մեծ փոփոխութեան: Գիւղը դուրս է գալիս իր մեկուսացած դրութիւնից եւ սկսում է աւելի յաճախակի շփուել քաղաքի հետ: Գիւղացին թէ՛ Վովկասում եւ թէ՛ Թիւրքիայում թողնում է իր ծննդավայրը եւ աւելի բարեկեցիկ կենցաղի ակնկալութեամբ տեղափոխւում է քաղաք:

Վառապարութեան քաղաքականութիւնը միւս կողմից թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Թիւրքիայում նպաստում են այդ տեղափոխութեան: Հողային խնդիրը առաջնակարգ սոցիալական նշանակութիւն է ստանում: Գիւղացին չի կարողանում ապրել սակաւահողութեան կամ անհողութեան դաժան պայմաններում, աւատական հողատերերի ստեղծած տնտեսական ճորտութեան մէջ — եւ անցնում է արդիւնաբերական կենդրոնները:

Տակաւին վաթսուհական թուականներին Միքայէլ Նալբանդեան նկատել էր այս երեւոյթը իր «Երկրագործութեան» մէջ եւ սրտառու էջերով նկարագրել էր այն հայաստանցիներին, որոնք թողնելով գաւառը կենդրոնանում են Պոլիս, Տրապիզոն, Իզմիր եւ այլուր:

Արփիար Արփիարեանի ժամանակ այս երեւոյթը արդէն շատ խոշոր չափերով գոյութիւն ունէր: Հետզհետէ ստեղծւում եւ զարգանում է մեր գրամատիրական դասակարգը: Արեւելահայ հասարակութեան համար դրամատերերի կենդրոն հանդիսանում է Բագու, իսկ արեւմտահայերի համար Վ. Պոլիսը: Եւ երկու կենդրոններում էլ — չնայելով քաղաքական եւ քա-



ղաքակրթական տարբերութիւններին — ստեղծուած է դրամատիրական նման հոգեբանութիւն, տնտեսական գործօնների ղօրաւոր ազդեցութեան ներքոյ: Այս հոգեբանութիւնը արտայայտուած է մէկ կողմից Շիրվանղազէի երկերի, միւս կողմից՝ Արփիար Արփիարեանի իրապաշտական գրականութեան մէջ: «Դատապարտեալ»ի Հայրապետ էֆէնտին, «Կատակ»ի Գրիգոր էֆէնտին նոյնպիսի անձնաւորութիւններ են, որոնց նմանը մենք այնքան յաճախ պատահում ենք Շիրվանղազէի վէպերում եւ դրամաներում:

Քաղաքների զարգանալով եւ կազմակերպուելով փոխուում է ազգաբնակչութեան նախկին կազմը: Թէ Կովկասում եւ թէ Կ. Պոլսում ծագման դասը կամաց-կամաց տեղի է տալիս եւ ղիջում է իր իրաւունքները առեւտրական, վաճառական դասին: Կ. Պոլսի ամիրանների սերունդը ութսունական թուականներին այլ եւս այն դերը չէր կատարում, ինչ որ կատարում էին նրա նախահայրերը:

Դրամատիրութիւնը դառնում է ոչ միայն տնտեսական ոյժ, այլ եւ հասարակական, ազգային իշխանութիւն:

Այս դասակարգի հետ միասին փոփոխութեան է ենթարկւում նաեւ մտաւորական խաւը: Ստեղծուում է մտաւորական-բուրժուազիա, որ ծառայում է դրամատէր-բուրժուազիային եւ դառնում է նրա սոցիալական իդէալների գաղափարախօսն ու պաշտպանը:

Ստեղծուում է մանաւանդ բուրժուա-մտաւորականի անհամակրելի տիպը, որ կարծում է թէ իր շահի համար եւ իր վայրենի կրքերին կարող է զոհաբերել ամեն ինչ:

Այս տեսակէտից էլ Կ. Պոլսի միջավայրը ութսունական թուականներին բաւական նմանութիւն ունէր Կովկասի միջավայրի հետ: Այս տեսակէտից էլ Շիրվանղազէի գրականութիւնը բաւական մերձեցման կէտեր ունի Արփիարեանի իրապաշտական գրականութեան հետ:

«Դատապարտեալ»ի Արամը, «Կատակ»ի Վահրամը իրենց նման օրինակները ունին Շիրվանղազէի վէպերի եւ դրամաների մէջ, ցրուած զանազան անունների տակ:

Դրամատիրական այս հասարակակարգը իր կնիքը դնում է կեանքի բաղմատեսակ արտայայտութիւնների վրայ:

Սէրը, ամուսնութիւնը, կնոջ վիճակը, ընտանիքը, դաստիարակութիւնը խորապէս ազդուում են տնտեսական եւ սոցիալական այդ կարգից: Ընտանիքը կազմուում է ոչ թէ փոխադարձ համակրութեան հիմքերով, այլ շահագիտական հողի վրայ:

Եթէ գիւղական կեանքում ամուսնութեան համար բաւական կարեւոր գործօն էր նկատուում աշխատանքը — թէ կնոջ եւ թէ տղամարդի կողմից — քաղաքների դրամատիրական հասարակութեան մէջ առաջին տեղը գրաւում է դրամը: Ոսկու ոյժով եւ շուկայի առաքինութիւններով չափուում են թէ կինը եւ թէ տղամարդը: Այս պատճառով ընտանիքի հիմքերը սկսում են տատա-

նուել: Հին բարոյականութիւնը այլ եւս անզօր է լինում պահպանել երկու էակների արհեստական կապը: Եկեղեցին կորցնում է իր անվիճելի հեղինակութիւնը ամուսնական խնդիրներում: Ծագում է կնոջ ազատագրութեան խնդիրը, ծագում է բաժանման հարց, պահանջ է դառնում այնքան աղմուկ հանած ապահարզանը:

Արփիար Արփիարեանի ութսունական թուականների իրապաշտական գրականութիւնը ծնւում է այս սոցիալական եւ տնտեսական միջավայրում: Սաթենիկը «Դատապարտեալ»ի մէջ, Մաքրուհին «Կատակ»ի մէջ այս իրականութեան տարբեր արտայայտութիւններն են, որոնք թէ կենդանի անձնաւորութիւններ են եւ թէ որոշ գաղափարի խորհրդանշաններ:

Նկատեցէք, որ այս կողմից եւս Կ. Պոլսի կեանքը ութսունական թուականներին բաւական յիշեցնում էր Կովկասեան իրականութիւնը: Եւ դրա հետեւանքով՝ Արփիարեանի իրապաշտական գրականութիւնը յիշեցնում է գրական այն գործը, որ սկսեց Շիրվանղազէն արեւելահայերի մէջ:

Այսպէս: Արփիար Արփիարեան կեանքի մէջ նկատեց հիմնական երեւոյթներ եւ ութսունական թուականներին իր գրականութեան մէջ արձագանգ տուեց ադ երեւոյթներին: Եւ ինչ որ չկարողացաւ տալ նրան դպրոցական սահմանափակ դաստիարակութիւնը, ինչ որ չկարողացաւ տալ ուսմանտեք գրականութիւնը — տուեց կենդանի իրականութիւնը:

Գրականութիւնը նրա համար եղաւ «կեանքի արտացոլումը» — ինչպէս ինքն էր անուանում — եւ ոչ կեանքից դուրս, վերացական ու «մխիթարիչ» մի իր, ինչպէս ուզում էր Գրիգոր Օտեսներ:

Եւ քանի որ կեանքն է գրականութեան առաջնակարգ ստեղծողը, ապա ուրեմն գրականութիւնը պիտի հետեւի կեանքի զարգացման, արտայայտի այդ զարգացումը իր բաղմատեսակ երեւոյթներով:

Ինսունական թուականներին մեր կեանքի մէջ քաղաքական խոշոր երեւոյթներ տեղի ունեցան: Համիդի կառավարութիւնը Տաճկաստանի զանազան մասերում հայկական կոտորածներ կազմակերպեց: Հայ ժողովուրդը բռնի գաղթականութեան դատապարտուեց: Կովկաս անցան մօտ 50 000 թիւրքահայ գաղթականներ: Երկրում մնացածները ապահով չէին աւատական սարսափելի ուժի մէջ: Բռնի իսլամացումներ տեղի ունեցան, բանտարկութիւններ, կախաղաններ, տաժանելի աքսորներ: Նրանք, որոնք կարողանում էին գլուխներն աղատել՝ փախչում էին դէպի Նգիպտոս, Բալկանները, Ամերիկա:

Այս ծայր աստիճան ողբերգական կացութիւնը, որ վիճակուեց մի փոքրիկ եւ աշխատասէր ժողովուրդի աշխարհիս «խաղաղ» կարգերի մէջ — յեղաշրջեց մեր իրականութիւնը: Հասարակական խաւերը, մտաւորականութիւնը, հրապարակագրութիւնը, գրականութիւնը արձագանգ եղան այս ծանր իրողութեան:

Արփիար Արփիարեան արտայայտեց այդ մռայլ եւ վիրաւոր ժամանակաշրջանը մի գեղարուեստական երկով — չենք խօսում նրա հրապարակա-



գրական բաղմամբիւ գրուածքների մասին — որ կարելի է գլուխ գործոց համարել այդ ժամանակուայ իրական գրականութեան:

Այստեղ էլ Արփիարեանի գեղարուեստական գործին ուղեցոյց եղաւ ինքը կեանքը եւ ոչ թէ նախնական տրամադրութիւնը, կանխակալ տեսողութիւնը կամ քաղաքական ծրագիրը:

Բայց կեանքը իննսունական թուականներից յետոյ չդադարեց իր շարժման մէջ: Գրամատիրական հասարակարգի հետ նոր դաս էր երեւացել մեր իրականութեան մէջ — քաղաքների գործաւոր դասակարգը, որ սկզբում վարանոտ էր, թոյլ, անգոյն եւ որ հետզհետէ ձեւ ստացաւ եւ հասարակական ոյժ հանդէս բերեց:

Արփիարեան այստեղ եւս կեանքի հաւատարիմ արտայայտիչը եղաւ, խորապէս ազդուեց մեր նոր իրականութեան փաստերից եւ այդ փաստերը գրականութեան մէջ ցոյցարեց:

Սոցիալական եւ անտեսական միջավայրից զատ Արփիար Արփիարեան որոշ ներշնչումներ ստացաւ նաեւ հայ եւ օտար հրապարակագրութիւնից ու գրականութիւնից: Իր գործունէութեան սկզբնական շրջանում որոշ չափով նկատելի է իր արեւմտահայ նախորդների ազդեցութիւնը: Երբ ութսունական թուականներին սկսեց նա հրապարակագրական յօդուածներ հրատարակել, իր առջեւ ունէր Նահապետ Ռուսինեանի, Ստեփան Ռսկանի, Գրիգոր Օտեանի օրինակները, որոնք ներշնչելով Փրանսիական կեանքից եւ գրականութիւնից, պայքար էին սկսել հին սկզբունքների դէմ: Արփիարեան իր առաջին շրջանի հրապարակագրութեան մէջ շարունակեց նրանց գործը եւ նշանակելի չափերով զարգացրեց այն:

Ժողովրդական գրականութիւն հիմնելու իր տեսութիւնները, որոնց մէջ բուն եռանդով պաշտպանում էր նա գաւառական կեանքի, այսինքն հայ ժողովրդի մեծ հատուածի անկապտելի իրաւունքները — ապահովաբար ազդուած էին Խրիմեանի գործունէութիւնից եւ հրապարակագրութիւնից:

Բացի արեւմտահայ հրապարակագիրներից Արփիարեան անշուշտ ներշնչուած է Գրիգոր Արծրունու հրապարակագրութիւնից, որ այդ ժամանակները սկսել էր տարածուել նաեւ արեւմտահայերի շրջանում: Իր իրապաշտական գրականութեան առաջին փորձերը — «Գատապարտեալը», «Երազի մը գինը», «Կատակ»-ը, որ նա հրատարակեց մի հատորի մէջ — նուիրուած են Գրիգոր Արծրունուն:

Այդ «Իրական պատկերների» մէջ արձարծուած գաղափարները շատ մերձ կապակցութիւն ունին Արծրունու հրապարակագրութեան հետ: Անոջ ազատագրութեան գաղափարը, ամուսնական օրէնքների փոփոխութեան խնդիրը, համբաւաւոր ապահարզանը Արծրունու այնքան սիրած եւ արծար-

ծած խնդիրներն են, որոնք կովկասեան գրականութեան մէջ ազդեցին Հիրավանդադէի վրայ, իսկ արեւմտահայ գրականութեան մէջ՝ Արփիարեանի վրայ:

Բացի հայ հրապարակագրութիւնից Արփիարեանի գրական գործունէութեան վրայ ազդեցութիւն ունեցել է անշուշտ մեր գեղարուեստական գրականութիւնը: Ռուսահայերի եւ արեւմտահայերի մէջ Արփիար Արփիարեանի գրական երկերից առաջ հրատարակուած են մի քանի աչքի ընկնող գործեր իրապաշտական ուղղութեամբ: Բաժնի «Փունջ»-ի երկրորդ հատորը — որի նիւթը առնուած է քաղաքի գրամատիրական շրջանից — հրատարակուած է 1874ին: Իսկ «Ռսկի աքաղաղը», որի մէջ Բաժնին հանդէս է բերում իրապաշտական գործեր տալու իր անվիճելի ընդունակութիւնը — հրատարակուած է 1879ին: Մասիսեանի տիպը իբրեւ կենդանի պատկեր եւ լաւ գծուած հոգեբանութիւն՝ մեր գրականութեան մէջ այնուհետեւ երեւցած գրամատէրների նախատիպը կարելի է համարել:

Դաւրիէլ Սունդուկեանի «Խաթաբալան» գրուած է 1866ին, «Էլի մէկ դոհ»-ը 1870ին, «Պէպո»-ն 1871ին, «Քանդած օջախը» 1873ին, որոնց մէջ կովկասահայ տաղանդաւոր թատերագիրը արդէն կենդանի օրինակներով արտայայտել էր մեր նոր իրականութիւնը:

Շիրվանզադէն 1883ին հրատարակել էր «Հրդհ հաւթագործարանում» իրական, հետաքրքրական պատմութեամբ, իսկ նոյն տարուայ վերջում հրատարակել էր «Գործակատարի Յիշատակարանիցը», որի մէջ արդէն երեւան է գալիս ութսունական թուականների կովկասահայ յայտնի իրապաշտը:

Արեւմտահայ գրականութեան մէջ եւս Արփիար Արփիարեանից առաջ կային իրական արուեստի արտայայտութիւններ:

Յակոբ Պարոնեան, մեր երգիծաբանութեան տաղանդաւոր ներկայացուցիչը, արդէն սկսած էր իր իրական, առողջ գրականութիւնը, որի մէջ այնքան պարզութեամբ ցոյանում էր ժամանակակից կեանքը:

Պետրոս Դուրեան 1871 թուին գրել էր «Թատրոն կամ թշուառներ» խորագրով իրական թատերախաղը, որ հրատարակուեց 1872 թուին եւ որի նիւթը առնուած էր իր ժամանակի սոցիալական կեանքից:

Արքուհի Տիւսաք 1883ին հրատարակել էր «Մայտա» անունով վէպը, որ ժամանակին այնքան հետաքրքրութիւն շարժեց եւ որի մէջ արծարծուած էր հասարակական-հոգեբանական խիստ կարեւոր պրօբլեմ — կնոջ ազատագրութեան խնդիրը:

Արփիար Արփիարեանի իրապաշտական գրականութիւնը այսպիսի միջավայրում առաջացաւ: Ակնյայտնի է, որ նա մեկուսացած կամ վաղաժամ երեւոյթ էր մեր արեւմտահայ գրականութեան մէջ եւ ունէր իր նախորդները թէ կովկաս եւ թէ Վ. Պոլիս:

Բայց չնայելով սրան՝ Արփիար Արփիարեան աւելի անմիջական եւ աւելի հետեւողական ներկայացուցիչն է արեւմտահայ իրապաշտական գրականու-





Թեան, այնպէս, ինչպէս Շիրվանդադէն է արեւելահայ գրականութեան մէջ: Թէ՛ Արփիարեանի եւ Թէ՛ Շիրվանդադէի առանձնայատուկութիւնն այնտեղ է, որ նրանք աւելի հասունացած սոցիալական ժամանակի արտայայտութիւն էին: Եւ ինչ որ միւսների մէջ երեւան է գալիս իբրեւ նախափորձ, իբրեւ տարր, խառնուած ուրիշ այլազան տարրերի հետ, մասամբ խառնափառում եւ մասամբ բնագոյով — Շիրվանդադէի եւ Արփիարեանի գրականութեան մէջ յայտնւում է իբրեւ ժամանակի գեղարուեստական պատկերացում իր ամբողջութեամբ եւ իր հիմնական տարրով:

Մանաւանդ որ, Արփիար Արփիարեանին նախորդող հեղինակները այնպէս էին արեւմտահայ գրականութեան մէջ, որ նրան աւելի եւս իրաւունքով կարելի է համարել արեւմտահայ իրապաշտական վէպի հիմնադիրը: Որովհետեւ Յակոբ Պարոնեան երգիծաբան էր, Պետրոս Գուրեան բանաստեղծ էր, եւ առ առաւելին թատերագիր, իսկ Սրբուհի Տիւսաբ՝ մէկ կողմից աւելի հրապարակագիր էր, քան վիպասան, միւս կողմից՝ ժամանակով այնքան մօտ էր Արփիարեանին, որ դժուար է առանց վերապահութեան վերջինի նախորդ համարել: Նրա «Մայտա»-ն հրատարակուած է 1883 թուին, մինչդեռ Արփիարեանի «Կեանքի Պատկերները»՝ 1885 ին:

Եւ այսչափ նախորդներ ամեն հիմնագիր ունի անշուշտ:

Բացի հայ գրականութիւնից՝ Արփիարեան ներշնչումներ ստացաւ նաեւ արտասահմանեան գրողներից: Գիտենք, որ նա պատանի հասակում շատ է կարդացել ֆրանսիական եւ իտալական ռոմանտիք հեղինակներին: Բայց այդ ընթերցումը նրա վրայ որոշիչ ազդեցութիւն չի ունեցել, որովհետեւ կեանքն արդէն փոխուած էր եւ այս փոփոխութեան հետ նոր գրողներ էին արդէն առաջացած:

Ֆրանսիական յեղափոխութեան հետեւանքով անհատը ձեռք էր բերել որոշ ազատութիւն: Ռոմանտիք գրականութիւնը ներբողում էր այս ազատութիւնը խելակորոյս եւ կատաղի: Բայց գրամատիրական կարգերը ստեղծել էին ուրիշ պայմաններ, այլ կերպ վատթար եւ դժոխային: Մարդկութեան թշուառութիւնը նորից երեւաց, քաղաքական ազատութիւնը իր հրապոյրը կորցրեց: Երեւակայականը, ռոմանտիքականը զարնուեց կեանքի, իրականութեան պարիսպներին: Եւ երազական, ամուլ ոգեւորութիւնները այլ եւս չէին համապատասխանում դարի բնոյթին, որ հետզհետէ իրական էր դառնում:

Մի ուժգին պահանջ առաջացաւ ճանաչելու մարդկանց բնաւորութիւններն ու բնագոյները, ինչպէս իսկութեան մէջ կային: Փոխանակ երազելու եւ երեւակայելու՝ մարդիկ պէտք զգացին դիտելու, խորհելու:

Փիլիսոփայութիւնը այդ ուղղութեամբ առաջ ընթացաւ ֆրանսիայում, Գերմանիայում եւ այլուր: Գիտութիւնը փաստերի, իրողութիւնների, դիտո-

ղութիւնների հասարակական արժէքը հաղորդեց եւ ամրացրեց: Գրականութիւնը իրական կեանքի, ապրող եւ տանջուող գոյութիւնների արձագանգը հանդիսացաւ: Մարդիկ եւ նրանց զբաղումներն ու գործերը, հասարակութիւնը եւ նրա հաստատութիւններն ու բարքերը, իրականն ու ճշմարիտը, դարձան գրականութեան նիւթն ու առարկան:

Ռեալիզմը ֆրանսիայից դուրս զարգացաւ նաեւ ամբողջ Եւրոպայում: Անգլիական, ամերիկեան, սկանդինաւեան, ռուսական մեծ գրողները բարձր ներշնչումներ հաղորդեցին նրան:

Արփիար Արփիարեանի — ինչպէս եւ արեւելահայոց մէջ Շիրվանդադէի — գրականութեան հիմքերը բաւական մօտ են այն սկզբունքներին, որ հռչակեց եւ իրագործեց ֆրանսիական իրապաշտական դպրոցը: Ռոմանտիք գրականութեան հակահարուածն էր այն մեր կեանքում: Ամենօրեայ փաստերի եւ իրողութիւնների առարկայական նկարագրութիւնն էր: Դա իրական վէպն էր, հիմնուած «հասարակական փորձերի», դիտողութիւնների վրայ:

Ահաւասիկ այսպիսի սոցիալական եւ գրական միջավայրում զարգացաւ Արփիար Արփիարեանի տաղանդը, իրական կեանքի եւ նրան հետեւող մեծ գրողների ազդեցութեան ներքոյ: Այսպիսով նա մերձենում է ոչ միայն կովկասահայ գրականութեան հիմնական խնդիրներին, այլ եւ Եւրոպական իրական գրականութեան:

Եւ այս գիծը հանդէս բերեց նա տակաւին իր գրական գործունէութեան սկզբին, ութսունական թուականներին, վանելով կեղծ դասական եւ ռոմանտիք գրական սկզբունքները եւ ներկայանալով իբր նոր արձակի, նոր վիպագրութեան ստեղծող արեւմտահայ գրականութեան մէջ:



## IV.

## ԻՐԱՊԵՆՏԱԿԱՆ ՎԷՊԸ

(«Կեանքի պատկերներ».)

Արիիար Արիիարեան 1885 թվին հրատարակեց մի հատոր, «Կեանքի Պատկերներ» ընդհանուր խորագրով: Այդ հատորով նա սկիզբ դրեց արեւմտահայ իրապայտական վիպագրութեան:

«Կեանքի Պատկերներ»-ի մէջ ամփոփուած էր երեք գործ — «Գատապարտեալը», «Երազի մը գինը», «Կատակ մը»: Արիիարեան այդ գրուածքների մէջ ներկայացրել է Կ. Պոլսի ընտանեկան կեանքը, ամուսնական հարցը, դրամատիրական դասակարգի հոգեբանութիւնը, բուրժուական հասարակարգի զոհերը — իրական պատկերներ եւ պօքլեմներ, որոնք այդ ժամանակ առաջնակարգ կարեւորութիւն ունէին մեր կեանքում:

Արիիար Արիիարեան այդ գրուածքների մէջ սկսնակ է, նոր դիտող եւ նոր արտայայտուող մի հեղինակ, որ սակայն կեանքի նոր էջ է բաց անում այնքան հետաքրքրական կերպով: Նա ուշադրութեամբ է այդ գործերի մէջ, բայց մի ուշադրութեամբ, որի շուրջը տիրապետող է ռոմանտիքական գրականութիւնը եւ որի վրայ երեւում է այդ գրականութեան այս կամ այն արտացոլումը:

«Կեանքի Պատկերներ» ժամանակին մեծ աղմուկ հանեցին Կ. Պոլսի միջավայրում: «Արեւելքը», որի տպագրութեամբ լոյս էին տեսել Արիիարեանի իրական գործերը, զանազան թշնամական գրութիւններ է ստանում ուղղուած հեղինակի դէմ<sup>1</sup>, որ աւանդական «բարոյականութեան» սահմաններից դուրս էր եկել եւ արտայայտել ակտաւոր, յոռի իրականութիւնը: Ճիշտ նոյնպիսի վերաբերմունքի արժանացաւ Շիրվանզադէի յայտնի «Նամուսը» տգէտների կողմից, որոնք այդ գեղեցիկ ստեղծագործութեան մէջ տեսնում էին հայրենի արատների անթոյլատրելի տարածայնումը:

Արիիար Արիիարեանին մեղադրում էին այն բանի համար, որ նա համարձակուել է մաքրակենցաղ ազգայինների ընտանեկան սրբութիւնը հրապարակի վրայ դնել եւ նուիրագործուած իշխանութեան դէմ ըմբոստութեան քայլեր անել:

«Գատապարտեալ»-ի կենդրոնական անձնաւորութիւնը մի երիտասարդ է, Նաթանիկ անունով, որին դատապարտում են միայնութեան եւ ողբերգական մահուան:

Սաթենիկի կեանքի պատմութիւնը մի շատ ծանր պատմութիւն է: Գաւառացի ծնողների զաւակ է նա: Հայրը, Հայրապետ Էֆէնդին, տարիներ առաջ դուրս է եկել գաւառից առանց որ եւ է նիւթական հարստութեան, գնացել է Կ. Պոլսի, սպասաւորութիւն է արել վաճառականների մօտ, չափազանց եռանդ է ցոյց տուել եւ վերջը մարդ է եղել:

<sup>1</sup> «Արեւելք», 1885 թ., Զուլիս 20: Յ. Հասնազար:

«Հայրապետ Էֆէնդին գաւառացի այն հայերէն էր, որ դեռ զրեթէ տղայ Պոլսի կու գան, առանց մէկ ստակի: Կը մտնեն իբր պալատաւոր վաճառականի մը մօտ, եւ օր մը կը տեսնեն, թէ մարդ եղած են...»

Հայրապետի ընտանիքը խիստ օրինապահ բուրժուայի տուն էր: Թէեւ երկար ժամանակ Կ. Պոլսի էին ապրում, բայց տակաւին պահպանում էին գաւառի սովորութիւնները եւ բարքերի ծանրութիւնը: Սաթենիկը Կ. Պոլսում դպրոց էր յաճախում, սիրում էր գրականութիւնը, սիրում էր գեղարուեստը, սիրում էր ընկերներին եւ ուսուցիչներին: Նրա հոգին դպրոցում բացւում էր, բայց տանը, Հայրապետի առեւտրական մնայլ ընտանիքում, փակւում էր եւ չէր կարողանում թռիչք տալ իր խոհերին եւ զգացումներին: Ընտանիքի մէջ դաստիարակութիւնը չափազանց տաղտկալի էր, քաղքենիական, անգոյն եւ տափալ: Հայրապետի վաճառական հոգին թագաւորում էր բոլորի վրայ եւ ամեն ինչ պահում էր իր չոր շունչի մէջ: Մէկ զաւակը բժշկութեան ուսանող էր Պարիզում, իսկ միւսը, Տրդատը, Պոլսի էր եւ օգնում էր հօրը առեւտրական գործերում: Արիիարեան նրա մասին քիչ բան է ասել, բայց ինչ որ ասել է, շատ բնորոշ է:

«Սաթենիկ մեծ եղբայր մը ունէր, Տրդատը, որ չափաւոր կը թուէր ինչ մը ստացած էր եւ բաւական ալ սրամիտ, բայց ջարջը կը բուրէր:»

Այս բարոյական միջավայրում Սաթենիկ ապրում էր իր ներքին կեանքով, իր իդէալներով եւ երազներով:

Սակայն դրամատիրական հասարակարգի մէջ եւ բուրժուական ընտանիքում անհատը իր հոգու տէրը չէ: Հայրապետ Էֆէնդին առեւտրական կեանքում հաշիւներ ունէր, ուղղում էր իր գիրքը ապահովել հաւանական անանկութեան դէմ եւ այդ նպատակով պէտք ունէր ֆերովքէ Էֆէնդիի աջակցութեան: Այս վերջինս ամուսնի է, մօտ 40 տարեկան, հարուստ, տգեղ, ռամիկ: Հայրապետ Էֆէնդին վճռում է, որ իր տասնվեց տարեկան գեղեցիկ եւ երազուն աղջիկը այս վաճառականին կնութեան տայ: Բայց Սաթենիկ չէ հասկանում իր հօր հաշիւները եւ մերժում է առաջարկութիւնը: Էֆէնդին զայրանում է, երբ մօրաքոյրը հաղորդում է նրան Սաթենիկի մերժումը:

«...Ի՞նչ, աստ հաւանքովն ալ խօսք կ'իյնայ եղեր...»

«...Կնիկ, ի՞նչ կըսես, աս աղջիկը խեղճ է ի՞նչ է, երկինքը փնտռած ատեննիս գետինը գտանք: Ասանկ մարդ հազարին մէջ մէկ հատ չկայ, մէկ հատ: Աղայ մարդ է, աղայ մարդ: Վարժապետի կնիկը ըլլալ կուզէ, ի՞նչ ըլլալ կուզէ: Չէ, Էֆէնդիմ, չէ. իրեն հարցնող չկայ թէ ո՞վ կ'ուզես, ո՞վ չես ուզեր. մենք իրեն չափ խելք ունինք. մենք գիտենք, թէ որո՞ւ պիտի տանք եւ որո՞ւ չպիտի տանք: Թող ետքը երթայ մեզի աղօթք ընէ...»

Սաթենիկի համար ստեղծւում է շատ ծանր կացութիւն: Նրան յայտնի է դառնում, որ իբր թէ հօր առեւտրական գործերը լաւ չեն ընթանում, որ կարող է անանկութիւն պատահել, որ կարող է սիրած եղբայրը ուսանողական



շրջանը կիսատ թողնել եւ Կ. Պոլիս վեռադառնալ: Ամենից շատ նրան դառնում է թիւն է պատճառում այս վերջին պարագան: Նրա պատանեկան գոյութիւնը դրամատիք վայրկեաններ է ունենում: Միայնանում է իր սենեակի մէջ եւ տանջւում է այս խնդիրների վրայ: Եւ վերջապէս իր մանուկ գիտակցութեամբ լուծում է խնդիրը ի նպաստ իր սիրելի եղբոր, մտածելով թէ ինքը պարտական է փականք դնել իր զգացումների վրայ, խեղդել իր ներքին աշխարհը:

Այսպէս, Սթենիկ ամուսնանում է քերովբէ Էֆէնդիի հետ: Բայց հասկանալի է ինքնին, որ այս ամուսնութիւնը չէր կարող երկար տեւել: Շուտով Սթենիկի համար քերովբէ Էֆէնդիի կենակցութիւնը դառնում է դժոխք — եւ երիտասարդ կինը փախչում է նրա մօտից, վերադառնում է հօր տուն, որովհետեւ «այլ եւս անհնարին էր կենակցել ամուսնու հետ»:

Այս շրջանում Սթենիկ պատահում է Արամ անունով մի երիտասարդի, որ 22 տարեկան էր, սովորում էր իրաւագիտութիւն եւ պատրաստւում էր մտնել դիւանագիտական ասպարէզ: Արամ սիրում է նրան բոլոր սիրով: Այս սէրին հակառակում են ծնողները երկու կողմից եւս: Սթենիկ ինքն էլ արդէն «խոհեմ կին էր», չէր ուզում կապուել Արամի հետ եւ պատրաստ էր կրելու իր ճակատագրի դառնութիւնը:

Բայց երիտասարդական կեանքը իր իրաւունքներն ունէր: Սթենիկ վերջին վերջոյ թուլանում է Արամի թախանձանքների առջեւ — եւ կապւում է նրա հետ: Այստեղ է սակայն, որ հին հասարակութիւնը, դաժան ու կեղծաւոր, կանգնում է նրանց սիրոյ հանդէպ եւ թոյլ չի տալիս, որ նրանք կապուեն «օրինական», կապով: Արամի համար այսպիսի կենակցութիւնը որոշ ժամանակ յետոյ դառնում է անկարելի: Նա հասարակութեան ու շրջանի մարդ էր: Դիրք էր ուղղում, բարձր պաշտօն էր հետամտում, փառք էր որդնում: Սթենիկի «ապօրինի», կապը նրան խանգարում էր — եւ նա ի վերջոյ կտրում է այդ կապը:

Սակայն սրա հետեւանքով՝ երիտասարդ կինը տիրող հասարակարգի մէջ անարգւում է ամենից, արտաքսւում է ընկերութիւնից եւ շրջաններից, մոռացւում է նոյն իսկ իր ծնողներից, ուրացւում է մինչեւ իսկ իր հարազատ եղբորից, որի համար նա զոհել էր ինքն իրեն եւ որ այդ զոհաբերութեան գնով՝ այժմ դիրքի տէր մարդ է:

Մի բառով՝ Սթենիկ դառնում է դատապարտեալ: Եւ իբրեւ դատապարտեալ՝ մեռնում է ողբերգական պարագաների մէջ:

Հեղինակը այս «իրական պատկերի» վերջում բացականչում է մեղաձեռնութեամբ.

«Խեղճ Սթենիկ, միթէ դիպուածի արդիւնք եղան քու վշտերդ: Ոչ, դու զոհ մը եղար մեր ընկերական կազմակերպութեան: Որքաններ քեզ պէս լացին ու կուլան...»

Այս ցուցադրութեան մէջ գործող անձերի բնաւորութիւնները գծուած են արդէն եւ հիմնական խնդիրները ներկայացուած են բաւականաչափ: Ուշա-

դիր ընթերցողը կը նկատէ անմիջապէս այն ներքին, հոգեբանական նմանութիւնը, որ այս վիպակն ունի կովկասահայ իրապաշտ գրականութեան, մասնաւորապէս Շիրվանզադէի նոյնանման վէպերի հետ: Այս նմանութիւնը անշուշտ արդիւնք չէ անհատական ազդեցութեան, քանի որ Շիրվանզադէի իրական վէպերը Արիիարեանի գրուածքին ժամանակակից են եւ նրանից յետնագոյն են: Նմանութիւնը բացատրւում է անշուշտ նրանով, որ երկուսն էլ արտայայտում են նման տնտեսական-սոցիալական միջավայր: Հոգեբանական երեւոյթները եւ գրական արտագրութիւնները հեղինակների մտացածին ստեղծագործութիւնը չեն, այլ իրականութեան վերարտադրութիւնն են: Իսկ այս իրականութիւնը ու թուականական թուականներին թէ Կովկաս եւ թէ Կ. Պոլիս տնտեսապէս իրար շատ նման էին — հակառակ քաղաքական տարբեր ուժեղիմներին — ինչ որ արդէն տեսանք մեր աշխատութեան նախորդ գլխի մէջ:

Արիիար Արիիարեան այս աշխատանքի մէջ ցոյց է տուել դիտելու կարողութիւն, եւ այն ոչ միայն իբրեւ ընկերաբան, այլ եւ իբրեւ հոգեբան:

Նա նկատել է սոցիալական կեանքի մէջ երեւոյթներ, որ նրա ժամանակ շատ քչերն էին կարողանում տեսնել: Ընտանիքի փոփոխութիւնը, հասարակութեան փոփոխութիւնը, դրամատիրական նոր կարգերը, այդ կարգերից առաջացած իրողութիւնները եւ նրանցից բղտող խնդիրները դուրս են ցուցել Արիիարեանի գրական գործի մէջ: Վիպասանի համար սրանք անշուշտ երկրորդական առաւելութիւններ չեն, իսկ իրապաշտ վիպասանի համար մասնաւորապէս սրանք հիմնական յատկութիւն են:

Բայց Արիիարեանի գիտողութեան կարողութիւնը չէ սահմանափակւում միայն կեանքի կարգերի եւ երեւոյթների նկատմամբ, այլ գործում է նաեւ այն ժամանակ, երբ հարկ է լինում անձեր ներկայացնել: Մեր իրականութեան մէջ գործող անհատները նա ճանաչում է ոչ միայն իրենց դասակարգային ընդհանրութեան մէջ, այլ եւ իրենց մարդկային-հոգեկան կողմերով: «Գատապարտեալ»-ի մէջ նա կարողացել է գծել Հայրապետ Էֆէնդիի դէմքը բաւական համոզիչ կերպով եւ բաւական ամփոփ: Սթենիկը, որ գրուածքի հերոսուհին է, լաւ է դուրս եկել իր պատանեկան շրջանում, բայց հետզհետէ, իբրեւ «ապօրինի» կին եւ մանաւանդ իբրեւ դատապարտեալ՝ նսեմացել է եւ անգոյն կերպարանք ստացել: Եւ այս այն պատճառով, որ ութսու նական թուականներին Սթենիկները տակաւին ընդհանրական տիպ չէին մեր կեանքում, եւ միայն սկզբնաւորութիւն էին:

Արիիար Արիիարեան կարողացել է դիտել երեւոյթը իր սկզբնական շրջանի մէջ, երբ տակաւին զտուած չէր եւ հոգեբանական ձեւակերպում չէր ստացած:

Իբրեւ արուեստագէտ Արիիար Արիիարեան «Գատապարտեալ»-ի մէջ տակաւին սկսնակ է, բայց ջնայելով դրան ցոյց է տուել ձեռքի վարժութիւն, նկարագրական խօսքի որոշ վստահութիւն, որ անշուշտ յատուկ է տաղանդաւոր գրագէտներին: Պատմելու տոնը բաւական հանդարտ է, առանց տատա-



նումներին, առանց նկատելի վարանման, յաճախ բարեխառնուած փիլիսոփայական խորհրդածութիւններով, որոնք այնքան բնական ձեւով են երեւան գալիս, եւ երգիծական սրամիտ էջերով, որոնք հաճելի գոյն են տալիս գրուածքին:

Արիւիարեան շատախօս չէ արեւելեան պատմիչների նման, բառերի մէջ չէ թաղում իսկական նիւթը, գործ է ածում ընդհանրապէս կարճ եւ ամփոփ արտայայտութիւններ եւ առարկան պատկերացնում է քիչ խօսքերով:

Այս յատկութիւնը աւելի կատարեալ կերպով երեւան է գալիս նրա յետագայ գրուածքների մէջ, որոնք սակաւաթիւ էջերի վրայ պարունակում են յաճախ ընդարձակածաւալ նիւթ: «Կարմիր ծամուցը» եւ «Ոսկի Ապրիլներ» պատմական որոշ շրջաններ են ընդգրկում, հիմնական պօքիւններ են արծարծում եւ խտացեալ անձեր են ներկայացնում — եւ չնայելով սրան բաւական սահմանափակ ծաւալ ունին: Արիւիարեանի գրութեան այս բնորոշ յատկութիւնը մի հաղուագէտ երեւոյթ է մեր գրականութեան մէջ, եւ այն ոչ միայն Կ. Պոլիս, այլ եւ կովկասեան միջավայրում: Այն ժամանակ, երբ մեր մինչեւ իսկ անուանի գրագէտները մի երկրորդական խնդիր արծարծելու համար յաճախ մանուածապատ պտոյտներ են գործում, Արիւիարեան զարկում է կարճ, խորանում է դէպի ներս, աշխատում է իջնել դէպի գեղարուեստական նիւթի կենդրոնը եւ ոչ տարածուել լայն ու հեռու՝ դէպի ծանծաղ օտերը:

«Կեանքի Պատկերները» իրենց բոլոր միւս թերութիւնների մէջ՝ գրագէտի այս առաջնակարգ յատկութիւնը երեւան են բերում: Իր առաջին գրուածքի — «Գատապարտեալ»-ի — մէջ այս յատկութիւնը տակաւին չէ զարգացած բաւարար չափով: Այնտեղ կան մի քանի հատուածներ, որոնք ոչ միայն միամիտ են գեղարուեստական տեսակէտով, այլ եւ անտեղի են ու աւելորդ: Հեղինակը պատմութեան առարկայական ընթացքի մէջ մտնում է ժամանակակից ծանօթ անձեր, ներս է բերում Զովհաննէս Շահնազարին, Մինաս Չերազին, դեր է տալիս իրեն, որոնք ոչ միայն գրական գործը չեն պարզաբանում, տիպերը չեն լրացնում, այլ եւ վէպը դարձնում են ինքնակենսագրութիւն, տեղ-տեղ մինչեւ իսկ ծամբորդական սոսկական նօթեր:

Այս յատկութիւնը սակայն այլ եւս չէ երեւում «Կեանքի Պատկերներ»-ի երրորդ գրուածքի մէջ, որ Արիւիարեան խորագրել «Կատակ մը» եւ որ այնքան լաւ տարել է սկզբից մինչեւ վերջ...

«Կատակ» մէջ Արիւիարեան ներկայացրել է երկու ընտանիք, որ պատկանում են երկու տարբեր դասակարգերի: Մէկը Նիկողոս Աղբարի ընտանիքն է, որ ապրում է Սամաթիայում, միւսը՝ Գրիգոր Էֆէնտիի ընտանիքը, որ ապրում է Գատը-Գիւղում:

Նիկողոս Աղբարը ձկնորս է, աշխատում է առաւօտից երեկոյ ամենածանր պայմանների մէջ, միշտ ենթակայ ծովի վտանգներին: Նրա ընտանիքը ապրում է հինգ օր քաղցած, մի օր կուշտ, նայելով թէ Լինչ կը բերի տուն յոգնած Նիկողոս Աղբարը:

Գրիգոր Էֆէնտիին վաճառական է, «աղգային երեւելի վաճառական» ինչպէս սովորաբար կոչում էին նրան: Այդ «երեւելի վաճառականը» տիրել էր Կ. Պոլսի «գրամական հրապարակին» եւ իր նմանների հետ յաջորդել էր «ամիրանների դասին»:

Նրա տունը լիքն է հարստութեամբ: Որդին, Վահրամ բէյը, ապրում է առատ, վայելում է կեանքի հաճոյքները: Աղջիկը, Գոհարիկը, ոչ մի գործ չէ կատարում եւ անցնում է իր ձանձրալի ժամերը դիւրին եւ տաք միջոցառում:

Եւ ահաւասիկ այս տունն է գալիս աշխատելու Սամաթիացի ձկնորսի աղջիկը, գեղեցիկ եւ համեստ Մաքրիկը: Գրիգոր Էֆէնտիի ընտանիքում նա ունի այն վերաւոր գիտակցութիւնը, որ ինքը աշխատաւոր եւ «ռամիկ» աղջիկ է եւ որ արժանի չէ այս փառայեղ, փարթամ տանը մինչեւ իսկ ծառայողի դերում լինելու:

Արիւիարեան Արիւիարեան ներքին յուզմունքով եւ գեղեցիկ արուեստով ներկայացրել է Մաքրիկի հոգեբանութիւնը, ցուցահանել է նրա ամբողջ կեանքը, որ այնքան ողբերգական կերպով իրական է: Սամաթիայում Մաքրիկը թողել է իր ծերունի հօրը եւ իր տարաբախտ եղբօր փոքրիկ որբին, եւ չարչարում է օրն ի բուն, որ մի կտոր չօր հաց հասցնի իր սիրելիներին:

Բայց այս չօր հացը մեր ախտաւոր հասարակարգի մէջ ձեռք է բերում զարհուրելի դառն գնով: Մաքրիկի անմեղ գլխի վերեւ կախուած է Վահրամ բէյի փորձութիւնը, անարգ գայթակղութիւնը մի մարդու, որ կարծում է թէ իր ոսկու ոյժով կարող է գնել գեղեցիկ աղջիկների կեանքը:

Արիւիարեան գեղարուեստական կենդանի ձեւով ներկայացրել է այս անհաւասար ընդհարումը: Մէկ կողմից Մաքրիկին, որ աշխատում է չսիրել, չխաբուել, չգրաւուել, չյանձնուել, որովհետեւ բնազդական ոյժով հասկանում է, որ Վահրամ բէյի սէրը վտանգաւոր պէտք է լինի: Միւս կողմից Վահրամ բէյին, որ այրում է հաճոյքի կարօտից, որ կըքոտում է, վրդովւում է, զայրանում է Մաքրիկի «անհասկանալի» ընդդիմադրութիւնից:

Այս ողբերգական ընդհարումը վերջանում է նրանով, որ ուժեղը յաղթում է եւ շուշանագեղ Մաքրիկը անբուժելի վէրքը սրտում, «բիծը» ճակատին, մի անձրեւային մուսլ օր թողնում է Գրիգոր Էֆէնտիի ոճրագործ ապարանքը:

Բայց ազնիւ աղջիկը այդ դէպքից յետոյ չի կարողանում եւ չի կամենում մի օր իսկ ապրել: Զարմանալի խանդաղատանքով մտնում է նա իր հօր աղքատիկ տունը, յանձնում է ձկնորսին իր ամբողջ խնայողութիւնը, սփոփանք եւ կեանք է տարածում այդ ցուրտ եւ անշուք խրճիթում, գրկում, ուրախացնում է եղբօր անմիտութար որբին — եւ ապա գնում է իր փութորկուած, բեկուած գոյութիւնը ծովի ալիքներին յանձնելու:

Ահաւասիկ Արիւիարեանի յուզիչ եւ իրական պատմութիւնը, որ նա անուանել է «Կատակ մը». կատակերգութիւն Վահրամ բէյի համար, բայց ամենագառն ողբերգութիւն բոլոր Նիկողոս Աղբարների եւ Մաքրիկների համար:



Արփիարեան այդ գրուածքի մէջ վիպագրողի ճշմարիտ յատկութիւններ է հանդէս բերել: Տիպերը որոշ են, ամփոփ, կենդանի: Զարմանալի լաւ է գծուած նախ եւ առաջ Նիկողոս Աղբարը: Միշտ քիչ բառերով, իմաստասիրական որոշ տրամադրութեամբ, երգիծական մի յայտնի տարրով, բայց մանաւանդ իրական ողբերգութեամբ Արփիարեանը պատկերացրել է սամաթիացի ձկնորսին՝ նրա կեանքի տարբեր շրջաններում: Ընթերցողը նրան տեսնում է աչքի առջեւ, եւ գրուածքը յաճախ իրականութեան պատրանքն է տալիս:

Անհամեմատ լաւ է ներկայացուած նաեւ Մաքրիկը, շատ աւելի լաւ, քան Սաթմեհիկը «Գատապարտեալ»-ի մէջ: Գուրբ ապրում է ք նրա կեանքով եւ այդ կեանքի ծանր դէպքերով, որպէս թէ այդ դէպքերը կատարուելիս լինէին ձեր ծանօթ իրականութեան մէջ:

Միւս կողմից՝ լաւ է ներկայացուած Գրիգոր Էֆէնտիի բուրժուական միջավայրը եւ այս միջավայրի մէջ ապրող «Երեւելի վաճառականը», որդին վահրամ բէյը, իր շուկայիկ հոգով, աղջիկը, իր ողորմելի բարոյականով, կինը՝ իր քաղքենի բոլոր տափակութեամբ:

Արփիար Արփիարեան այդ գրուածքի մէջ այնքան զաղրելի գործեր ներկայացնելիս՝ մնում է սակայն կատարեալ առարկայական վերլուծողի դերում: Ուռուցիկ եւ գերադրական խօսքեր չունի նա: Հանդարտաբարոյ տոնով պատմում է միայն: Բայց այս հանդարտաբարոյ պատմութեան տակ ամենամալլ ողբերգութիւնն է ներկայացնում, որ յուզում է այնքան խորունկ կերպով:

Այստեղ է ահա գրագէտի անկասկածելի արժանիքը:

Արուեստագէտ հոգեբանի կարողութիւնները, որ Արփիարեան յայտնաբերում է առաւելապէս իր գրական գործունէութեան երկրորդ եւ երրորդ շրջանում — երեւում են նաեւ այստեղ:

Արեւմտահայ վէպի մէջ նա մտցնում է հոգեբանական բաւական ուժեղ տարր՝ Մամուրեանի, Տեւկանցի, Միսաքեանի ուսմանտիք եւ ֆանտաստիքական վէպերից յետոյ, ուր բացակայում էր հոգեբանութիւնը, ինչպէս եւ Ծերենցի պատմական եւ Տիւրքալի հրապարակագրական վէպից յետոյ, ուր գարձեալ վրիպած էր հոգեբանական իրագործումը:

Արփիարեան ութսունական թուականներին գրեց նաեւ «Երազի մը գինը», որ ամփոփուած է նոյն հատորի մէջ, եւ «Ապուշը», որ հրատարակուած է առանձին:

Բայց նրա գեղարուեստական-գրական գործունէութիւնը այդ շրջանով չսահմանափակուեց: Նա աւելի կատարեալ ձեւով արտայայտուեց յետագայում մեր յեղափոխական շրջանի եւ մեր աշխատաւորական վիպագրութեան մէջ:

Այդպէս պիտի ամբողջանար նրա գրական գործը եւ նրա գեղարուեստական իդէալը...

## V.

## ՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՈՒՄ

(«Վարմիր ժամուց»)

Արփիար Արփիարեան 1902 թուին գրում է «Վարմիր ժամուց»-ը, որի նիւթն առնուած է մեր քաղաքական-յեղափոխական կեանքից:

Անմիջապէս ասենք, որ այդ վէպը գրուած է շատ անյաջող պայմանների մէջ, նրա կեանքի մի շատ դառն ժամանակաշրջանում:

Իր ընկերներից եւ բարեկամներից հեռացած ու լքուած՝ ապրում էր նա այդ ժամանակ Ղենիտիկ, ուր հրատարակում էր «Հայ հանդէս» անունով մի պարբերաթիւթ: Այդ թիւթի գրեթէ բոլոր յօդուածները նա էր հասցնում: Գրում էր խմբագրականներ, քաղաքական յօդուածներ, վարում էր զանազան բանավէճեր քաղաքական եւ յեղափոխական խնդիրների շուրջ: «Վարմիր ժամուց»-ը գրում է նա մաս-մաս, յաճախ շատ սահմանափակ էջերով՝ յարմարեցնելով նրա ստեղծագործութիւնը եւ հրատարակութիւնը պարբերաթիւթի նիւթական պայմաններին:

Ինքնին հասկանալի է, որ այսպիսի պայմաններում գրուած գեղարուեստական գործը անխուսափելի կերպով պիտի ունենայ շատ թերութիւններ: Եւ յիշել: «Վարմիր ժամուց»-ի վրայ երեւում են օրուան հրապարակագրութեան եւ տպագրական երբեմն պայմանների բացասական ազդեցութիւնները:

Գրուածքի մէջ կան էջեր, որոնք շոշափում են քաղաքական կուսակցութեան գործունէութիւնը շատ մասնակի ձեւով, դուրս են բերուած Հնչակեան կազմակերպութեան անձեր, իրենց յայտնի անուններով, որոնցից ապրողներ կան մինչեւ հիմա: Արփիար Արփիարեան այդ էջերի մէջ շփոթել է սոցիալական տիպը մասնաւոր անձի հետ եւ տիպիքական դէպքերը մասնաւոր իրողութիւնների հետ, ինչ որ անշուշտ գեղարուեստական մոլորութիւն է պարզապէս:

Բացի այդ՝ գրելով պարբերաթիւթի ամեն մէկ թուի համար հարկաւոր չափով, գրուածքը շատ տեղ ստացել է հատուածական բնոյթ, դէպքերի յաջորդականութիւնը վրիպել է յաճախ եւ հոգեբանական կապն ու ընթացքը շատ դէպքերում աղաւաղուել է:

Սակայն չնայելով այս բոլոր թերութիւններին, եւ անկախ այն խնդրից թէ այդ թերութիւնները արտաքին պայմանների արդեօք թէ ներքին անկարողութեան հետեւանք են — «Վարմիր ժամուց»-ը ընդհանրապէս շատ արժեքաւոր գործ է գրական-գեղարուեստական տեսակէտով:



Տասնիններորդ դարի վերջերում մեր կենանքի մեջ շատ կարեւոր դէպքեր տեղի ունեցան: Հայ ժողովրդի արեւմտեան խոշոր հատուածը, որ ապրում էր թիւրք սուլթանների բռնապետութեան լծի տակ, ծանր դէպքերի ենթարկուեց: Եւրոպական դիւանագիտութիւնը, որ թղթի վրայ լուծել էր «հայկական նահանգների», այսպէս կոչուած բարենորոգման խնդիրը, իրական կեանքում ոչինչ չէր արել, մղուելով իր շահերի տեսակէտից, որ անշուշտ ոչ մի դէպքում մարդասիրական կամ բարոյական չէր կարող լինել: Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը հայ ժողովրդին ազատութիւն տալու փոխարէն՝ ընդհակառակը աւելի ծանր պայմանների մէջ էր դրել:

Ստեղծուել էին քաղաքական կուսակցութիւններ, որոնք նպատակ էին դրել հայ ժողովրդի քաղաքական խնդիրը լուծել ապստամբութեան միջոցով, յոյս ունենալով, որ «Եւրոպան» կըմիջամտէ եւ կը կատարէ իր «յանձնառութիւնները»: Միւս կողմից՝ եւրոպական պետութիւնները չէին թողնում իրապէս, որ հայ ժողովուրդը որ եւ է կերպ իր գոյութեան ծանր խնդիրը լուծէ թուրք պետութեան սահմաններում՝ կամ թուրք ժողովրդի հարստահարուած տարրերի հետ միասին եւ կամ յետաձգելով իր քաղաքական ազատութիւնը մինչեւ աւելի բարեպատեհ ժամանակ: «Մեծ» պետութիւններին ընդհանրապէս եւ կայսերական Ռուսաստանին մասնաւորապէս հարկաւոր էր սակայն «հայկական խնդիր», որի համար նրանք ամեն կերպ աշխատում էին միջնորդը լարուած պահել: Եթէ մի կողմից այս լարուածութիւնը ոչ մի դրական բան չէր տալիս հայ ժողովրդին, միւս կողմից շատ նշանակելի ծառայութիւն էր անում պետութիւններին, որոնք յաջողեցնում էին հայկական խնդրի անուղղակի զանազան նուաճումներ անել «հիւանդ մարդու» պետութեան սահմաններում:

1895—1896 թուականներին Հայաստանի զանազան կողմերում կոտորածներ եղան, որոնք կազմակերպուած էին կենդանական կառավարութեան հրահանգի համաձայն եւ գործադրուած նահանգապետների միջոցով:

Եւրոպան սակայն ոչ մի գործնական ընդդիմութիւն ցոյց չտուեց այդ կոտորածների ընթացքում տաճիկ կառավարութեան քաղաքականութեան, որչափ այդ քաղաքականութիւնը ուղղուած չէր պետութիւնների կապիտալիստական շահերի դէմ: Հայ ժողովրդի տառապանքների նկատմամբ միմիայն կեղծաւոր ցաւակցութիւններ էին արտայայտուում, օրաթերթերը գրում էին «հայկական սարսափներ», մասին անտարբեր կամ շահախնդրական ոգով, իսկ անգիտակից քաղքենի հասարակութիւնը «ափսոսում էր», որ հեռու վայրերում կոտորում են «les pauvres arméniens», խեղճ հայերը...

Եւ մինչ շարունակում էր այս զարհուրելի ողբերգութիւնը, եւրոպական քաղաքական գործիչներն ու պատասխանատու դիւանագէտները վերը բռնեցին փոխարէն՝ աւելի եւս խորացնում էին այն: Նրանք ընդհանուր առմամբ արծարծում էին «Եւրոպական միջամտութեան» խնդիրը եւ յայտա-

րարում էին, թէ հայ ժողովուրդը դարձեալ կարող է փրկուել... արիւն թափելով:

Եւրոպական այս միջամտութիւնը ձեռք բերելու համար հարկաւոր էին գործողութիւններ, հարկաւոր էին մասնաւոր ցուցական դէպքեր թիւրքիայի այն մասերում, որ մօտ էին եւրոպական կենդրոններին եւ որտեղ պատահած «դէպքը» կարող էր միջամտութեան գործունէութիւնը արագացնել:

Խնդիրը այսպէս էր ձեւակերպուած իր հիմնական գծերի մէջ:

Եւ քանի որ այդպէս էր՝ պէտք էր գործել եւ ժողովուրդը շարժել այդ ուղղութեամբ:

Քաղաքական կուսակցութիւնները, որոնք այդ ժամանակ գործում էին թիւրքահայոց հարցի շուրջը — Հնչակեան եւ Գաշնակցական գլխաւորապէս — խնդրին մերձենում էին այդ տեսակէտից: Հայ ժողովրդի մէջ այն կենդանական միտքն էր արծարծուում, որ Եւրոպան իր պարտաւորութիւնները յանձն կառնի, եթէ մենք ստիպենք նրան մեր քաղաքական գործերով, մեր շարժումներով, մեր ցոյցերով:

Մեր մէջ այս կացութեան եւ այս լուծման վերաբերմամբ կային տարբեր հայեացքներ եւ տարբեր զգացումներ, արտայայտուած տարբեր դասակարգերի կողմից: Կեանքը, պատմութիւնը ստեղծել էին մի չափազանց բարդ հոգեբանութիւն: Այս հոգեբանութիւնը հետաքրքրական էր ոչ միայն սոցիալական եւ քաղաքական տեսակէտով, այլ եւ գեղարուեստական ուղղութեամբ:

Արփիար Արփիարեանի «Կարմիր ժամուց»ը ահաւասիկ այդ ժամանակաշրջանի ու այդ հոգեբանութեան գրական արտայայտութիւնն է:

Մեր վիպագրութիւնը տասնիններորդ դարի վերջում եւ քսաներորդի սկզբում այդպիսի գրուածքներ չունի ընդհանրապէս:

Բաֆֆի, որ տուել էր քաղաքական ծրագիրների վէպը եւ ներկայացրել էր թիւրքահայոց ազատագրութեան խնդիրը իր սկզբնական շրջանում, մեռած էր արդէն: Արթուր Գափազեանը այդ շրջանում այլ եւս թիւրքահայ կեանքից չէր գրում: Լէօն եւ Շիրվանզադէն այդ խնդիրը առհասարակ չէին արծարծել վիպագրութեան մէջ, ինչպէս եւ Նար-Դոսն ու Մուրացեանը: Հին վիպասաններից Պերճ Պռօշեանը, որ գրել էր «Սկիզբն Երկանց» խորագրով եւ Բաֆֆիի ազդեցութեամբ մի երեւակայական վէպ, քաղաքական դէպքերի հասունութեան շրջանում արդէն ծերացած էր եւ չանդրադարձաւ այդ դէպքերին:

Արեւելահայ վիպագիրների մէջ այդ շրջանում Աւետիս Ահարոնեանն էր միայն, որ պատմութեան իր խնդիրը էր դարձնում թիւրքահայերի կեանքը: Այդ պատմութեան մէջ ցոլանում էր գլխաւորապէս թիւրքահայ գաղթա-



կանների սարսափելի կացութիւնը երկրից դուրս, Կովկասում: Երկրի իրական կեանքը եւ նրա իրական հոգեբանութիւնը սակայն դուրս էր այդ պատմութեան վերլուծութեան շրջանակից:

Արեւմտահայ վիպագիրները չէին կարող այդ ուղղութեամբ որ եւ է բան գրել: Համիտեան ռէժիմը խեղդել էր ամեն ինչ, գրաքննութիւնը գործում էր այնպիսի կատաղի խստութեամբ, որ ամենամեղ գրութեան անգամ չէին կարող լոյս աշխարհ գալ օսմանեան պետութեան սահմաններում: Գրիգոր Զոհրապ, Թլխատինցի, Ռուբէն Զարդարեան բնականաբար չէին կարող որ եւ է կերպ շօշափել այդ խնդիրը: Այն վիպագիրները, որոնք հնարաւորութիւն էին գտել սահմանն անցնելու, ինչպէս օրինակ Տիգրան Կամսարական եւ Ղեւոն Բաշալեան, վիպական կարեւոր գործեր չարտագրեցին: Ռուբէն Զարդարեան անցնելով Բուլղարիա, ղեաղուեց հրապարակագրական գործունէութեամբ, վարելով «Ռազմիկ» թերթի խմբագրութիւնը եւ գրեթէ թողնելով վիպական աշխատանքները:

Այսպէս էր մեր վիպագրութիւնը այդ շրջանում:

Արփիար Արփիարեանի «Կարմիր ժամուց»ը մի բացառիկ երեւոյթ է այդ պայմանների մէջ եւ դրանով՝ աւելի եւս ուշադրութեան արժանի:

Այդ գրութեան մէջ դուրս է բերուած թիւրքահայ գիւղի կեանքը դէպքերից առաջ, քաղաքական կուսակցութիւնների սկզբնաւորութիւնը եւ գործունէութիւնը ժողովրդի մէջ, յեղափոխական ցոյցը, նրան հետեւող կոտորածներն ու արսորը:

Այս շրջանակում եւ այս դէպքերի ոլորտում Արփիար Արփիարեան ներկայացրել է մեր կեանքի մի շատ նշանակալից վայրկեանը, վերլուծել է նրա հոգեբանութիւնը եւ ստեղծել է տիպեր, որոնք այդ շրջանի գեղարուեստական մարմնացումն են:

Գրութեան կենդանական անձնաւորութիւններն են Տէր-Յուսիկ եւ Հայրապետ Էֆէնտին: Առաջինը ծնուել եւ մեծացել է Հայաստանի գիւղում, կապուած է գիւղացու հետ, եւ ինչպէս հեղինակն է ասում՝ արտայայտութիւնն է Հայ գիւղացիութեան: Թէ որքան ստոյգ է այս վերջին կէտը, թողնենք առ այժմ: Ճշմարիտ է այն, որ Տէր-Յուսիկը Հայրապետ Էֆէնտիի հետ ընդհարման մէջ է եւ չէ ուղղում Վ.Պոլսի Էֆէնտիական դասի քաղաքականութեան պարզ գործիք դառնալ:

Հայրապետ Էֆէնտին ծնուել է գաւառում, բայց վաղ հասակից գնացել է Վ.Պոլս, հարստացել է այնտեղ, դարձել է Հայ դրամատիքութեան ներկայացուցիչը:

Ահաւասիկ այս երկու անձերի, կամ նրանց ներկայացրած երկու խաւերի միջեւ անխուսափելի ընդհարում է սկսւում, որ լցնում է գրեթէ ամբողջ

բողջ երկը, բայց որ սակայն գրութեան վերջում մեղմանում է դէպքերի ազդեցութեան ներքոյ:

Ինչպէս է ներկայացրել Արփիարեանը Հայ գիւղի կեանքը եւ նրա մէջ մեծացող մարդը:

Հայաստանի խուլ գիւղերից մէկն է Տէր-Յուսիկի ծննդավայրը: Մեծ ճանապարհներից հեռու, ընկած աւատական կառավարիչների միահեծան տիրապետութեան տակ, ենթակայ նրանց կամքին կամ աւելի ճիշտ քմահաճոյքին, որ գիւղացի ժողովրդի միակ օրէնքն է: Այս ժողովուրդը չէ ապրում մարդկային ու մարդավայել կեանքով: Սարուկ է նա այդ միջնադարեան վարիչների ձեռքում, որոնց պատկանում է ոչ միայն իր ազատութիւնը, այլ եւ իր աշխատանքի արդիւնքը, հացը, ամբողջ կեանքը: Տէր-Յուսիկը ծնուել է ահա այսպիսի պայմանների մէջ:

Պատանի եւ երիտասարդ հասակում նա շատ է խորհում իրենց գիւղի ծանր վիճակի մասին: «Տէրտէրը մահմետականին ծնողէն ոսկրոտի դարձած հայ գիւղացին կը խորհրդանշէր...»

Այս գրութիւնից դուրս գալու համար հարկաւոր է ամենից առաջ ոյժ ունենալ: Պատմութեան մէջ, ոչ մի տեղ եւ ոչ մի ժամանակ պատահած չէ, որ տիրապետողները մարդասիրական զգացումներից մղուած ազատեն իրենց զոհերին: Եթէ մի ժողովուրդ կամ մի դասակարգ կամենում է ազատագրուել բռնապետի կամ հարստահարողի լուծից, անհրաժեշտ է, որ նա սոցիալական ոյժ ներկայացնի: Աւետարան կարդացող աշակերտը կամաց-կամաց համոզւում է, որ Աստուածաշունչը աւելի համապատասխան է իրականութեան: Այնտեղ քարոզւում է «ակն ընդ ական»ի սկզբունքը, որ ընդունում է երկու պայքարող կողմերի գոյութիւնը եւ իրական փաստը: Որքան էլ սա ընդգէմ լինէր աշակերտի ճանաչած եւ հասկացած Աւետարանին — այնուամենայնիւ նրա հայեացքով աւելի ճշմարիտ էր: Աստուածաշնչի Եհովան աւելի առողջ հասկացողութիւն էր նրա համար, քան քրիստոնէութեան Աստուածը, որ նրանից պահանջում էր չգիմարել չարին: Գառնուել նրա համար սիրելի կենդանի էր, բայց գործնական տեսակէտով, կեանքի ու գոյութեան համար նախընտրելի էր եղը:

«...Մեզի կեանք տուող ցորենին ան պտրտիկ հատիկները ունենալու համար խոշոր խոշոր, ոյժով եզներ պէտք են: Գառնուկով արտ կընանք հերկել...»

Այսպէս: Պատմութիւնը այնչափ, որչափ կարգացել է Տէր-Յուսիկ, եւ կեանքը, որ գիտում է նա ամեն օր — նրան սովորեցնում են, թէ Հայ գիւղացու կացութիւնը կարելի է փոխել միայն որ եւ է ոյժ ներկայացնելով: Այս ոյժի փիլիսոփայութիւնը «Կարմիր ժամուց»ի հիմնական գաղափարն է:

Բայց ոյժը պէտք է գործ դրուի գիտակցաբար, այսինքն այնչափով, որչափով ոյժը կարող է դեր կատարել: Ոյժի գերգնահատութիւնը եւ նրա համաձայն վարած գործունէութիւնը Տէր-Յուսիկի ըմբռնումով աղէտ կարող



է լինել գիւղացի ժողովրդի համար: Յետոյ, այս ոյժը կարող է իրական հետեւանքներ տալ միայն այն ժամանակ, երբ նա բղխում է ժողովրդի ներքին կեանքից եւ բնաւ այն ժամանակ, երբ յենում է արտաքին տարրերի վրայ:

Իր գիւղական բնական դաստիարակութեան մէջ եւ իրական կեանքից առած իր ամենօրեայ դիտողութիւններով Տէր-Յուսիկ եկել է այն եզրակացութեան, թէ ժողովրդի համար փրկարար դեր կարող է կատարել նախ եւ առաջ ինքնօգնութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը: Այս ըմբռնումը նրա մէջ ամրապնդւում է ընթերցանութեան միջոցով, որ որչափ էլ պատահական լինէր, այնուամենայնիւ միշտ հրահանգիչ էր նրա համար: Որովհետեւ ուրիշ բան է փորձուած եւ կեանքի իմաստութիւնն ունեցող մարդու ընթերցանութիւնը, եւ ուրիշ՝ կեանքի իրադարձութեան անտեղեակ դպրոցականի կամ գրականի ընթերցանութիւնը:

Արփիար Արփիարեան պատմում է Տէր-Յուսիկի մասին թէ նա մի տեղ կարդացել էր, որ անգլիացիները իրենց տղաներին ջուրն են նետում, որ լողալ սովորեն եւ սեփական ջանքերով ազատուեն:

“Սենք ալ, ուզենք չուզենք, սա տղոցը կը նմանինք: Ժովն ենք ընկեր, մեր գլխուն ճարը մենք պիտի տեսնենք: Եթէ սպասենք, որ մեր ծայնը պատրիարքարան լսուի ու մեզ ազատելու գան — եթէ երբէք գալու ալ ըլլան — կը խեղդուինք, կը լրմնանք:”

Ինքնապաշտպանութեան համար այն բարբարոսական միջավայրում հարկաւոր էր որոշ գէնք: Եւ Տէր-Յուսիկը միանգամայն գիտակից է այդ անհրաժեշտութեան: Ամեն կերպ աշխատում է գիւղի մէջ երկաթի քանակութիւնը շատացնել, որովհետեւ “ինչ որ չի կարելի բուժել դեղատոմսով կարելի է բուժել երկաթով”: Հայաստանի այդ չքաւոր գիւղը չի կարող ոսկի եւ արծաթ ունենալ, բայց կարող է երկաթ գնել — ահա թէ ինչ էր մտածում Տէր-Յուսիկ եւ ինչ էր սովորեցնում գիւղի երիտասարդներին:

Այստեղ էլ ընթերցանութիւնը նրան օգնութեան է հասնում եւ նրա ըմբռնումին տալիս է որոշ չափով թէօրիական հիմնաւորում: Որքանիչնի նշանաւոր գիրքը կարդացել էր եւ նրանից օգտւում էր այնպէս, որպէս իրենց գիւղի առարկայական վիճակն էր թելադրում:

“Տեսէք, Ռոբինզոն իր կղզիին մէջ քսան փարանոց երկաթի մը կտոր ոսկիէ մեծ կտորէ աւելի օգտակար կը սեպէր... Սենք ալ Ռոբինզոնին պէս մեր գիւղը կղզիացած ենք... Մեր ժամն ալ ոսկին ի՞նչ ընէ: Երկաթի կտոր մը մեր գործը աւելի լաւ կը տեսնէ:”

Ոյժի եւ երկաթի անհրաժեշտութեան մասին այս հիմնական գաղափարը ունենալով հանդերձ, ինքնօգնութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը գոյութեան առաջին ազդակն ընդունելով միաժամանակ՝ գիւղացի տէրտէրը թիւք պաշտօնեաների եւ վարիչների հետ “կը հետեւէր վեր վար յարմարելու քաղաքականութեանը”: Գանգատի եւ բողոքի աւելորդ ու յաճախ գրգռիչ միջոցները չէր կիրառում նա իր գիւղական դժուարին գործու-

նէութեան մէջ, այլ աշխատում էր շատ խնդիրներ լուծել անմիջական ճանապարհով:

“...Տէրտէրը առաջնորդին կաղերսէ, առաջնորդը պատրիարքին, պատրիարքը սաղարագամին: Մի մեռնիր, գարուն պիտի գայ, առույտ պիտի ուտես...”

Այս քաղաքական ըմբռնումներից անկախ՝ Տէր-Յուսիկը մտածում էր, որ ներքին կուլտուրական միջոցներն էլ կարող են շատ չարիք բուժել:

“...Տգիտութիւնը, անհոգութիւնը ժողովրդին շատ աւելի աղէտաբեր են, քան թէ կառավարական հարստահարութիւնները...”

Եւ Տէր-Յուսիկը ամեն կերպ աշխատում է գիւղի մէջ կրթութիւն տարածել, առողջապահական անհրաժեշտ գիտելիքներ մոցնել, մեծերին առանձին սովորեցնել, փոքրիկների համար դպրոց բանալ — մի խօսքով խուլ եւ յետամնաց գիւղը նորոպականացնել:

Գիւղական այս միջավայրի մէջ Արփիար Արփիարեան դնում է նաեւ մի պրոպագանդիստ ուսուցիչ, Արշամ անունով, որ Պոլսեցի է եւ որ գնացել է գիւղ քաղաքական եւ կուլտուրական նպատակներով: Արշամը Կ. Պոլսից մեկնել է — ինչպէս Արփիարեանն է պատմում — Ներսէս Վարժապետեանի պատրիարքութեան օրերում “երբ հայ ժողովուրդը ամեն զիշեր կը պառկէր անուշ երազով թէ առտուն ինքնավար հայաստանի մը մէջ պիտի արթննար...”

Գիւղացուն եւ մասնաւորապէս Տէր-Յուսիկին շատ բան է սովորեցրել Արշամը, կապել է նրան արտաքին աշխարհի հետ, ներկայացրել է հայկական խնդրի պատմութիւնը, տարածել է Բաֆֆիի՝ յեղափոխական գրականութիւնը — “Խենթը”, պատմել է Բերլինի ժողովի եւ 61-րդ յօդուածի մասին: Նրա միջոցով Տէր-Յուսիկը ծանօթանում է քաղաքական կուսակցութեան ծրագրի եւ նպատակների հետ, կարդում է յեղափոխական թերթեր, մի խօսքով իրազեկ է դառնում այն խնդիրներին, որ զրուած են հայ յեղափոխութեան առջեւ: Եւ ոչ միայն իրազեկ ու տեղեակ՝ այլ եւ բարեկամ ու համակիր:

Բայց չնայելով բոլոր այս համակրութեան, Տէր-Յուսիկ եւ Արշամ մնում են տարբեր ըմբռնումներ եւ մանաւանդ տարբեր նկարագիրներ:

Մինչ Տէր-Յուսիկ իր կենդանի գաղափարով, ինքնօգնութեան եւ ինքնապաշտպանութեան ճանապարհով է սպասում որ եւ է բարեփոխութիւն, Արշամ ոգեւորւում է պետութիւնների խոստումներով եւ յանձնառութիւններով:

“...Վեց պետութիւնները ինչքն պիտի ընեն, սպասէ, սպասէ...” շարունակ արտասանում էր նա բորբոքուած, լի խորին վստահութեամբ:

“...Թէ որ ընելու չըլլան նէ...” առարկում էր գիւղացի տէրտէրը, դժուարահաւան, կասկածոտ եւ ընդդիմադիր տրամադրութեամբ:



Եւ այս երկու համառօտ արտայայտութիւնները բնորոշում էին ոչ միայն երկու տարբեր հոգեբանութիւն, այլ եւ երկու տարբեր քաղաքականութիւն:

Տէր-Յուսիկի մէջ անձնաւորուած է ժողովրդական առողջամտութիւնը, որ ուզում էր ինքնապաշտպանութեամբ եւ սեփական ոյժով բան տեսնել: Արշամի մէջ անձնաւորուած է ազգային-քաղաքական ումանտիզմը, որ անգիտանում էր իրականութիւնը եւ յաւակնում էր ժողովրդին փրկել դրամատիրական պետութիւնների խարդախ խոստումներով:

Տէր-Յուսիկ չէր կարողանում հաւատալ, թէ օտար պետութիւնները կը կամենան կամ կը յաջողեն հայ ժողովրդի համար որ եւ է դրական բան անել: Արշամի քաղաքական ճառերը նրան չէին համոզում այդ ուղղութեամբ: Եւ պրոպագանդիստ ուսուցիչը Տէր-Յուսիկի առողջ կասկածներին ու քննադատութեան մի վերջին զէնքով էր պատասխանում.

«Հէչ անանկ բան կ'ըլլայ...»

Այսինքն կարելի՞ բան է, որ վեց պետութիւնները բանակներ չխաղացնեն տաճիկ կառավարութեան դէմ հայ ժողովուրդը ազատագրելու համար: Արեւի՞ բան է, որ Բերլինի որոշումներն ստորագրող պետութիւնները վերջ չդնեն հայ ժողովրդի տառապանքներին եւ չստեղծեն ինքնավար, ազատ Հայաստան:

Գիւղացի տէրտէրը մի անգամ մի թերթի մէջ կարդում է, որ մեծ պետութիւնները ուզում են ոչ միայն Թիւրքիան, այլ եւ ուրիշ պետութիւններ կործանել հայերի ձեռքով: Այս ընթերցումը նրան շատ ծանր մտահոգութիւն է պատճառում: Գաւառի պարզ մարդը չի կարողանում հասկանալ այս բարդ մեքենայութիւնը, այդ ընթերցումից ոչ մի լաւ բան չի գուշակում հայ ժողովրդի համար եւ ընդհակառակը խորհում է, որ ամեն չար անակընկալ կարող է թագնուած լինել այդ քաղաքական խաղի մէջ: Արկածախնդրութիւնը եւ Եւրոպային գործիք լինելու պարագան շատ է վախեցնում նրան.

«Պարոն Արշամ, շատ կը վախնամ, որ գուցէ այս ամենուն վրան կայ տակը չկայ: Խե՛նդ են, ի՛նչ են ասոնք: Մեծ քարը վերցնողը չի կրնար նետել: Աս մեր աղքատանքը շատ շատ կը պոռան եւ ուժով: Վախնամ թէ «դատարկ կարասը զօրաւոր ծայն կը հանէ» ըսուածը ըլլայ...»

Եւ իրականութիւնը արդարացնում է գիւղացի տէրտէրի ըմբռնումը: Տաճիկ կառավարութիւնը ձերբակալել է ոճրագործ մի բէկ, որ Հայաստանի գիւղերում գիւղացի չարքաշ ժողովրդին անասելի չարիք է պատճառել: Բոլորն էլ սպասում են, որ ոճրագործը պիտի պատժուի: Առանձնապէս ոգեւորուած է «պարոն» Արշամը, որ կարծում է թէ թիւրք կառավարութիւնը եւրոպական պետութիւններից պիտի վախենայ եւ ոճրագործ բէկին արժանի հատուցում պիտի անի:

Բայց տաճիկ կառավարութեան Ֆէօդալական քաղաքականութիւնը պաշտպանում է ոճրագործ բէկին, արհամարհելով գիւղացի ժողովրդի տառապանքները եւ բնաւ ուշադրութիւն չդարձնելով թէ կարող է վեց պետութիւնների կողմից որ եւ է դժգոհութիւն լինել այդ առիթով: Եւ անշուշտ մեծ պետութիւններն էլ իրենց կողմից բնաւ չեն մտահոգում, որ Հայաստանի հեռաւոր գիւղերում գիւղացի ժողովուրդը արիւն է քամում եւ նրա ոճրագործ բէկը փոխանակ պատժուելու՝ պաշտպանութիւն է դառնում կառավարութեան մօտ:

Տէր-Յուսիկը տեսնում է այս փաստը եւ չի զարմանում, բայց վրդովւում է խորապէս.

«Նը տեսնես, պարոն Արշամ, ո՛ր մնաց ան քու Բերլինիդ դաշնագիրը. ո՛ր է 61<sup>րդ</sup> յօդուածդ, ո՛ր է պետութիւններու միջամտութիւնը: Ո՛ր է, ո՛ր...»

Այս իրադարձութեան մէջ Տէր-Յուսիկը մտածում է «պարոն» Արշամին Վ. Պոլիս ուղարկել, որ ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդի կենդրոնից եւ իմանայ թէ «կարասի» մէջ ի՛նչ կայ վերջապէս.

«Պարոն Արշամ, դուն մէյ մը Պոլիս երթալու ես: Գնա՛ նայէ կարասին մէջ բան մը կայ...»

Գիւղացի տէրտէրի խօսակցական ձեւի այս հեգնութիւնը նրա երկմիտ հոգեբանութիւնն է մասնում: Շատ բան չի սպասում նա քաղաքական ումանտիզմի ներկայացուցիչներից, բայց վերջապէս տեսնում է, որ «քաղաքականութիւնը» նրանցից է բղխում եւ ուզում է, որ պարզուի կացութիւնը: Արշամը գնում է Վ. Պոլիս եւ անմիջապէս կացութեան մասին «ճշգրիտ» տեղեկութիւններ է հաղորդում Տէր-Յուսիկին:

«... Պոլիս հասած չհասած հոնկէ կրակոտ նամակ մը հասցուց Տոմուզ գեղ: Ընկերութիւններ կազմուած էին, Կովկասէն կտրի՛մ երիտասարդներ եկած, Ռուսիոյ հայերը ոտքի վրայ, Եւրոպայի հայերը կը գործէին...»

Եւ վերջը՝

«Բաներ պիտի ըլլային, բաներ...»

Այսպէս: Արփիար Արփիարեան երկրի ժողովրդի մտածկոտ, իրական ու զգաստ տրամադրութեան դէմ գնում է դրսի ումանտիքական ոգեւորութիւնը, որ չի ներշնչում իրական պարագաներով եւ որ իր սնունդը ստանում է արտաքին ազդեցութիւններից:

Տէր-Յուսիկը իբրեւ հոգեւորական՝ կրօնասէր մարդ է: Իր պաշտօնը նա ստանձնել է որոշ հաւատքով եւ հետզհետէ այդ հաւատքի մէջ զարգացել է: Արօնը նրա աչքում հայ ժողովրդի անկապտելի իրաւունքներից մէկն է, որին չպէտք է դիպել եւ որի համար պէտք է գնալ մինչեւ անձնազօհութիւն:



Բայց կրօնը սիրելով հանդերձ՝ նա սիրում է նաև հայ ազգը իր ամբողջութեան մէջ, իբրեւ մի անբացատրելի նուիրական բան: Տէր-Յուսիկը ծագում է գաւառի միջին դասից, իր կենցաղով շատ չէ տարբերում ժողովրդի չունեւոր խաւերից մանաւանդ վերջին շրջանում — բայց այս դասակարգի գիտակցութիւնը չունի նա եւ ազգութեան մէջ չէ հասկանում դասակարգային տարբերութիւններ:

Քրիստոնէութիւնը նա միշտ հակադրել է մահմետականութեան եւ հայութեան տաճկութեան: Հայաստանի եւ Թիւրքիայի մէջ կատարուող բոլոր քաղաքական եւ սոցիալական երեւոյթները նա համարել է քրիստոնէութեան ու մահմետականութեան կամ հայութեան ու տաճկութեան հակամարտութիւն: Մանկութիւնից սկսած այս տպաւորութիւններն է ստացել նա իր շրջապատից եւ երկար տարիների դաստիարակութիւնն էլ այդ գաղափարն է նրա մէջ զարգացրել: Այսպէս, մի անգիտակցական ատելութիւն է մտել նրա մէջ դէպի մահմետականը եւ դէպի տաճիկը կամ քիւրդը:

Արփիար Արփիարեան այս գծերը ներկայացնում է Տէր-Յուսիկի մէջ ոչ որպէս իդէալ, այլ որպէս սոսկ իրականութիւն, պատկերացնելով նրան այնպէս, ինչպէս նա գոյութիւն ունէր կեանքում: Նրա սիրտը անկեղծօրէն ցաւում էր հայ ժողովրդի տառապանքների համար, ազգային նախանձի զգացում ունէր, երբ տեսնում էր տաճիկ փառաւոր ապարանքները եւ տրամադրութիւնը մուսլուկում էր, երբ տեսնում էր հայ ժողովրդի թշուառական խրճիթները:

Այս բարոյական եւ հոգեբանական պատկերն ունէր Տէր-Յուսիկ, երբ մտաւ Կ.Պոլիս՝ քաղաքական կացութիւնը եւ գալիք հնարաւորութիւնը հասկանալու համար:

Արփիար Արփիարեան Պոլիս է տանում նրան ճիշտ նոյն օրը, երբ տեղի պիտի ունենար 1889ի Գում-Գաբուի ցոյցը: Տէր-Յուսիկը ոչինչ չգիտէ պատրաստուող ցոյցի մասին: Նալից իջնելով՝ պանդուխտ հայաստանցիների հետ միասին նա դիմում է դէպի պատրիարքարան: Օսմանեան փառաւոր մայրաքաղաքը նրա սիրտը տխրեցնում է, բայց հասնելով պատրիարքարան եւ տեսնելով այնտեղ զգացուող շարժումը, կեանքը, երթեւեկը՝ տիրութեան զգացումը փարատում է: Մտնում է եկեղեցի, ուր բեմի վրայ տեսնում է աշխարհականներ, սրանց մէջ «պարոն» Արշամին, որ Ֆէսը նետում է մի կողմ եւ կրակոտ ճառ է արտասանում:

«Այսօր Էրզրում, վաղը Մուշ, յաջորդ օրը Վան ու ամբողջ Հայաստան: Պիտի ջարդեն, եղբարք, պիտի ջարդեն: Հիմի էլ լռենք...»

Բազմութիւնը մոգական խօսքերի ազդեցութեան տակ մեքենայաբար ժայթքում է նոյն խօսքը. — Հիմի էլ լռենք:

Տէր-Յուսիկի միամիտ ու պարզ հոգին ծանր չարճարանքներ է ունենում, երբ տեսնում է եկեղեցու մէջ սուլթանի թուրանը:

«Հայաստանցի տառապեալին արինը կը բորբոքէր ի տես — հայութեան տանը մէջ — նշանի մը, որ դարերէ ի վեր հայ ցեղին մարտիրոսութեան արիննուշտ վկան եղած է...»

Միթէ չկայ մէկը, որ արգելի այդ սրբապղծումը: Գիւղական քահայի միտքը սահում, անցնում է դէպի հին Հայաստանի պատմութիւնը, յիշում է այն օրը, երբ Յուսիկ կաթողիկոսը հռոմէական բռնակալ կայսեր պատկերը պատռում է ժողովրդի աչքի առջեւ: Ինքը սնուել, դաստիարակուել է այդ գաղափարներով: Յուսիկ կաթողիկոսը նրա համար եղել է պատմական մեծ դէմք, որին նմանելու փափագով՝ իր քահանայութեան ժամանակ ընտրել է Յուսիկ անունը: Եւ այժմ ահա վայրկեանը հասել է հերոսութեան, քահանայութեան, մեծութեան: ԳԺբախտ քահանայի միտքը պղտորում է, զգացումները մոլորում են եւ ամբողջ հոգին ծանր ողբերգութիւն է ապրում:

Այս տագնապալի ժամին յանկարծ լսում է, որ թուրանը պատռուեցին:

«Հայ ժողովրդին ոտքերուն տակ ճղակոտոր կը տապալկէր մահմետականութեան խորհրդանշանը...»

«Ա՛խ, Յուսիկ հայրապետս, հոգուդ մատաղ, աղաղակեց Տէր-Յուսիկ ինքնիրմէն ելած:»

«Ալ կրնար մեռնիլ: Փրկութեան օրը իր աչքերը տեսած էին...»

Բազմութիւնը աղաղակում է՝ «դէպի Երզն»։ Ապստամբութիւնը սկսում է:

Բայց այլ եւս ոչինչ չի յիշում Տէր-Յուսիկ: Երկու ժամ յետոյ աչքերը բաց է անում եւ ինքն իրեն փողոցումն է գտնում: Պատրիարքը, Արշամը, ցուցարարները չկան: Թուրք զօրքերն են վազելով յարձակում գործում, իր աչքի առջեւ ընկնում են երկու հայի գլուխներ, իր շուրջը կոտորում են հայերին, ձերբակալում, բանտարկում: Ինքը եւս բանտարկում է, սակայն Արշամը եւ միւս կաղմակերպողները կարողանում են ճողոպրել...

Արփիար Արփիարեան այս ամբողջ մռայլ նկարագրութեան մէջ երեւան է գալիս ոչ թէ համակիր հոգով, այլ դառն հեգնութեամբ: Այդ նկարագրութեան մէջ շատ նուրբ կերպով քննադատուած է ազգային ուսմանտիք գործունէութիւնը եւ ցոյցի միամիտ քաղաքականութիւնը: Անշուշտ, այս նուրբ քննադատութիւնը եւ հոգեբանական այս ցաւագին վերլուծումը չէ վերաբերում այս կամ այն մասնաւոր ցոյցին միայն, այլ ընդհանրապէս այդ տեսակ ցոյցերին, որոնք տեղի ունեցան օսմանեան մայրաքաղաքում կամ ուրիշ վայրերում՝ «մեծ» պետութիւնների ուշադրութիւնը գրաւելու համար: Տէր-Յուսիկի տիպը լրացնելու համար այս քաղաքական դէպքի նկարագրութիւնը կարեւոր նշանակութիւն ունի: Արփիարեան ներկայացրել է իրականութիւնը ոչ այնքան քաղաքական մտահոգութիւններով, որքան հոգեբանական ուղղութեամբ: Տէր-Յուսիկը իր գաւառական առողջամտութեան մէջ միամիտ է, պարզ է, անկեղծ է իր մոլորուած զգացումների մէջ, բայց զո՛հ է վերջապէս



աղգային եւ հասարակական նախապաշարունակների, դաստիարակութեան ու քաղաքականութեան:

Ահա թէ ինչ է ցոյանում Արփիարեանի վէպի մէջ:

Գիւղական տէրտէրի դէմ Արփիար Արփիարեան զրել է Կ. Պոլսի մեծահարուստ կապալառու վաճառականին:

Քիւրքճեան Հայրապետ էֆէնտին թաղի մէջ յայտնի է պարզապէս էֆէնտի տիտղոսով: Ամէնքն էլ գիտեն, որ «նորին վսեմութեան» կոչումն է այդ:

Հայրապետ էֆէնտին իր առեւտրական գործերից զատ՝ զբաղւում էր նաեւ աղգային եկեղեցական խնդիրներով: Օրթագիւղի եկեղեցու հոգաբարձուն էր նա, ժողովրդի «տէրը», թաղի «պահապանը»: Եկեղեցու քահանան, վարդապետը, մինչեւ իսկ առաջնորդ եպիսկոպոսը նրա հրամաններով պիտի շարժուէին: Եւ այս ոչ միայն տնտեսական խնդիրների նկատմամբ, այլ եւ ներքին կանոնի վերաբերմամբ:

Գրամատիրական ուժովի ամենացայտուն արտայայտութիւնն էր այս: Հարուստը, գրամատէրը վարում էր ոչ միայն նիւթական աշխարհը, այլ եւ բարոյական կեանքը: Եկեղեցին Հայրապետ էֆէնտի ըմբռնումով ոչ թէ ժողովրդինն էր, հաւատացեալ ժողովրդինը, այլ գրամատէր դասի սեփականութիւնն էր, որ կարող էր նոյն իսկ անհաւատ լինել: Խղճի եւ կրօնի տեսակէտները ոչ մի դեր չէին կատարում այնտեղ, ուր իշխում էր գրամատէրութիւնը:

Բայց Հայրապետ էֆէնտին ժամատէր մարդ էր: Ամեն կիրակի եկեղեցի էր գնում, համբուրում էր Աւետարանը, քահանային մէկ ոսկի ժամուց էր տալիս, Աստուածամօր պատկերի առջեւ երեսը խաչակնքում էր եւ փոքր ինչ շնորհ թայլափոխով դէպի դուրս էր գնում, զգուշանալով որ թիկունքը անպատկառ կերպով ուղղուած չլինի դէպի տիրամայրը: Եւ այս բոլորի վրայ՝ գանձանակ պտտեցնող երիտասարդներին եւ դուրսը սպասող մուրացիկներին միշտ կատարեալ կերպով գոհացնում էր:

Հայրապետ էֆէնտին վաթսուն տարին անցած էր արդէն: Տղայութեան ժամանակ հաղիւ կարգաւ՝ զրել սովորել էր, բայց ընթերցասէր էր եւ այնուհետեւ շատ էր կարդացել: Հայաստանից գնացել էր Կ. Պոլիս, «բախտը» ժպտացել էր նրան, Խրիմի պատերազմին հարստացել էր: Այդ պատերազմի ժամանակ օսմանեան կայսրութեան պետական հայթայթին է դառնում:

«Փաշաներու եւ պաշտօնատէրներու գողակից ըլլալու ննարամտութեան մէջ ամբողջատելի ճարպիկ էր...»

Բայց այս յատկութիւնները արատ չեն նկատւում գրամատիրական յոռի իրաւակարգի մէջ: Հայրապետ էֆէնտի ապրած միջավայրում նրանք նոյն իսկ առաքելութիւն էին, քանի որ ցուցնում էին «խելք» եւ «գործունէութիւն»:

Տաճիկ կառավարութիւնից զանազան աստիճաններ է ստանում Հայրապետ էֆէնտին, եւ այժմ «ակնակառոյց կը մնար փաշայութեան...» Թուրք պաշտօնեաների հետ վարւում էր վերին աստիճանի զգուշութեամբ: Ոչ մի ակնարկ, ոչ մի ձայն չէր հանում հայութեան մէջ տեղի ունեցող խնդիրների շուրջ եւ ամեն կերպ աշխատում էր պաշտպանել հայերին: Հասան փաշան մի անգամ գոհունակութիւն է յայտնում նրան, որ էֆէնտին Օրթագիւղից ճամբել է «կասկածելի փափաղ մը»: Հայրապետ էֆէնտին խորապէս վշտանում է այն մարդկանց դէմ, որոնք հայութեան ներսը տեղի ունեցած այս դէպքը յայտնել են Օրթագիւղի փաշային, եւ անմիջապէս պատասխանում է.

«Ամա՛ն, փաշա էֆէնտի, Ձեր վսեմութեան սխալ տեղեկութիւնն հաղորդուած ըլլալու է... Բան մը չկայ: Ատ փափաղին ձայնը շատ հաստ էր, մենք ալ անուշ ձայն սիրելնուս, պատրիարքարանէն ուրիշ քահանայ մը խնդրեցինք: Ամենը աս է:»

Հայրապետ էֆէնտիի համար այս մանրագէպը շատ յատկանշական է: Ամեն անգամ թուրք փաշաների հետ խօսած ժամանակ աշխատում էր ցոյց տալ, թէ Յեղափոխութիւն չկայ հայերի մէջ, թէ հայերը օսմանեան կայսրութեան ամեն տեսակէտով հաւատարիմ են: Մի հիմնական բարոյական ունեւոր իր բոլոր վարմունքի մէջ. — «կտրել չկրցած ձեռքդ պագ եւ ճակտիդ դիր»: Բայց իր մտերիմներին կամացուկ ասում էր — «ասոնց ձեռքը փտախտ պիտի դառնայ, ինքն իրեն պիտի իյնայ, կտրելու պէտք չկայ. սպասենք համբերելով»:

Այս պատճառով՝ Ներսէս պատրիարքին շատ անհամբեր մարդ էր համարում եւ սաստիկ զայրացած էր Սան-Ստեֆանօ եւ Բերլին եղած դիմումների համար:

Այս քաղաքական ձեռնարկների նկատմամբ նա մի տեսակէտ ունէր, որ ամփոփւում էր հետեւեալ ժողովրդական ասացուածքի մէջ. — «կամուրջը չանցած, սաստանային աչքը կը քանանք»: Մինչդեռ հարկաւոր էր՝ «սաստանային հետ եղբայր եղիր, մինչեւ կամուրջն անցնիլը»:

Այն ժամանակ, երբ ուսմանտիք հրապարակագրութեան մէջ կրկնւում էր թէ «դժուարն անցանք», Հայրապետ էֆէնտին կրկնում էր յամառօրէն թէ՛ «կամուրջը դեռ չենք անցած»:

Թուրքերի հետ ունեցած ամենօրեայ զգոյշ եւ երկիւղած յարաբերութիւնից ներքնապէս տանջւում էր Հայրապետ էֆէնտին: Սրտի խորքում ծանր արամադրութիւն էր առաջացել, թոյն էր հաւաքուել նրա գոյութեան ներսը, անկեղծօրէն ատում էր նրանց եւ խորապէս ցանկանում էր, որ այդ խեղդող ուժեղ վերջանայ:

«Գում-Գաբուի ցոյցի օրը յոյսի եւ վախի զգացումով ցնծաց ու տազնապնդում էր»:

Հայրապետ էֆէնտին մի վայրկեան կարծեց թէ՛ «գործին մէջ ոռւսին մատը կայ», սրտատրոփ սպասում էր Ռուսաստանին, որովհետեւ «դանա-



կը ալ ոսկորին հասած կ'երեւնար: Սակայն սմբած մնաց, երբ «բանտերը հայերով լեցուեցան», դէպի արեւակէզ Աֆրիկէ շղթայակապ հայեր ճամբայ դուրեցան եւ «ռուսին մատը» չերեւաց:

Եւ քանի որ չերեւաց, Հայրապետ Էֆէնտին մի կէտ անգամ չփոխեց իր վարմունքից, իր քաղաքականութիւնից:

Այսպիսի կազմով եւ այսպիսի բարոյական տրամադրութեան մէջ Հայրապետ Էֆէնտին պատահեց գիւղական տէրտէրին:

—

Արփիար Արփիարեան այս հանդիպումը նկարագրել է գեղարուեստական փայլուն ձեւով: Երկու տիպերը — Հայաստանցի հրաբորբոք, պարզ տէրտէրը եւ Վ.Պոլսի սառնասիրտ ու «քաղաքագէտ» Էֆէնտին նկարուած են զարմանալի կենդանութեամբ: Նրանց իւրաքանչիւրի խօսքը, շարժումը, գաղափարն ու զգացումը վերին աստիճանի արտայայտիչ են դուրս բերուած, կատարելապէս բնորոշ՝ իւրաքանչիւրի համար: Մէկ քանի յատուկ գծերով Արփիարեան կարողացել է երկու իրական անձնաւորութիւններ ներկայացնել, որոնցից իւրաքանչիւրը մի բարոյական ամբողջ աշխարհ է արտացոլում:

Այդ նկարագրութեան մէջ Արփիար Արփիարեան ցոյց է տուել նուրբ դիտողութիւն, իւրաքանչիւրի հոգեբանութեան ճիշտ ըմբռնում եւ ըմբռնածի շատ յաջող ձեւակերպութիւն:

Լեզուն լի է պատկերաւոր արտայայտութիւններով, նեարդ ունի, շարժուն է, բովանդակալից է, միանգամայն ազատ է աւելորդ խօսքերից, ամփոփ է եւ կտրուկ: Այդ լեզուն այնքան ինքնայատուկ գոյն ունի, որ գրեթէ իւրաքանչիւր էջի վրայ ոճի զարմանալի յատկութիւններ է ցուցահանում: Այս վերջին պարագան մանաւանդ գրագէտի համար առաջնակարգ յատկութիւն է: Մեր մէջ հեղինակներ կան, որոնք գրում են շատ կանոնաւոր, սահուն, քերականական կատարեալ ճշտութեամբ, եւ դարձեալ շատ ուրիշ արժանիքներով — բայց որոնք զուրկ են ոճ դառնալու, ստեղծելու կարողութիւնից: Արուեստագէտը ոճի մէջ է երեւան գալիս: Ով այս ինքնայատուկ, բնորոշ գոյնը չունի իր լեզուի մէջ — նա արժէքաւոր գրագէտ չի կարող լինել:

Արփիար Արփիարեան արեւմտահայ արձակագիրների մէջ այս տեսակէտից բացառիկ տեղ է գրաւում: Նա անշուշտ ոճաբան չէ բառիս հին առումով, ստիլիստ անունը նրան չեն տալ մեր գրականութեան այսպէս կոչուած դասականները: Եւ թերեւս Արփիարեան բաւականաչափ ուսմիկ ու անզարդ երեւայ նրանց: Բայց չնայելով դրան՝ Արփիարեան կարողանում է խօսեցնել անձերը, կարողանում է երանգաւորել խօսքն ու արտայայտութիւնը, կարողանում է ոյժ եւ կենդանութիւն դնել ասացուածքի մէջ, մի խօսքով՝ կարողանում է միտքն արտայայտել մի ձեւով, որ իրն է գերազանցապէս եւ որ էապէս բազմազան է:

Իր նկարագրութեան մէջ նա ծանրաբարոյ, ողբերգական կողմի հետ տալիս է նաեւ սրամիտ, կատակերգական կողմը: Եւ տիպերն ու հոգեկան դրութիւնները արտայայտում է գործադրելով այս երկու միջոցները:

Տէր-Յուսիկի եւ Հայրապետ Էֆէնտիի տեսարանները եկեղեցու խորհրդարանում, ժամերգութիւնից յետոյ, նկարագրուած են լրջութեան եւ կոմիքականի կրկնակի գոյներով: Գիւղացի տէրտէրը գեղջուկ մարդու եռանդով եւ միամիտ ոգեւորութեամբ արտասանում է «ազատութիւն եղբարց մերոց գերելոց», ինչպէս եւ «թագաւորաց քրիստոնէից եւ ղինուորեալ մանկանց նոցա» խօսքերը: Այդ խօսքերը արտասանում է նա գրեթէ կրօնական էքստազի մէջ, խառնելով նրան իր հայրենասիրական զգացումը եւ ամենեւին չմտածելով որ հայ եկեղեցում իր հանդիսաւոր պարտականութիւնը կատարելիս՝ անքաղաքագիտական գործ է թղթատրում: Սակայն «քաղաքագէտ» Հայրապետ Էֆէնտին ցնցւում է այդ խօսքերից, որ մինչեւ այն Վ.Պոլսի յոգնած եւ անտարբեր քահանաները հազիւ միմեալով են արտասանել:

Եւ Էֆէնտին հասկացնում է, թէ Օրթոդոքս «ազատութիւն», «գերեալ եղբայրներ», «գինուորեալ մանուկներ» խօսքերը չպէտք է արտասանուեն, թէ Վ. Պոլսի Օրթոդոքս Հայաստանի Տոմոզ գեղը չէ եւ ոչ էլ Օրթոդոքս Հասան փաշան գեղջուկ տէրտէրի ճանաչած Հասան փաշաներից որ եւ է մէկը:

Այս երկու տեսարանների մէջ ցոյանում է մեր հանրային կեանքի մի շատ նշանակալից ժամանակաշրջանը: Տէր-Յուսիկի եւ Հայրապետ Էֆէնտիի բնորոշ նկարագիրների հետ երեւան է գալիս մի ամբողջ աշխարհ — Հայաստան, Յեղափոխութիւն, մատնութիւն, սուլթանի միահեծան տիրապետութիւն, Հասան փաշա, Գում-Գաբուրի ցոյցը, համբերութեան եւ սպասումի քաղաքականութիւն, Էֆէնտիի եւ առաջնորդի իշխանութեան խնդիր, եւ այդ բոլորի մէջ «աղնուաշուքների» եւ ստրուկների մի ողորմելի հօտ, ստրուկ բարբերով, հոգով, իմաստութեամբ...

Արփիար Արփիարեան այդ ժամանակաշրջանը նկարագրել է կենդանի, պարզ, հոգեբանական ճշտութեամբ, իր նկարագրած պատկերին իրականի կատարեալ զգացում հաղորդելով:

—

Հայրապետ Էֆէնտին հայութեան մէջ պատահող չարիքների պատճառը համարում էր Յեղափոխութիւնը: Նրա տեսակէտով՝ այն բոլոր հալածանքները, կոտորածները, բանտարկութիւնները շատ կը մեղմանային կամ թերեւս բոլորովին չլինէին, եթէ յեղափոխութիւնը չլինէր: Իր ամբողջ կեանքի ընթացքում ամեն կերպ աշխատել է չեղբացնել յեղափոխականներին եւ յեղափոխութիւնը, ամեն բանի մէջ տեսնելով եւ որոնելով այդ չարիքը եւ յաճախ կռուելով նրա դէմ ծիծաղելի չափազանցութեամբ:

Եւ սակայն չնայելով այդ կատարեալ խոհմոռութեան — սուլթանական



վարչութեան մէջ ձերբակալուում եւ բանտարկուում է նաեւ Հայրապետ Էֆէնտին:

Այս բանտարկութիւնը խորին ազդեցութիւն է ունենում Էֆէնտիի հոգեկան կեանքի վրայ: Արփիար Արփիարեան արուեստագէտի բարձր կարողութեամբ վերլուծել է Հայրապետ Էֆէնտիի ներքին փոթորկալի հոգեբանութիւնը բանտարկուած վիճակի մէջ: Ղաթսուն տարեկան մարդ է Էֆէնտին, սկզբից մինչեւ վերջ անընդհատ պայքարել է Յեղափոխութեան դէմ, ամենատեսակ խոնարհութիւն է ունեցել կառավարող անձերի առջեւ, իր թաղից արտաքսել է բոլոր կասկածելի, խեղճ հայերին, անպատուել եւ հեռացրել է հայաստանի դարիս տէրտէրին, որովհետեւ նա յանդգնել է բարձրաձայն արտասանել հայոց եկեղեցու մէջ հին, աւանդական աղօթքը: Սակայն Հայրան պետ Էֆէնտին եւս յանցաւոր է, քաղաքական ոճրագործ է, յեղափոխական է:

Այդ խռովուած հոգու պատկերացումը «Կարմիր Ժամուց»ի լաւագոյն, ուժեղ, գեղեցիկ մասերն են գրաւում: Հոգեբանական այդ վերլուծումը ոչ միայն Արփիար Արփիարեանի գործերի մէջ, այլ եւ մեր գրականութեան մէջ աչքի ընկնող էջերից են, մեր արձակ գրականութեան, որ շատ հարուստ է հոգեբանական յղացումներով եւ իրագործումներով:

Հայրապետ Էֆէնտիի մէջ՝ խարդախութեամբ եւ ստորութեամբ կատարուած բանտարկութիւնը ուժգին կերպարանափոխութիւն է առաջացնում: Եւ «հին հայր» բեկումն է դէպի գաւառի մարդը, դէպի գաւառական Հայաստանը: Հոգեկան անձկութեամբ եւ կարօտալի յոյզերով — իր աղատութիւնից յետոյ — նա կամենում է տեսնել հայաստանի գեղջուկ տէրտէրին, որին այնքան չարութիւն էր արել Օրթագիւղի եկեղեցու ժամերգութեան պատճառով:

Տէր-Յուսիկը այնուհետեւ ձերբակալուել էր երկրում, իր գործունէութեան ասպարիզում, տարուել էր Վ. Պոլիս, աքսորուել էր հեռաւոր վայրեր, ապա տարիներ յետոյ աղատուելով աքսորից՝ վերադառնում էր երկիր եւ առժամապէս գտնուում էր Վ. Պոլիս:

Եւ մի երեկոյ Տէր-Յուսիկի աղքատիկ խուցի մէջ տեղի է ունենում Հայրապետ Էֆէնտիի եւ գեղջուկ տէրտէրի սրտաշարժ հանդիպումը: Գեղեցիկ, տխրօրէն գեղեցիկ է նաեւ այս հանդիպումի նկարագրութիւնը:

Տեսակցութեան ժամին նրանք խօսում են Հայաստանի, գաւառի ինքնապաշտպանութեան մասին — եւ կերպարանափոխուած Հայրապետ Էֆէնտին գեղջուկ տէրտէրի ձեռքը համբուրել ուղելով եւ նրան հրաժեշտ տալով յանձնում է նրան մի քսակ լեցուն ոսկի, իբրեւ ժամուց:

Բայց այդ ժամուցը այն ժամուցը չէր, որ նա տալիս էր Օրթագիւղի եկեղեցու եպիսկոպոսին, ժամերգութեան հանդիսաւոր օրերում:

Այդ ժամուցը կարմիր ժամուց էր եւ տրւում էր Հայաստանի ինքնապաշտպանութեան համար:

«Կարմիր Ժամուցը»ը քաղաքական վէպ է, ներկայացնում է մեր ազգային ուսմանտիզմի ժամանակաշրջանը:

Բայց այդ շրջանը եւ նրա մէջ գործող անձերը ներկայացնում է նա իրական ուղղութեամբ: Ռէալիստական վերլուծումը եւ ռէալիստական արուեստը այդ վէպի համար եւս յատկանշական գիծ է, ինչպէս էր Արփիարեանի նախորդ երկերի համար: Անշուշտ դժուար է ասել, թէ ուսմանտիք գրականութեան սկզբունքները եւ իդէալները չեն գործում այդտեղ: Գրական տեսակների մէջ անկարելի է չափազանց ճշգրիտ սահմանագիծ անցկացնել: Եւ այս՝ մանաւանդ այն գրական գործերի նկատմամբ, որոնք փոխանցման ժամանակաշրջանի արտայայտութիւն են: Խնդիրը աւելի քանակական է, քան թէ որակական: Եւ Արփիար Արփիարեանի քաղաքական վէպի մէջ գերակշռում է իրապաշտական տարրը:

Այս յատկութիւնը նրան հնարաւորութիւն է տուել կեանքի դէպքերի եւ անձերի նկատմամբ որոշ առարկայական վերաբերում ունենալ եւ քննադատական տեսակէտ հանդէս բերել: Այս քննադատական տեսակէտը անշուշտ ուղղակի մեթօդով չէ կատարուած, ինչպէս կը կատարուէր հրապարակագրական գործի մէջ: Արփիարեան արուեստագէտ է եւ նրա քննադատութիւնն էլ արուեստին յատուկ ձեւով է երեւան գալիս: Բայց ուշադիր ընթերցողը միշտ կարող է այս ինքնայատուկ ձեւից էլ հանել, դուրս բերել գրագէտի քննադատութիւնը, դէպքերի կամ անձերի գնահատութիւնը, մի խօսքով նրա աշխարհահայեացքը:

Արդ, ինչպէս է նայում Արփիար Արփիարեան իր գծած եւ իրական կերպով պատկերացրած անձերի ու դէպքերի վրայ:

Թէ Արշամին, թէ Հայրապետ Էֆէնտինն եւ թէ Տէր-Յուսիկին նա ներկայացրել է իրենց համապատասխան մթնոլորտի մէջ, բացատրելով իւրաքանչիւրի հոգեբանութիւնը եւ իւրաքանչիւրի գործը: Բայց որքան էլ առարկայական լինի այս բացատրութիւնը — Արփիար Արփիարեան ունի դէպքերի եւ կեանքի իր ուրոյն ըմբռնումը:

Այս ըմբռնման համաձայն՝ Պոլսեցի ուսուցիչ-պրոպագանդիստ Արշամը, որ իբր քաղաքական կուսակցութեան անդամ մտնում է Հայաստանի գիւղը գործելու՝ գրական հանգամանքով չէ երեւում նրան:

Բաֆֆիի «Խենթ»ի մէջ Գուգուկէանը, որ նոյնպէս Պոլսեցի պրոպագանդիստ էր Հայաստանի Ալաշկերտ գաւառում եւ որ Արշամի նախատիպն էր — շատ համակրական գծերով է երեւան եկել: Այստեղ է գտնուում ուսմանտիք Բաֆֆիի եւ ընդհանրապէս իրապաշտ Արփիարեանի տարբերութիւնը:

Արշամը ուսմանտիք է, հողից եւ իրականութիւնից կտրուած, գործում է վեց պետութիւնների միջամտութեան վրայ յոյս դրած, չէ արտայայտում աշխատաւոր գիւղացիութեան տրամադրութիւնը — եւ նրա գործունէութիւնը իր լաւ կողմերի հետ միասին ընդհանուր առմամբ վնասակար է: Վնասակար է, որովհետեւ նա նկատի չունի մեր ժողովրդի ներքին ոյժը, մեր երկրի ներքին



յարարերութիւնները, որ միայն կարող են արժէքաւոր հետեւանքներ ստեղծել: Նա ժողովրդի բախտը փորձում է անհիմն, խաբուսիկ տուեալների վրայ, ուրիշ խօսքով՝ արկածախնդրական գործ է կատարում:

Հայրապետ էֆէնտին արտայայտիչ է Ա. Պոլսի առեւտրական-բուրժուազիայի եւ չէ կարող ըմբռնել հայ աշխատաւոր գիւղացիութեան տեսակէտը: Այն ժամանակ, երբ պայքար է սկսուած աւատական միջնադարեան ռէժիմի եւ աշխատաւոր գիւղացիութեան միջեւ՝ կրաւորական համակերպումը ոչինչ չի կարող անել: Ինքը Հայրապետ էֆէնտին էլ, հակառակ իր բոլոր համակերպման՝ ազատ չմնաց «արհաւիրքից», չնայելով որ այդ արհաւիրքը ուղղուած էր ոչ թէ էֆէնտիների, այլ աշխատաւոր գիւղացիութեան դէմ:

Նա չէր կարող ըմբռնել, որ աշխատաւոր գիւղացիութիւնը կարող է ազատագրուել ներքին ոյժ կազմելով, միայն թէ այս ոյժը իմաստնորէն գործադրելով:

Տէր-Յուսիկը հայ գիւղական միջին խաւի արտայայտիչ է, իր ծագումով մինչեւ անգամ գիւղի միջին խաւից բարձր: Պաշտօնով քահանայ է նա, եւ ենթակայ ազգային, կրօնական, հասարակական նախապաշարումների, որոնք միջնացնում են նրա միտքը, մոլորում նրա զգացումը եւ շեղում նրա գործը:

Իբրեւ գիւղական կեանքի ծնունդ, ժողովրդի անմիջական ազդեցութեան ներքոյ մեծացած՝ նա գնահատում է ինքնօգնութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը, եւ հասկանում է, որ կեանքում ներքին ոյժը միայն կարող է լուրջ հետեւանք առաջացնել: Արշամի քարոզած եւրոպական «միջամտութեան» գաղափարը նա մինչեւ վերջն էլ չի ըմբռնում: Բայց քանի որ նախապաշարումների տակ է եւ աշխատաւոր գիւղացիութեան հարազատ արտայայտիչը չէ — չի կարողանում սոցիալական յենարաններ որոնել Թիւրքիայի միւս աշխատաւորների շրջանում, դուրս գալ մեկուսացումից, կղզիացումից եւ իր շուրջը ընտանի դաշնակիցներ գտնել: Նա ատում է թուրքին, ատում է մահմետականին առանց դասակարգի խտրութեան — եւ այս ատելութիւնը նրան միայնացնում է եւ նրա համար ողբերգական կացութիւն ստեղծում: Նրան պակասում է վստահութիւն դրացի աշխատաւորի նկատմամբ եւ աշխատաւոր գիւղացու գիտակցութիւնը, որ միացած ինքնօգնութեան, ինքնապաշտպանութեան եւ ներքին կազմակերպութեան գաղափարին՝ կարեւոր դեր կարող էին կատարել: Նա գտնում է նշանակալից կերպով Արշամից առաջ, եւ որքան շուտ ազատագրուի Արշամի ազդեցութիւնից, կրօնական եւ ազգային նախապաշարումներից, որքան շատ իր միջավայրի, իր դրացի աշխատաւորների հետ միասին գործէ — այնքան աւելի կը մօտենայ իր ազատագրութեան:

Որովհետեւ ժողովուրդների իսկական ազատութիւնը հնարաւոր է միայն աշխատաւոր ժողովուրդների համերաշխութեամբ եւ համագործակցութեամբ: Այդ ճանապարհը դժուարին եւ երկարատեւ ճանապարհ է, այո՛, նա չունի

եւրոպական «միջամտութեան» եւ ցոյցերի արտաքին փայլը: Բայց նա է միակ ճշմարիտ ուղին, որ պիտի տանի չարքաշ եւ աշխատաւոր գիւղացիութիւնը դէպի քաղաքական ու տնտեսական ազատագրութիւն:

Յետագայ դառն եւ զարհուրելի դէպքերը ցոյց տուին, որ եւրոպական «մեծ» պետութիւնների միջամտութեան եւ նրանց «մարդասիրութեան» միջոցով հայ աշխատաւորութիւնը ոչ թէ ազատագրուեց, այլ անդարմանելի հարուած ստացաւ: Արշամի քաղաքականութիւնը մեր մէջ գործեց տասնեակ տարիներ, մինչեւ որ հասաւ իր տրամաբանական վախճանին ու այլասերման:

Այսօրուայ իրականութիւնը, հայ աշխատաւոր ժողովրդի եւ իր դրացի աշխատաւոր տարրերի համերաշխութիւնն ու համագործակցութիւնը, որ սկսուել է այնքան դժուարին վերիվայրումներից յետոյ — պէտք է նկատել մեր կեանքի պատմական ամենամեծ դէպքերից մէկը, վերջին դարի ամենամեծ դէպքը:

Արիւիար Արիւիարեան «Կարմիր ծամուց»-ի մէջ քննադատելով հանդերձ Արշամի արկածախնդրական ուսմանտիզմը, վեր հանելով հանդերձ հայ գիւղացու ներքին ոյժի, ինքնօգնութեան, ինքնապաշտպանութեան կարեւոր դերը — չէ կարողացել սակայն տեսնել ամբողջ ճամբան:

Ռօմանտիզմը եւ սոցիալական նախապաշարումները նրա վրայ էլ ունեցել են իրենց բացասական ազդեցութիւնը:

Սակայն իր յետագայ գրուածքների մէջ Արիւիարեան հետզհետէ աշխատում է ազատագրուել այդ ազդեցութիւնից:

«Ոսկի ապրիլներ» այս զարգացող տրամադրութեան եւ հոգեբանութեան արտայայտութիւնն է:



## VI.

## ԱՂԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ ՎԷՊԸ

(“Մինչեւ երբ”, “Ոսկի Ապրիլ”)

Արփիար Արփիարեանի այս երկու գրուածքները մեր գրականութեան մէջ բացառիկ տեղ են գրաւում: Նրանց մէջ պատկերացած է հայ աշխատաւորի կեանքը այնպէս, ինչպէս մինչեւ այդ մեր արձակագիրներից ոչ ոք չէր պատկերացրել: Երկու գրուածքների կենդրոնական անձնաւորութիւնները պատկանում են աշխատաւորական-գործաւորական դասին: Արփիար Արփիարեան այդ գրուածքներով բաց է անում մի նոր աշխարհ, իր կենդանի տիպերով, իր ցաւագին պրօբլէմներով, իր ողբերգականութեամբ, որ այլապէս յուզիչ է եւ տարբեր կերպով զարհուրելի:

Այդ աշխարհում մարդիկ տանջւում եւ զոհաբերւում են ոչ թէ քաղաքական ուժի մի պատճառով, այլ տնտեսական անարդար կարգերի հետեւանքով, ոչ թէ օտար վարիչների սարսափով, այլ ներքին շահագործողների ճնշումով:

Եւ այս տանջանքն ու զոհաբերութիւնը մասնաւոր բնոյթ չունի, անհատական կամ պատահական բնաւորութիւն չէ կրում, այլ ընդհանուր է, սիստեմատիք է, համատարած է: Նրա ստեղծած աւերը, թէեւ դանդաղ ու ծածկուած, սոցիալական օրգանիզմի համար սարսափելի հետեւանքներ է ունենում:

Արփիար Արփիարեան իր երկու գրուածքների մէջ այս ներքին վերքը ներկայացրել է ոչ իբր հրապարակագիր կամ քարոզիչ, այլ իբրեւ գեղարուեստագէտ, որ տեսնում է կեանքը, վերլուծում է դէպքերն ու անձերը եւ տալիս է այն կենդանի պատկերներով:

Նրա գրուածքները մեր իրականութեան անխարդախ արտայայտութիւնն են:

Առաջին գրուածքը, “Մինչեւ երբ”, տպուած է Վ. Պոլսի “Մասիս”-ի մէջ 1889 թուականին: Հեղինակը յետագայում փոփոխութեան է ենթարկում այն եւ նոր ձեւով հրատարակում է 1906 թուին, Գահիրէի “Հիւրակ”-ի մէջ:

“Այս պատկերը առաջին անգամ 1889ին Մասիս-ին մէջ տպուեցաւ, երբ ընկերական խնդիրները մեր մտքերը յուզել սկսած էին: Բաւական փոփոխութիւններով այժմ կարտատպենք զայն, 1890ի մեր մտահոգութեանցը իբր մէկ նշանը”:

Այսպէս էր գրում Արփիարեան 1906 թուին<sup>1</sup>:

<sup>1</sup> “Հիւրակ”, 1906 թ. Հոկտեմբեր. Գահիրէ:

Այս մի քանի տողը մեր գրականութեան որոշ շրջանի վրայ լոյս են տարածում:

Արփիարեանի ասելով՝ ընկերական խնդիրները սկսել էին մեր մտքերը յուզել տակաւին 90-ական թուականներին: Անշուշտ այս հաստատութիւնը չպէտք է ընդունել լայն իմաստով: Գրականութիւնը 90-ական թուականներին այդպիսի մտքերով յուզուած չէր մեր մէջ: Բայց գրողները, իբրեւ մտաւորական մարդիկ, սկսել էին կարգաւ ընկերական գրուածքներ, դիտել մեր կեանքի մէջ երեւացող ընկերական երեւոյթները եւ խորհրդածել այդ պրօբլէմների շուրջը: Արփիար Արփիարեան այս մտաւորական մարդկանց մէջ նշանակելի տեղ էր գրաւում, որ կարողացաւ գեղեցիկ գրականութեան միջոցով արձագանգ տալ մեր մտքերը յուզող ընկերական խնդիրներին:

“Մինչեւ երբ”-ը նա համարում է 90-ական թուականի “մեր մտահոգութեանցը իբր մէկ նշան”: Բայց ապահովաբար այս հաստատութիւնն էլ պէտք է ընդունենք որոշ վերապահութեամբ, քանի որ 90-ական թուականներին աշխատաւորական, կամ աւելի որոշ իմաստով դասակարգային վէպը մեր գրագէտների մտահոգութեան առարկան չէր: Բաւական է մի ամփոփ հայեացք նետել մեր գրականութեան թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ հաստուածի վրայ, համընդհանուր համար, որ այդ ժամանակաշրջանում Արփիարեանի ակնարկած ընկերական մտահոգութիւնը մեր մէջ տակաւին դիտելի երեւոյթ չէր:

Բաժնի այդ շրջանում մեռած էր արդէն: Նրա վերջին գործերը եղան քաղաքական եւ պատմական վէպեր: Ղազարոս Աղայեանը ապրում էր հեքիաթների դիւթական աշխարհում: Պերճ Պոռնեանը շարունակում էր ազգագրական վէպը, նկարագրելով գիւղի կեանքը իր բացասական եւ դրական կողմերով, իր ցնցերով եւ զոհերով, անշուշտ անկախ 90-ական թուականների մեր ընկերական մտահոգութիւնից: Շիրվանզադէ, Լէօ, Վրթանէս Փափագեան, Մուրացան, Նարդոս զանազան ուղղութեամբ եւ տարբեր տաղանդով գրուած իրենց արձակի մէջ հանդէս չբերեցին “90-ական թուականի ընկերական մտահոգութիւնը”, այն իմաստով, ինչ իմաստով գրուած է Արփիարեանի “Մինչեւ երբ”-ը:

Արեւմտահայ վիպագիրները այս տեսակէտից չէին տարբերւում արեւելահայ վիպագիրներից: Այդ շրջանի հեղինակները՝ Գրիգոր Զօհրապ, Լեւոն Բաշալեան, Տիգրան Կամսարական, չստեղծելով այլ եւս հնքի մասին, իրապաշտ էին Արփիարեանի գրական գործունէութեան առաջին շրջանի ոգով, բայց չունէին նոյնպէս “90-ական թուականի ընկերական մտահոգութիւնը”:

Այսպէս: Արփիարեանի վերոյիշեալ միտքը չէ բնորոշում 90-ական թուականների մեր գրական ուղղութիւնը ընդհանուր տեսակէտով: Այդ միտքը արժէք ունի միայն այնքան, որքան նա վերաբերում է մեր մտաւորական որոնումներին ընդհանրապէս եւ Արփիարեանի գրական սկզբնաւորութեան



մասնաւորապէս: Հայ վկայագիրները մէջ Արփիարեան առաջինը եղաւ, որ արտայայտեց աշխատանքի եւ գրամի ընդհարումը, որ ներկայացրեց այս ընդհարման զոհերին իրական, յուզիչ պատկերներով եւ որ ինչպէս ինքն է աւտում՝ նշանացոյց եղաւ մեր մտքերը յուզող ընկերական խնդիրներին ու մտահոգութեան:

Արփիար Արփիարեանի աշխատաւորական վէպը այսպիսով եղաւ ոչ միայն կեանքի պարզ, բնական արտայայտութիւնը, այլ եւ գրական ու ընկերական գիտակցութեան առարկայացած նշանը:

«Մինչեւ երբ»-ի մէջ դուրս են բերուած երկու տիպեր, որոնք արտայայտիչ են երկու հակամարտ դասակարգերի: Առաջինը՝ Թորոս աղբարը, որ երեսուն տարիներէ ի վեր բանտարկութիւն է անում Վ. Պոլիս, իսկ երկրորդը, ճարտարապետ Գասպար Էփէնդին, որ «Տինգ-վեց հարիւր գործաւոր կը բանեցնէր»:

Թորոս աղբարը սկզբնապէս եղել է հողագործ: Հայաստանի հեռաւոր եւ աղքատ վայրում մշակելիս է եղել նա մի կտոր հող, որ սակայն բաւարարութիւն չէ տուել նրա ընտանիքի ամենատարրական պահանջներին:

Մակաւահողութիւնը եղել է Թորոսի, եւ անշուշտ միւս Թորոսների համար, տնտեսական աղքատութեան, մշտական զրկանքների պատճառ: Այս պարագան նետել է նրան գիւղական վաշխառուի գիրկը, «Հայ քրիստոնեայ» վաշխառուների, որոնք չքաւոր գիւղացիներին հարստահարելու գործում ոչ մի ազգային կամ կրօնական խտրութիւն չէին դնում:

Սօցիալական եւ տնտեսական այս ծանր պայմանների հետեւանքով՝ Թորոս աղբարը թողնում է գիւղը եւ գնում է դէպի արդիւնաբերական-առեւտրական կենդրոն Վ. Պոլիս, աշխատելու իբրեւ գործաւոր:

Գիւղացիական կեանքի մի չափազանց հետաքրքրական շրջանի արտայայտութիւնն է արձանագրուած այստեղ, այն շրջանի, երբ տնտեսական կենդրոնացման հետեւանքով գիւղացիութիւնը հետզհետէ ենթարկւում է բանտարկականացման: Մեր մէջ այդ շրջանում գիւղացիները թողնում էին երկրագործական աշխատանքը եւ փոխադրւում էին քաղաք՝ ժամանակաւորապէս գործաւոր լինելու մտադրութեամբ: Նրանք տակաւին կապուած էին գիւղի հետ, ընտանիքի անդամները ընդհանրապէս գտնուում էին գիւղում եւ սպասում էին շարունակ իրենց ղարիպների վերադարձին: Ղարիպները քաղաքում ամեն կերպ աշխատում էին իրենց չնչին օրավարձից մի բան խնայել, որպէս զի կարողանան «արտը» փրկել վաշխառուի ճիրաններից եւ վերադառնալ նորէն գիւղ, հողագործութեամբ պարապելու համար: Բայց այս մտադրութիւնը ընդհանրապէս չէր իրագործւում, որովհետեւ մէկ կողմից վաշխառուի պարտքերը երբեք չէին վերջանում, միւս կողմից՝ չէին կարողանում «մի բան» խնայել իրենց օրավարձից, որովհետեւ այս «արդար» օրավարձն ան-

գամ չէին ստանում իրենց անխիղճ գործատերերից առանց մեծամեծ կրճատումների: Եւ պանդուխտ-գործաւորների համար ստեղծւում էր մի յոռի շրջանակ, որից երբեք չէին կարողանում դուրս գալ նրանք եւ որ նրանց պանդխտութիւնը եւ գործաւորութիւնը տեւական էր դարձնում քաղաքում:

Արփիար Արփիարեան այս ընդհանուր միջավայրի եւ այս ախտաւոր կարգերի մէջ է դրել իր հերոսին, Թորոս աղբարին, որ ծերացել է արդէն գործաւորական տաժանելի բեռան տակ:

«... Հիմալ յիսունը անցուկ, Թորոս աղբարը Բալուէն տասնութը տարու Պոլիս գալով հիւսն եղած էր, իր ըուր երկրացիներուն պէս: Առջի քսան տարին չորս անգամ ուխտի ըրած էր, քայց տասը տասերկու տարիէ Պոլսէն չէր կրնար հեռանալ, վասն զի գործերը գէշ կերթային: Սակայն ետքերը ուրիշ ճարտարապետի մը քով աղեկ բանած էր ու կրցած էր թէ՛ տունը ստակ խրկել, թէ՛ պարտքին ի հաշիւ բան մը վճարել եւ թէ՛ քսան ոսկի մըն ալ աւելցնել: Ակոսն եթէ քիչ մըն ալ սղմելու ըլլար, պիտի կրնար շէն շնորք երկիր դառնալ, հոն պարտքը վճարել, տղան կարգել ու Պոլիս ճամբել, ինքն ալ հանգստանար պիտի այլ եւս: Բայց այդ ամառը գործին էն բանուկ օրերը, լաստակերտէ մը վար ինկաւ, վիրաւորուեցաւ:»

Այսպէս է ներկայացնում Արփիարեան Թորոս աղբարի անելանելի կացութիւնը: Յիսնամեայ գործաւորը տասնեակ տարիներ արիւն քրտինք է թափել, առաւօտից երեկոյ գրաստի պէս աշխատել է — եւ սակայն չնայելով այդքան աշխատանքին՝ իր ծերութեան հասակում նա նորէն ու նորէն կատարելապէս սեփականազուրկ է: Թորոս աղբարը քաղցր երազներ է ունեցել գիւղ վերադառնալու վերջապէս, պարտքը վճարելու, արտը փրկելու վաշխառուի ձեռքից: Բայց այդ երազները չեն իրականանում, որովհետեւ աշխատանքի ժամին լաստակերտից վայր է ընկնում եւ վերաւորւում: Այսպիսի պատահարները բանտարկական կեանքում բացառիկ դէպքեր չեն: Մէկը հանքի մէջ է մնում, միւսը մեքենայի տակ ձեռքը կամ ոտքն է թողնում, երրորդը հիւժախտ է ստանում մօրի մէջ անդադրում աշխատելով, չորրորդին հասնում է մէկ ուրիշ «պատահար»: Թորոս աղբարն էլ լաստակերտի զոհն է դառնում: Հիւանդութեան ժամանակ հայաստանցի գործաւորը սպառում է իր տաժանագին խնայողութեան մէկ նշանակելի մասը: Գիւղ գնալու, պարտքը վճարելու, արտը փրկելու գեղեցիկ ծրագիրները կերական կերպով ոչնչանում են: Թորոս աղբարի հոգում ստեղծւում է անասելի դառնութիւն: Երեսուն երկար տարիների ծանր աշխատանքից յետոյ, երբ նա այնքան մօտեցել էր երազած օրուան, այժմ կրկին անդառնալի կերպով հեռացած է նրանից: Երիտասարդ հասակում Թորոս աղբարը դեռ կարող էր ամեն բան նորից



սկսել, կարող էր չափել տասը, քսան տարուայ տաժանելի աշխատանք եւս եւ թերեւս եռանգով, ջերմութեամբ գործի կաշէր: Բայց այս հասակում, տարիների այս ծանրութեան տակ, երբ ապագան նրա աչքերի առջեւ մթնում է եւ հեռանկարները դառնում են այնքան մշուշապատ — ինչ պիտի անէր Թորոս աղբարը:

Ահա թէ ինչպիսի ողբերգութիւն է ստեղծուում աշխատաւորի հոգում: Թորոս աղբարը տեսնում է, որ ի զուր են անցել բոլոր չարչարանքները, որ երեսուն եւ երկու տարիների պանդխտական եւ գործաւորական դառնալից կեանքը ոչ մի բան չարժէ այսօր, ոչ մի հետեւանք չտուեց այսօր: Գիւղը նրա համար մնում է նորէն հեռաւոր, անհասանելի տարածութեան ետեւ, արտը մնում է յաւիտենապէս վաշխառուի ձեռքում, ընտանիքը դատապարտուած միայնութեան, աղքատութեան, սովամահացութեան:

Արիւիար Արիւիարեան մի քանի համառօտ, բայց բովանդակալից էջերի մէջ ներկայացնում է այս կեանքը եւ այս դժուարին դրաման: Այդ դրամայի մէջ միայն Թորոս աղբարը չէ, որ գտնուում է: Նա մի հաւաքական անձնաւորութիւն է, նա մի իրական տիպ է, նրանով ներկայացուած է մի ամբողջ աշխարհ:

Այդ էջերի մէջ Արիւիարեան վեր է հանում կեանքի սոցիալական-տնտեսական վերաւոր կողմը, բայց է անում մի միջավայր, որ գոյութիւն ունէր մեր կեանքում, բայց որ յայտնուած չէր գրականութեան միջոցով: Եւ սոցիալական կեանքի այդ անխարդախ ցուցադրութեան հետ միասին՝ պատկերացնում է մարդկանց հոգեբանութիւնը, մարդկանց ներքինը վարպետի փորձուած եւ համարձակ ձեռքով:

Իր հոգեկան ծանր տանջանքների մէջ՝ Թորոս աղբարը չի կարողանում մի ելք գտնել: Հայաստանի յիսունամեայ գործաւորը, որ ծերացել էր դաժան պայմանների մէջ տարիքից աւելի շուտ, կ'ողբէր գիւղ երթալ: Իր ընտանիքի եւ զաւակների կարօտը, իր ծննդավայրի սէրը, իր հողը, իր արտը այս կացութեան մէջ աւելի եւս քարշում էին նրան:

Սակայն ինչ անէր եւ ինչպէս գնար:

“Ինչո՞վը պիտի երթար: Ստակ պէտք էր ճամբու ծախքի համար, ստակ պէտք էր արտը ազատելու համար: Ա՛րտը, մեծ մոմտուքը: Երսուն երկու տարի առաջ երկրէն հինգ հարիւր դուրուշ պարտքով ելած էր՝ արտը գրաւ դնելով: Երսուն երկու տարի է ի վեր կը դատէր ու կը դատէր, պարտքը կուտար ու կուտար: Ինքը ծերացաւ, պարտքը չմնցաւ: Ոչ միայն լմցած չէր, այլ աւելցած ալ: Գոնէ կէսը վճարելու էր, չէ նէ արտը ծեղքէն կերթար: Արտը՝ ծերութեան յոյսը, զաւկին ապաւէնը, թոռներուն ապագան...”

Այս յուսահատ մտքերի մէջ Թորոս աղբարը վճռում է գիմել իր “պարտապանին”:

“Ինչպէս ուրիշ շատ գործաւորներ, Թորոս աղբարն ալ առնելիքուր մըն էր, բայց պարտապանը շատ հարուստ մէկը ըլլալով, առնելիքը փրցնելու յոյսը յիմարամիտ փորձութիւն մը կընար համարուիլ:”

Սակայն պէտք էր գիմել, քանի որ ուրիշ որ եւ է ելք չկար Թորոս աղբարի առջեւ: Նրա պարտապանը ճարտարապետ Գասպար Էֆէնդին էր, որ այժմ պարզապէս “էֆէնդի” էր կոչուում՝ իր հարստութեան եւ գիւղի պատճառով:

Գասպար Էֆէնդին ծագումով գիւղացի էր: Երիտասարդ հասակում, աղքատ վիճակի մէջ, գիւղից Վ. Պոլիս էր գնացել դրամ վաստակելու: Գիւղում թողել էր մօրը միայն: Չէր ամուսնացել այնտեղ, մտածելով որ Վ. Պոլիս աւելի “նպատակայարմար” ամուսնութիւն կարող էր պատահել: Չէր ուղեցել գաւառում “աւելորդ”, կապեր ունենալ, առանց այն էլ մօր կապը նրան շատ ծանր էր երեւում:

Վ. Պոլսում Գասպարը աշխատում է սկզբում իւրեւ պարզ գործաւոր: Ինքնամիտի, լուսկեաց, սակաւապետ երիտասարդ էր: Ստացած օրավարձի մեծ մասը խնայում է: Ընկերներից եւ հարեւակիցներից հեռու էր մնում, չէր ապրում նրանց համայնական, ընկերական կեանքով, որովհետեւ չէր ուզում ոչինչ զոհաբերել նրանց համար: Վատարեւապէս հեռու էր ժողովարձ աշակցութեան գաղափարից եւ գործադուլներից: Ապրում էր միայն ինքն իր համար: Եկեղեցի չէր գնում ամենեւին, ոչ թէ նրա համար, որ ժամ չէր սիրում, այլ նրա համար, որ չափազանց խնայող էր եւ չէր ուզում մօմ վառել: Սիրտը սաստկապէս նեղանում էր, երբ հարկ էր լինում գիւղը հարազատ մօրը դրամ ուղարկել: Նրկու քոյր ունէր կարգուած: Քեռայրները աղքատ մարդիկ էին: Եկան մի անգամ մի քանի դուրուշ պարտք ուղեցին: Գասպարը պարզապէս “չունիմ”, պատասխանեց, կարճ, կտրուկ, որպէսզի յետոյ ոսկի չուղեն, յետոյ ամբողջ վաստակը չառնեն:

Գործաւորական վիճակից կամաց-կամաց բարձրանում է Գասպարը, քծնելով, շողբորթելով, յամառ եւ անդադրում աշխատելով: Գառնում է շինութիւնների վերակացու, տաճիկ պաշտօնակիցների մեղսակցութեամբ կատարեւապէս ապահովում է “բացառիկ շահերի”, գործը եւ հարստանում է վերջապէս:

Տարիներ յետոյ Գասպարը դառնում է անկախ գործատէր, իր ձեռքի տակ բանեցնում է հինգ-վեց հարիւր գործաւոր, վճարում է շատ քիչ, իւրաքանչիւրի օրավարձից էլ ամեն տարի վար է դնում 2—5 ոսկի եւ “յոյգպիտով տարեկան 2000—2500 ոսկի “աւելորդ” եկամուտ ապահովում իր համար: Գործաւորները տանջուում են, տառապում են, բայց չեն կարողանում իրենց “պարտքը” յետ ստանալ անխիղճ, անկշտում գործատէրից:



Ճարտարապետ Գասպար Էֆէնդին հարստանալով փոխադրուում է Գատը-Գիւղ, ամուսնանում է կեսարացի հարուստ վաճառականի աղջկայ հետ եւ դառնում է զօրաւոր «Գասպար Էֆէնդի»: Գատը-Գիւղի հասարակութիւնը նրան թաղական է ընտրում, յետոյ այդ թաղից «աղգային երեսփոխան» է ընտրուում եւ Աղգային ժողովն էլ նրան քաղաքական ժողովի անդամ է դարձնում:

Ահա թէ ինչպէս է բարձրանում Գասպար Էֆէնդին:

Սակայն այդ բարձր պաշտօնների մէջ Գասպար Էֆէնդին ամենեւին չէ մեղմանում, չէ աղնուանում, այլ աւելի սարսափելի է դառնում տարաբախտ գաւառացիների եւ իր հարկւրաւոր գործաւորների համար:

Այս մարդուց ահա պէտք է թորոս աղբարը իր առնելիքը ստանար:

Հայաստանի գործաւորը որ եւ է յոյս չունէր, քանի որ լաւ էր ճանաչում Գասպար Էֆէնդիի անողորմ հոգին, բայց «ծովն ինողը օձուն կը փաթթուի», մտածում է նա եւ քայլերը ուղղում է դէպի Էֆէնդիի գրասենեակը:

Ամբողջ ողբերգութիւնը այնտեղ է սակայն, որ Գասպար Էֆէնդին չունէր նոյն իսկ առածի գթասրտութիւնը:

«Մասալների մէջ օձը երբեմն կը կարեկցի պաղատող աչքերու, բայց որ եւ է առասպելաբանութիւն իսկ երբէք երեւակայած չէ ստեղծել մասալ մը, որուն մէջ Գասպար Էֆէնդի մը, օր մը օրանց գէթ օձին չափ գթասիրտ երեւնար...»

Ահաւասիկ եղբակացութիւնը:

Արփիար Արփիարեան այսպիսի դառն հեգնութեամբ իր պատմութեան գոյները խտացրել է վերջում, բայց այս խտացումը բնաւ չէ փոխում տիպերի, դէպքերի, իրողութիւնների ներքին խմաստը, որ մնում է գերազանցապէս բնական եւ խորապէս ճշմարիտ:

Արփիարեանի գրութեան մէջ երկու տարբեր տիպերի եւ երկու տարբեր դասակարգերի ընդհարումը պատկերանում է մեղ իրական ողբերգութեամբ: Այդ ընդհարման մէջ զոհուում է թորոս աղբարը, որ հիւանդանում է Գասպար Էֆէնդիի պատճառած չարչարանքների հետեւանքով եւ մեռնում է աղգային հիւանդանոցում: Գործաւորի արիւն քրտինքով խնայած տասը ոսկին սեփականում է աղգային հիւանդանոցի վարչութիւնը, թէեւ թորոս աղբարը այնտեղ երկու օր է միայն ապրում: Եւ երբ թորոսի տարաբախտ որդին գիւղից գնում է Վ. Պոլիս ստանալու համար հօր թողած միակ «ժառանգութիւնը» աղգային հիմնարկութիւնից — հիւանդանոցի քարտուղարը յայտարարում է անմարդկային խտրութեամբ:

«Հիւանդանոցը ճրիաքար դարմանուող դարիպին վրայէն ինչ ելլայ, հիւանդանոցին կը մնայ: Օրէնքը այն է:»

Հայաստանի գիւղացու համար տասը ոսկին ամբողջ հարստութիւն էր: Մեւքոնը, թորոսի որդին, աղիողորմ կոչերով խնդրում է հանել տասը ոսկուց այն, ինչ որ ծախսուած է հիւանդի վրայ: Եւ երբ նորէն ստանում է չար, բացասական պատասխան, դառնացած սրտով բացականչում է հիւանդանոցի ամենազօր քարտուղարին.

«Էֆէնդի, աղքատին հախը պիտի ուտէք, Աստու արդար դատաստանէն չէք վախնար...»

Այս խօսքերից յետոյ հիւանդանոցից արտաքսում են Մեւքոնին իր ընկերների հետ, զապթիէ կանչելու սպառնալիքի տակ, կրկնելով շարունակ թէ՛

«Ձեր հախէն քիւրդերը կուգան, քիւրդերը...»

Հայաստանի գործաւորի որդին գնում է գանգատուելու պատրիարքարանին, բայց վերջինս պատասխանում է թէ «պատրիարքարանը հիւանդանոցի գործերուն չի խառնուիր»...

Հետեւանքը:

«Գնաց, արտը զնաց:»

«Հիմակ անդին երկիրը մարն ու մամը ո՞րը լային պիտի, մեռելնի՞ն մի, դարիպնի՞ն մի, չէ նէ արտերնին մի...»

Այս սրտաճմլիկ եւ իրական պատմութեան վերջում Արփիար Արփիարեանի ներկայացրած բանուորները հետեւեալ դառն մտքերն են արտայայտում:

«Ա՛խ, Աստուած, այս մինչեւ ե՞րբ պիտի քաշենք: Մեր հայուն մեզի ըրածները ալ տաճկին ըրածները մոռցնել կու տան: Երկիրը մեր ազգէն հայ քրիստոնեան է, որ օձի պէս վզերնիս կը փաթթուի, հողերնիս, տուներնիս, ունեցածնիս, չունեցածնիս ձեռքերնուս կառնէ, նորէն չի կշտանար, նորէն չի կշտանար: Հոս Սթամպուլ մեր ազգէն հայ քրիստոնեան է, որ հախերնիս կուտէ, մեր փարայովը մարդ կ'ըլլայ ու մեզի դարիպութեան մէջ հիւանդանոցները կը մեռցնէ: Մեր ազգն է, որ ոէնչպէրին երկու փարային աչք կը տնկէ, ճէպէն կը զողնայ, աւուր հացի կարօտ կը թողու: Ա՛խ, Աստուած, ա՛խ. այս մինչեւ ե՞րբ, մինչեւ ե՞րբ...»

Արփիար Արփիարեանի «Մինչեւ ե՞րբ» պատմութեան ցուցահանում է մեր ներքին վերքը: Այն ժամանակ, երբ հին ռումանիք գրողների ամբողջ ուշադրութիւնը ուղղուած էր «քաղաքական դէպքերի» վրայ, Արփիարեան ներկայացնում է ներքին ողբերգական կեանքը, իր աւերիչ կողմերով, իր այլասերման ահաւոր վտանգով:

Քաղաքական կողմից աւելի նա իր ուշադրութիւնը դարձնում է սոցիալական կողմի վրայ եւ ցոյց է տալիս, թէ մեր աշխատաւոր ժողովուրդը ինչ սարսափելի տանջանքներ է կրում իր «աղգակից հայ քրիստոնէից»:



Այս տանջանքները կրում է հայ աշխատաւոր գիւղացին Հայաստանի հեռաւոր գիւղերում, գրաւ դնելով իր արտը քրիստոնեայ վաշխառուների ձեռքում, դառնալով նրանց ստրուկը, կորցնելով իր կեանքը եւ հացը:

Այս տանջանքները կրում է նաեւ հայ գործաւորը Վ. Պոլսում, ենթարկուելով քրիստոնեայ գործատէրերի ամենաբիրտ շահագործման: Վ. Պոլսի հայ բուրժուազիան հարստանում է նրա արիւնոտ աշխատանքի գնով եւ ամենեւին չէ մտահոգում թէ ինչպէս է ապրում եւ մեռնում զարիպ աշխատաւորը մեծ քաղաքի բանտարական թաղերում:

Հայ հասարակական եւ «բարեգործական» հիմնարկութիւնները միւս կողմից, պաշտպանում են դրամատէրին աշխատաւորի հանդէպ եւ միջոց են ծառայում՝ դրամատէրի լուծը աւելի եւս ծանրացնելու հայ աշխատաւորի պարանոցին:

Վերջապէս հայ պատրիարքարանը, որ արեւմտահայոց մէջ ոչ միայն «կրօնական», այլ եւ «քաղաքական» կազմակերպութիւն էր եւ պիտի պաշտպանէր հայ ժողովրդին «հարստահարութիւնների» դէմ, թող էր տալիս, որ այդ ժողովուրդը անխիղճ հարստահարութեան ենթարկուէի հայ էֆէնդիների եւ հայ դրամատէր դասի կողմից:

Արփիար Արփիարեան իր գրութեան մէջ ներկայացրել է այս սոցիալական ակտը, ցոյց տալով, թէ հայ աշխատաւորը ինչպէս է թուլանում, տկարանում այս ներքին հիւանդութիւնից եւ դրանով իսկ կորցնում արտաքին վտանգներին դիմագրելու կարողութիւնը:

Այս կեանքը, այս պրոբլեմները եւ այս սոցիալական աշխարհահայեացքը նա դրել է գրական-գեղարուեստական ձեւի մէջ, տալով իրական պատկերներ եւ գծելով իրական հոգեբանութիւն: Իր գրական գործին նա չէ տուել քարոզչական կամ դաստիարակչական բնոյթ, ինչպէս անում էին մեր ռոմանտիկները:

Այդ գործը որքան համարձակ է իր գաղափարներով եւ իր սոցիալական կողմով, նոյնքան գեղեցիկ է արուեստի, գրականութեան տեսակէտից:

«Մինչեւ երբ»-ից յետոյ «Ոսկի ապրջանը» նրա երկրորդ կարեւոր աշխատութիւնն է այդ ուղղութեամբ, աւելի ամբողջական եւ աւելի բովանդակալից, որին եւ դառնում ենք այժմ:

«Մինչեւ երբ»-ի սկզբնական տպագրութեան եւ «Ոսկի ապրջան»-ի միջեւ ընկած է բաւական երկար ժամանակամիջոց: Առաջինը Վ. Պոլսի «Մասիս»-ի մէջ երեւաց 1889 թուին, իսկ երկրորդը Գահիրէի «Հիւրակ»-ի մէջ երեւաց 1906 թուին:

Այս ժամանակի ընթացքում մեր կեանքի մէջ բաւական նշանակելի փոփոխութիւն առաջացաւ: Եթէ Արփիար Արփիարեանի ակնարկած «ընկերային մտահոգութիւնը» տակաւին 90-ական թուականներին շատ մասնակի նշանակութիւն ունէր, ապա 1906-ին արդէն բաւական հիմքեր ունէր: Դեռ

անցեալ դարավերջին Ռուսաստանում սկսուեցին շարժումներ, որոնց վրայ շատ բնորոշ կերպով ընկերային խնդիրների «մտահոգութիւնը» կար: Քսաներորդ դարի սկզբում, 1902—1903 թուին, Կովկասում եւս տեղի ունեցան նոյն իմաստով շարժումներ: Թիֆլիս եւ Բագու — կովկասեան մտաւորական եւ արդիւնաբերական կենդրոններում — գործաւոր դասակարգը կազմակերպուած ձեւով դուրս եկաւ տիրող քաղաքական վարչաձեւի եւ տնտեսական հասարակարգի դէմ: Այդ շարժումները հետզհետէ աւելի զօրացան ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում, 1904 թուին, որին հետեւեց 1905 թուի Ռուսաստանի առաջին Յեղափոխութիւնը: Այս յեղափոխութեան յատկանշական կողմն այն էր, որ սկսուեց տնտեսական մեծածաւալ գործադուլով եւ առաջ տարուեց գլխաւորապէս աշխատաւորական դասակարգի միջոցով: Հետզհետէ գործնական կեանքում իրականանում էր այն տեսակէտը, որ արտայայտել էին Ռուսաստանի աշխատաւորութեան յայտնի տեսաբանները եւ որի համաձայն Ռուսաստանում Յեղափոխութիւնը պիտի լինէր կամ գործաւորութեան միջոցով եւ կամ երբեք չպիտի լինէր:

Գրականութիւնը քաղաքական եւ սոցիալական այս դէպքերի հանդէպ չէր կարող լուռ մնալ: Ռուսաստանում այդ ժամանակաշրջանը արտայայտեց առաւելապէս Մաքսիմ Գորկին, որ երեւացել էր մինչեւ այդ իբրեւ աշխատաւորական յեղափոխութեան «փոթորկաբեր»:

Արեւելահայ գրականութիւնը, որ շարժւում էր այդ պատմական դէպքերի միջնորդում, բնականաբար չէր կարող խուլ մնալ կեանքի մեծամեծ իրադարձութիւնների հանդէպ: Ամենից առաջ նոր շարժումներին եւ հասարակական նոր տրամադրութիւններին արձագանգ տուեց հրապարակագրութիւնը: Ութսունական եւ ինսունական թուականների մեր հրապարակագրութիւնը, որ զբաղուած էր բացառապէս աղգային եւ «թիւրքահայկական» քաղաքական խնդիրներով — սկսեց զբաղուել նաեւ սոցիալական եւ տնտեսական հարցերով: Աշխատաւորութիւնը, գործաւորական շարժումները, մի խօսքով «ընկերային մտահոգութիւնը» նոր հրապարակագրութեան կարեւոր հիմքերից մէկը դարձաւ: Անշուշտ հին հրապարակագրութիւնը եւ հին հրապարակագիրները ասպարէզից չհեռացան, «թիւրքահայկական» հարցի շնորհիւ նրանք մինչեւ անգամ պահեցին ընթերցողների մեծամասնութիւնը — բայց վերջապէս կորցրին իրենց տարամբ տիրապետութիւնը: Նոր հրապարակագրութիւնը ընկերային կարեւոր խնդիրների հետ միասին զբաղուեց նաեւ «թիւրքահայ» հարցով եւ այդ յաւիտենապէս անլուծելի խնդրի համար առաջարկեց նոր տեսութիւն, որ մերժում էր եւրոպական դիւանագիտական արտաքին ճանապարհը եւ առաջարկում էր ներքին միջոց:

Հրապարակագրութիւնից յետոյ նոր տրամադրութիւններին եւ հասարակական նոր իդէալներին արձագանգ տուեց նաեւ քաղաքական գիտական խնդրագիտութիւնը: Այս ողջութեամբ եղած փորձերից կարեւոր են իտալացի բանաստեղծուհի Ադա Նեգրիի երգերի թարգմանութիւնը եւ Հուլանիկ Կուրդինեանի ինքնու-



րոյն բանաստեղծութիւնները: Եղան նաեւ ուրիշ գրողներ, որոնք թէ բանաստեղծութեան եւ թէ արձակի մէջ արտայայտեցին նոր ժամանակը — բայց այդ գրական փորձերը չանցան միջակութեան սահմաններէց եւ չբարձրացան գեղարուեստական կատարելութեան աստիճանը: Շուշանիկ Կուրղինեանն էլ անշուշտ գեղարուեստական տեսակէտով առանձնապէս նշանակալից չէ, բայց նա կարողացաւ որոշ թաւի եւ որոշ զարկ դնել իր բանաստեղծութիւնների մէջ, արտայայտելով ժամանակի տրամադրութիւնը եւ ազդելով ընթերցողների բազմութեան վրայ:

Հասարակական կեանքի ազդեցութիւնը գրականութեան վրայ այդ ժամանակաշրջանում գրեթէ այսքանով էլ սահմանափակուեց: Հրապարակագրութիւնից եւ բանաստեղծութիւնից զատ, վիպագրութիւնը եւ թատերադրութիւնը կարեւոր գործերով չարտայայտեցին այդ շրջանը, եւ առհասարակ յայտնի հեղինակները սպասողական դիրք բռնեցին նոր կեանքի հանդէպ եւ շարունակեցին իրենց հին նիւթերը մշակել:

Եթէ արեւելահայ գրականութիւնը, որ ապրում էր քաղաքական եւ սոցիալական փոթորիկուած միջավայրի մէջ, այսպէս էր, աւելի շարժուն չէր կարող լինել արեւմտեան հայերի գրականութիւնը, որ գտնուում էր կամ Թիւրքիայում՝ կապանքների մէջ եւ կամ աստանդական վիճակում, առանց ժողովրդական յենարանի եւ ներշնչումների:

Արփիար Արփիարեանի «Ոսկի ապրջանը» այս պայմաններում աւելի եւս ուշագորաւ հանգամանք է առնում, լինելով միակ արժէքաւոր երկը ժամանակակից մեր վիպագրութեան մէջ եւ արտայայտելով այնքան հեռուից ժողովրդական, սոցիալական նոր շարժումներն ու նոր իդէալները:

Արփիար Արփիարեան 1905 թուին Ռուսաստանի Յեղափոխութեան եւ Կովկասեան շարժումների ժամանակ ապրում էր Գահիրէում: Կեանքին նա հետեւում էր լրագրութեան եւ գրականութեան միջոցով: Սակայն շնայելով այս աննպաստ պարագային, կեանքն ու սոցիալական շարժումները ազդեցին նրա գեղարուեստական տրամադրութեան եւ երեւակայութեան վրայ, մղեցին նրան դէպի մի ճանապարհ, որով պիտի ընթանար ապրող, ստեղծագործող գրականութիւնը: Այդ ժամանակաշրջանի իրականութիւնը եւ հրապարակագրութիւնը նրան ոչ այնքան նոր փաստեր հաղորդեցին, որքան լուսաւորեցին նրա ստեղծագործական հայեցողութիւնը՝ իր ծանօթ կեանքի վերաբերմամբ: Ընկերական յարաբերութիւնների խորին լաբիրինթոսում շարժուելու եւ նրա զանազան կողմերը տեսնելու համար՝ շատ կարեւոր դեր կատարեց այդ բովանդակալից եւ ուժգին ժամանակաշրջանը: Որքան էլ ըստ երեւոյթին թոյլ լինի կապը նրա սոցիալական գրականութեան եւ այդ ժամանակաշրջանի տրամադրութիւնների միջեւ, այնուամենայնիւ այդ կապը գոյութիւն ունի անկասկածելի կերպով:

Եւ «Ոսկի ապրջանը» մի նշանակալից պատմական էպոքի արտայայտութիւն է:

Գրուածքի կենդրոնական անձնաւորութիւնը մի գործաւոր է, Ղուկաս անունով մի գրաշար: Այս գործաւորը ոչ միայն կենդանի տիպ է, այլ եւ խորհրդանշան է, մի ամբողջ աշխարհահայեացքի պատկերաւոր ձեւակերպութիւնն է: Արփիար Արփիարեան այդ մարդուն չէ վերցրել իւրեւ մի արհեստական միջոց, իր նախասիրած գաղափարը ներկայացնելու համար, ինչպէս անում էին, եւ մինչեւ հիմա էլ յաճախ անում են, մեր ռոմանտիք հեղինակները: Նա նախ եւ առաջ ուէալիստ հեղինակ է: Ինչ որ ներկայացնում է նա, ինչ որ դնում է ընթերցողի առջեւ — կենդանի, անխաղախ, ստոյգ իրականութիւն է: Բայց որովհետեւ ամեն մի իրականութիւն իր մէջ ունի մի ներքին իմաստ, մի շարժող սկզբունք — Արփիարեանի ցոյց տուած իրականութիւնն էլ ունի այդ ներքին իմաստը: Հեղինակներից է կախուած, հեղինակների տաղանդի չափից եւ յատկութիւնից՝ իրականութիւնը այնպէս պատկերացնել, կենսական երեւոյթները այնպէս վերլուծել, որ այս ներքին իմաստը դուրս բերի միջոց միանգամայն բնական կերպով:

Արփիար Արփիարեան այս տեսակէտից անվիճելի կարողութիւն ունի: Գեղարուեստական հազուադէպ յատկութեամբ նա կարողանում է կեանքի սովորական նկատուած անկիւնները այնպիսի փայլով լուսաւորել եւ մարդկային ամենօրեայ յարաբերութիւնները այնպէս պատմել — որ դուք ստանում էք ոչ թէ իրականութեան սոսկական ցուցադրութիւնը, այլ տեսնում էք գաղափարների, իմաստի մի ամբողջ աշխարհ: Մարդիկը այլ եւս պարզ մարդիկ չեն երեւում այնտեղ իրենց առօրեական կերպարանքով, այլ ներկայանում են որպէս փիլիսոփայական ընդհանրացումներ, որ իրենց մասնաւոր ձեւերի մէջ թագցնում են մարդկութիւնը, կեանքը առհասարակ:

Մեր գրականութեան մէջ, մինչեւ անգամ անուանի գրողների երկերում, գեղարուեստական տարրական պահանջները յաճախ զոհ են գնացել հեղինակի կանխակալ մտադրութեան: Կեանքի ճշմարիտ վերարտադրութեան փոխարէն ունեցել ենք յաճախ իրականութեան ծաղրանկարներ, թէկուզ եւ լալագին, ողբերգական արտաքինի տակ: Այս պատճառով՝ առանձնապէս դիտելի է Արփիար Արփիարեանի գրականութեան այն կարեւոր գիծը, որով դէպքերն ու անձերը հետեւում են իրենց բնական, ուղիղ ճամբան եւ կեանքը հոսում է իր բուն հունի մէջ: Եւ այս բոլորը այնքան անկաշկանդ կերպով, որ ընթերցողը շատ յաճախ չի զգում նոյն իսկ հիմնական գաղափարը, այլ տեսնում է միայն ակնյայտ, պայծառ, յուզիչ կեանքը, որ խօսում է ինքնին:

«Ոսկի ապրջանը» մէջ էլ, ինչ որ երեւում է ընթերցողին եւ ինչ որ խորապէս ազդում է նրան — գործաւոր Ղուկասի կեանքն է, նրա ընտանիքի դառն եւ անտանելի ճակատագիրը:

Վաթսուն տարեկան մարդ է գործաւոր Ղուկասը, որին տարիքի պատճառով եւ երկրի սովորութեան համաձայն, անուանում են Ղուկաս աղա: Այս աղան հեգնութիւն է Ղուկասի ողորմելի կացութեան եւ ծայրայեղ թշուառութեան հանդէպ, բայց ընթերցողը անմիջապէս ընդունում է այդ



բառը իբրեւ մի դատարկ հնչեւն, որ չի տալիս գրաշար Ղուկասին ոչ դիրք եւ ոչ էլ որ եւ է նիւթական բարեկեցութիւն:

“Ղուկաս աղան հիմակ վաթսուներ անցուկ, քառասունհինգ տարի է ի վեր աշխատող գրաշար, դեռ երկու մէծիտիէ քով քովի չէր կրցած դնել նեղ օրուան համար: Եւ ընտոր ալ խնայողութիւն ընէր: Բանի մը մէծիտիէ շաբաթականը ո՞ր մէկ ծախքին ձեռք պիտի տար, տանը վարձքի՞ն, ուտելիքն ուն, վրայ գլուխի, ծխախոտի՞ն, երթալ գալուն: Հապա ան պարապ մնալները, հապա ան հիւանդանալները, որ գրաշարին օճախին մուխը կը մարեն:”

Բանուոր Ղուկասի ընտանիքը մեծ չէ: Ինքն է, կինը եւ եղբօր աղջիկը, Արմիկը, որ հօրից եւ մօրից որբ է մնացել երկու տարեկան հասակում եւ որ այնուհետեւ մեծացել է Ղուկասի ընտանիքում իբր հարազատ զաւակ: Գործաւորը, ինչպէս եւ նրա կինը նայել են Արմիկի վրայ ծնողական գուրդուրանքով եւ խանդաղատանքով, ոչինչ չեն խնայել նրանից, ուսում եւ կրթութիւն են տուել նրան, որքան կարողացել են իրենց բանուորական սուղ միջոցներից: Արմիկարեան իր գրուածքի մէջ գեղեցիկ կերպով ներկայացնում է այն ամբողջ կեանքը, որ անցնում է Արմիկի մանկութիւնից մինչեւ նրա հասունութեան շրջանը: Բանուորական ընտանիքի ներքին յարաբերութիւններն է ցուցահանում, որբ աղջկայ կացութիւնը այդ առաքինի միջավայրում, ուր ոչ շահագիտական հաշիւներ կան, ոչ ազգակցական եւ մարդկային կապերի շահագործում, ուր անխարդախ բարեկամութիւն գոյութիւն ունի եւ փոխադարձ սրտակցութիւն երկու կողմից: Արմիկի հայրը մահից յետոյ թողել է որոշ խնայողութիւն նրա համար, բայց Ղուկասը ձեռք չէ տուել այդ գումարին եւ պահել է Արմիկի համար իբր անձնուսմանի ապահովութիւն՝ գնելով նրա անունով երկաթուղիների թղթեր: Տառապանքով, չարչարանքով, բայց եւ սիրով ու գորովանքով հասցրել է նա Արմիկին մինչեւ 19 տարեկան հասակը, երբ ժամանակ էր արդէն ամուսնութեան:

“Արմիկը ա՛լ հասուկ աղջիկ էր, տասնիննին մատ կար...”

Հօրեղբայրը կամենում է նրան ամուսնացնել, “բայց դէմը խրամէթ մը չէր ելար”: Սակայն վերջապէս՝

“Մարդը ըրաւ չըրաւ, աղէկ տղայ մը ձեռք ձգեց. Սամաթիացի Արթաքի աղան: Մանչը մեծ պահքի կիրակի մը հօրեղբօրը հետ Խասագեղ աղջիկ տեսի գնաց եւ Արմիկին հաւնելով, դիմացի կիրակին էլ խօսք կապը տարին հետեւեալ համաձայնութեամբ: Աղջկանը հօրենական ժառանգութիւնը՝ Ռումելիի տասերկու երկաթուղի՝ փեսին պիտի յանձնուէր պատրիարքարանով նշանտուրի օրը. օժիտը՝ Ղուկաս աղային վրայ:”

Մեր հասարակական կարգի տարկանոն երեւոյթներից է այս ամուսնութեան խնդիրը, որ անբնական արտօնութիւն է տալիս տղամարդուն եւ անեւանի կացութիւն է ստեղծում աղջկաների համար: Արմիկը, աշխատասէր,

աղնիւ, գեղեցիկ Արմիկը, պիտի տրուի իբրեւ կին մի ծոյլ եւ անաշխատ տղամարդու, որպիսին Արթաքի աղան է: Մի տղամարդու, որ որ եւ է գործ սկսելու եւ իր կեանքը վաստակելու համար՝ պէտք ունի Արմիկի հօրից մնացած խնայողութեան եւ գործաւոր Ղուկասի նիւթական աջակցութեան: Այս արտառոց երեւոյթը մեր ժամանակակից հասարակարգի մէջ երեւան է գալիս իբրեւ պարտականութիւն կնոջ վրայ դրուած եւ իբրեւ իրաւունք՝ տղամարդուն տրուած: Գործաւոր Ղուկասը անշուշտ չէ մտնում այս ցաւագին խնդրի քննութեան մէջ: Նրա առջեւ կանգնած է կեանքի անողոր պահանջը — եւ միամիտ, դժբախտ գործաւորը ամեն կերպ աշխատում է այդ պահանջին գոհացում տալ:

Դժբախտութիւնն այնտեղ է սակայն, որ չնայելով իր կատարեալ համակերպութեան Ղուկասը չէ կարողանում իրագործել նշանագրութեան պայմանները: Ի՞նչպէս պատրաստի օժիտը, ո՞ր միջոցներից, ի՞նչ եկամուտից: Նրա բանուորական ողորմելի օրավարձը բաւականութիւն չէր տալիս ընտանիքի ամենամահաճախ ծախքերին: Սեփականազուրկ գործաւորը չէր կարող “ծայրը ծայրին հասցնել”, եթէ կինն ու Արմիկը իրենց աշխատանքով — ձերմակեղեններ կարելով — օգնութեան չհասնէին նրան: Ի՞նչպէս այժմ նոր ծախքի տակ մանի, ի՞նչպէս իրագործէ նշանագրութեան պայմանը:

Այս ծանր կացութեան մէջ, երբ նա մտածում էր վաշխառուին դիմելով մի կերպ դուրս գալ ստեղծուած անելից՝ պայթում է նոր, անդիմադրելի շարիք: Գործաւոր Ղուկասին հեռացնում են տպարանից — եւ նրա գլխի վրայ կախում է գործազրկութեան սարսափելի ուրուականը: Ոչինչ, բացարձակապէս ոչինչ չի ազդում գործատէր էֆէնդիի վրայ, ոչ Ղուկասի սրտաձմիկ աղերսանքը, ոչ նրա երկար տարիների քրանաջան ծառայութիւնը, ոչ փորձառութիւնն ու անթերի աշխատանքը եւ ոչ էլ ի հարկէ Արմիկի անստոյգ ապագան: Եւ ինչ որ դառնապէս ծանր է այս արձակման պատմութեան մէջ, ոչ թէ գործերի պակասն է, որ իբր պատճառ ներկայացնում է էֆէնդին, այլ այն մտահոգութիւնն է, թէ մի գուցէ գործաւորը ստիպուած լինի պարտքեր անել եղբօր աղջկայ ամուսնութեան համար եւ ինքը, էֆէնդին, աւելորդ ձանձրոյթի մէջ ընկնի այդ պատճառով: Գրամատէրը մտածում է գործնական մարդու պէս: Նա կանխում է յետագայի բոլոր դիմումները եւ խնդիրը լուծում է արմատական կերպով, արտաքսելով բարեխիղճ, փորձուած, պարտաճանաչ աշխատաւորին: Ապիտալիստական հոգեբանութեան մի ցայտուն օրինակն է այս, որ Արմիկարեան ներկայացրել է այնքան նուրբ կերպով, չնուսելով այդ մասին եւ թողնելով որ ուշադիր ընթերցողը դէպքերի կապակցութիւնից հանէ այդ եղբակացութիւնը:

Այս անխիղճ արձակումը, ծաղկազարդի շաբաթ օրը, զատկական տօների նախօրեակին, այնպիսի տագնապալի մի վայրկեանում, խորին ազդեցութիւն է անում գործաւոր Ղուկասի հոգեկան աշխարհի վրայ: Ի՞նչ: Ինքը, որ այնքան սրտացաւ բանուոր է եղել, աշխատել է կատարեալ բարեխղճութեամբ, աչքի լոյսը ձեռագիրների վրայ խաւարեցրել է, ճգնել է ամեն անընթեւ



ների գիր կարդալ, որպէս զի սրբագրիչները շնորհան — այժմ այդ վաստակաւոր գործաւորը իբրեւ մի շուն գուրս պիտի նետուի գործարանից: Գառաւորն հինգ երկար տարիների աշխատանքից յետոյ ուր պիտի գնայ գործաւորը եւ որտեղ պէտք է նոր գործ գտնի՝ իր ընտանիքի թշուառական գոյութիւնը պահպանելու համար, երբ մանաւանդ արձակուած է վարկաբեկութեամբ, իբրեւ անկարող, անպէտք, ծերացած բանուոր: Մի ամբողջ ողբերգութիւն կայ այս վաթսուներեքամեայ մարդու հոգում: Նրա ներքին գոյութիւնը փոթորկւում է իր հիմքից: Նրա բարոյական կեանքը ցնցւում է ուժգնօրէն: Արփիար Արփիարեան արուեստագէտ հոգեբանի կարողութեամբ դրսեւորել է Ղուկասի հոգին, ցոյց տալով մարդկային ցաւերի, զգացումների, մտածումների, ընդհարումների մի մնայլ աշխարհ, որ յուզում է ընթերցողին մինչեւ հոգեկան խռովութիւն: Ծերունի գործաւորը կեանքի բիրտ հարուածների դէմ անզօր՝ հարկադրուած է լինում գրաւ դնել իր ամենանուիրական իրը, Արմիկի երկաթուղիների թղթերը: Արփիարեան վարպետի գրչով է նկարագրում այն սարսափելի վայրկեանները, երբ գործաւոր Ղուկասը զոգոզողով որոնում է ամենակարող թղթերը, սուսգուկի հեռաւոր անկիւններում փաթթուած ու պահուած Արմիկի խնայողութիւնը:

Եւ այսպէս՝ գնում է ամեն ինչ:

Թղթերը այլ եւս չեն վերագրւում անսիրտ վաշխառուի մօտից: Սամաթիացի Արթաքին լքում է Արմիկին: Գործաւոր Ղուկասը չէ կարողանում նոր գործ գտնել: Գժբախտ աղջիկը հիւանդանում եւ մեռնում է չքաւորութեան ճիրաններում: Եւ ամբողջ տունը խորտակւում է այսպէս:

Արփիար Արփիարեան կեանքի գեղարուեստական պատկերացման հետ միասին ներկայացնում է նաեւ այն, թէ այդ ողբերգական իրականութեան ինչպէս են վերաբերում գրականութիւնը եւ քաղաքականութիւնը:

Իր վէպի մէջ Արփիարեան տեղ է տալիս արեւմտահայ «համբաւաւոր գրագէտ» Եղիա Տէմիրճիպաշեանին: Այս անձնական յիշատակումը գրական այժմեան սովորութիւնների մէջ չկայ անշուշտ, եւ որոշ աղատութիւն է ցուցնում այն: Բայց վերջապէս մենք ընդունում ենք վէպի Տէմիրճիպաշեանին, իբրեւ այն ժամանակուայ գրագէտի սիմբոլ: Գործաւոր Ղուկասը գրագէտին պատմում է իր տխուր կեանքը սրտաձմիկ խօսքերով: Սակայն գրագէտը ոչինչ չի հասկանում այդ կեանքից եւ գործաւորի ծանր կացութիւնից:

«... Ինք որ այնքան ցաւածներու վրայ լացած էր, օր մը գրաւարը մտքէն անցուցած չունէր...»

Այն ժամանակուայ գրականութիւնը կեղծ կերպով լալիս էր անիրական դժբախտութիւնների վրայ: Իսկ իրական ողբերգութեան առջեւ աչքերը գոցած էր: Եւ իբրեւ նմուշ այդպիսի կեղծ լացերի՝ Արփիարեան դնում է գրագէտի գրչի տակ մի բանաստեղծութիւն, որի մէջ այս նմուշը.

«... Հէգ գեղեցիկ աղջիկ... տերեւ անկանին  
Յերիկամունսրդ յածին ստուերը դամբանին:  
Նիրհո է խով յոյժ, եւ իբր երազ մ'արթնութիւնդ,  
Մէն մի ճաճանչ արփույն ըմպէ վարդ արիւնդ...»

Ժողովրդի մարդը կարգում է այս բանաստեղծութիւնը եւ ամենեւին չի կարողանում ըմբռնել, թէ ինչ կապ ունի այդ գրականութիւնը կեանքի եւ իրական ողբերգութեան հետ: Եւ չի հասկացւում այն, ոչ թէ նրա համար որ բարձր է ժողովրդի ըմբռնողութիւնից եւ իբր թէ նրբօրէն գեղարուեստական է, այլ այն պատճառով, որ կեղծ է եւ սուտ գրականութիւն է:

Ժամանակի կեղծ գրականութիւնից դատ՝ Արփիար Արփիարեան գործաւոր Ղուկասի բերանով քննադատում է նաեւ ազգային քաղաքականութիւնը, որ արտայայտւում էր Երեսփոխանական ժողովի եւ պատրիարքարանի միջոցով:

«Եղիա Էֆէնդի, բան մըն ալ ըսեմ, կ'ուզես նէ գնա մէյ մը պատրիարք սրբազանին, երեսփոխան Էֆէնդիներուն հարցուր, նայէ ինչ կրեսն...»

«Եւան մինչեւ Պերլինները մարդ ղրկեցին, Հայաստանի հայերը քրդերուն հարստահարութիւններէն, վալիներուն կեղերումներէն ազատելու համար: Աղէկ ըրին, պարտքերին կատարեցին: Ինչալլահ օր մը բան մըն ալ կ'ըլլայ: Բայց ճանրմ, Եղիա Էֆէնդի, աս Սթամպուլի մեր չորպաճի Էֆէնդիները քիւրդերէն ալ էւել զալըմ չեն, վալիներէն ալ պէթէր կեղեքիչ չեն: Բիւրդը, վալին գոնէ ժողովրդին բերանը պատառ մը չոր հաց կը թողուն, որպէս զի մարդիկը անօթի չստակեն, նորէն դատեն, նորէն իրենց կերցնեն... Հոս մեր չորպաճի Էֆէնդիները բերաննիս չոր հացի պատառ ալ չեն թողուր, ան ալ խափմիշ կ'ընեն, իրենք կ'ուտեն: Բառսունը հինգ տարի դատեցայ, աշխատեցայ, օրին մէկն ալ կոնկիս թէքմէ մը, հայդէ դուրս: Մարդս տունը շուն մըն ալ պիլէ ունենալու ըլլայ նէ, ըխտիարցեր է ըսելով, պոչէն չի բռներ տէ փողոց նետեր... Պատրիարք սրբազանը, երեսփոխան Էֆէնդիները ասիկա չեն մի տեսնար...»

Բայց պատրիարքը եւ երեսփոխանները վարում են նոյն «չորպաճի» Էֆէնդիների քաղաքականութիւնը եւ ամենեւին չեն մտահոգւում, որ հայ ժողովրդի ներսում գործաւոր դասակարգ կայ, որ այդ դասակարգը անկարելի զոհողութիւններով ստեղծում է բարիք եւ ինքը մնում է յաւետինապէս զոհ: Ղուկասի հայրը ծայրայեղ միամտութիւն է ունեցել մտածելու, որ իր որդու ձեռքում արհեստը, աշխատանքը կարող է լինել ոսկի ապարանջան, բայց մեր ախտաւոր հասարակարգի մէջ այդ աշխատանքը դառնում է անտանելի ծանր կապանք:



“... Զէնասածը ոսկի ապրջման մի: Զելեփչէ, քելեփչէ, ձեռքերս կոտորեց...”

Այս դառն խօսքերով է վերջանում Արփիարեանի գրուածքը, Ղուկասի թուրքախառն եւ պատկերալից բարբառով, որի մէջ նա գրել է ժողովրդական մարդու մնայլ փիլիսոփայութիւնը եւ նրա վերաւոր, տանջուած հոգեբանութիւնը:

Արհեստը ոսկի ապարանջման է արդեօք, հարցնում է բանուորը: Ոչ: Ձեռնակապ է միայն, որ կոտորում է աշխատաւորի ձեռքերը, պատասխանում է բանուորը ինքն իրեն:

Արփիար Արփիարեան այս գրուածքով լրացնում է “Մինչեւ երբ”ի նիւթը: Այնտեղ արտայայտուած էր գիւղացու եւ պանդխտի գործաւորական կեանքը, որ կապուած էր գիւղի հետ: Այստեղ արտայայտուած է քաղաքացի բանուորի կեանքը, որ աշխատում է քառասունհինգ երկար տարիներից ի վեր եւ որ կատարելապէս սեփականադուրկ է:

Թէ թորոսը “Մինչեւ երբ”ի մէջ եւ թէ Ղուկասը “Ոսկի ապրջման”ի մէջ զոհ են հասարակական յոռի կարգերի: Հայ դրամատիրական դասակարգը նրանց աշխատեցնում է դժոխային պայմանների մէջ — եւ շահագործում է նրանց աշխատանքը, աւերելով նրանց տնտեսութիւնը գիւղում եւ քաղաքում, ոչնչացնելով ազգութեան հիմքը, կրծելով նրա արմատը ամենաբիրտ ապերախտութեամբ:

Արփիարեանի աշխատաւորները տակաւին միամիտ են, անգիտակից իրենց բարձր քաղաքակրթական դերին, անգիտակից մանաւանդ իրենց սոցիալական ոյժին: Բայց կեանքի ծանր փորձութիւնների մէջ եւ դասակարգային պայքարի ոլորտում նրանք սկսում են հասկանալ իրենց դրութիւնը, սկսում են ըմբռնել անտաւոր իրականութիւնը եւ ըմբոստանալ նրա դէմ: Գործաւոր Ղուկասի հոգում այս գիտակցութեան սկիզբը նկատուում է արդէն, երբ նա զայրանում է ոչ միայն շահագործող դասի անարդարութիւնների դէմ, այլ եւ գրագէտների դէմ, որոնք չեն ներկայացնում իրական ողբերգութիւնը, այլ եւ պատրիարքարանի ու երեսփոխանական ժողովի դէմ, որոնք “չեն տեսնում” գործաւոր դասի հարստահարութիւնը:

Այս տեսողութիւնը սակայն դեռ երկունքի սկիզբն է:

Մեր սոցիալական կեանքում Արփիարեանի ժամանակ հաւաքական գիտակցութիւնը այդ փուլի մէջ էր տակաւին:

Նրա աշխատաւորական վէպը այդ սկզբնական շրջանի բողոքն է՝ ներքին հարստահարութեան եւ աշխատանքի շահագործման դէմ:

Նա պատմական ժամանակաշրջանի արտայայտութիւն է եւ իբրեւ այդպիսին՝ պատմական նշանակութիւն ունի:

## VII.

## ԱՐՓԻԱՐԵԱՆԻ ԴԵՐՔ

Մեր ուսումնասիրութեան մէջ մենք քննեցինք Արփիար Արփիարեանին իբրեւ գրագէտ-գեղարուեստագէտ:

Նրա հրապարակագրական աշխատանքը, որ ապահովաբար նրա գործի մնայուն մասը չէ եւ որ չի կարող հրահանգիչ լինել այժմեան սերնդի համար — նիւթ չդարձաւ մեր ուսումնասիրութեան: Ինչ որ Արփիար Արփիարեանին արժէք է տալիս այսօր, նրա մահից 14 տարի յետոյ, այդ նրա գեղեցիկ գրականութիւնն է: Հրապարակագրութիւնը գրուեց եւ անցաւ: Գեղարուեստական գործը մնաց եւ կը մնայ: Արփիար Արփիարեանի դերը նշանակալից եղաւ մեր գրականութեան մէջ առաւելապէս այդ տեսակէտից:

Իր ժամանակին, ութսունական թուականների մեր հրապարակագրութեան մէջ, նա խոշոր դեր կատարեց եւ ազդեցութիւն ունեցաւ նաեւ իբրեւ հրապարակագիր: Բայց ինչպէս նկատեցինք իր տեղում, այդ դերի մէջ նա չկարողացաւ գերադանցել կամ նոյն իսկ հաւասարել երևոյցի առաջ ապրող եւ գրող Միքայէլ Նալբանդեանին:

Գեղարուեստական գրականութեան մէջ սակայն նա ունեցաւ այնպիսի դեր, որ շատ տեսակէտներով առաջնակարգ է: Մեր ուսումնասիրութեան ընթացքում մենք աշխատեցինք ցոյց տալ նրա գործի իրական, առարկայական արժէքը եւ դրանով իսկ պատկերացնել նրա դերը: Մենք չձանրացանք նրա գործի թերութիւնների վրայ, այլ աշխատեցինք վեր հանել այն, ինչ որ նրա գործի մէջ արժէքաւոր է, դրական է եւ ինչ որ մեր գրականութեան հարստութիւններից է:

Արփիար Արփիարեանի գրական գործը արժէքաւոր է ոչ միայն իր արուեստով, այլ եւ իր ներքին բովանդակութեամբ՝ եւ իր ոգով: Այն ժամանակ, երբ արեւմտահայ վիպական գրականութիւնը գտնուում էր կեղծ դասական ձեւերի եւ նրա շունչով ապրող անկերպարան ուսմանտիղմի մէջ, Արփիարեան հիմք դրեց իրական, կենսալից արձակի, որ իր ոյժով եւ խորութեամբ նոր արուեստի սկիզբ դարձաւ: Այս աշխատանքի մէջ Արփիարեան մեկուսացած չմնաց: Նա կարողացաւ այդ արուեստի սկզբունքների հետ կապել ժամանակի երիտասարդ գրողներին եւ նրանց տանել այն ուղիով, որ գծել էր ինքը այնքան տաղանդաւոր կերպով եւ այնպիսի մեծ համարձակութեամբ: Տիգրան Վամարական, Լեւոն Բաշալեան, Գրիգոր Զոհրապ, Մելքոն Վիւրճեան, Ռուբէն Զարգարեան եւ ուրիշները, որոնք գրեցին նրա ժամանակ եւ նրանից յետոյ, այս կամ այն չափով կրեցին Արփիարեանի ազդեցութիւնը եւ դնացին նրա գծած գրական ճանապարհով:

Այս տեսակէտից Արփիար Արփիարեան արդէն կատարել է կարեւոր դեր, որ կը մնայ միշտ արեւմտահայ գրականութեան պատմութեան մէջ:



Բայց Արփիարեան դեր ունի նաեւ իբրեւ քաղաքական եւ աշխատաւորական վէպի տաղանդաւոր ներկայացուցիչ:

Աշխատաւորական վէպը, որին նուիրեցինք մեր ուսումնասիրութեան վերջին գլուխը, բացառիկ տեղ է գրաւում ոչ միայն Արփիարեանի գրական գործերի, այլ եւ մեր թէ՛ արեւմտահայ եւ թէ՛ արեւելահայ գրականութեան մէջ: Այդ վէպով Արփիարեան սկիզբ է դրել մի գրական շարժման, որ ոչ միայն իր դերն ունի իբրեւ պատմական գործ, այլ եւ այսուհետեւ դեր պիտի ունենայ, որքան մեր կեանքը եւ գրականութիւնը առաջ գնան աշխատաւորական գիտակցութեան ճանապարհով:

Վաղը, դրամատիրական զարհուրելի պատերազմից եւ Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնից յետոյ, պիտի երեւան անշուշտ նոր երկեր եւ նոր գեղագէտներ, որոնք պիտի արտայայտեն նոր կեանքն ու նոր մարդկութեան իդէալները: Արփիար Արփիարեանի գործը, գրուած տասնիններորդ դարի վերջին եւ քսաներորդի առաջին տասնամեակում, ունի եւ մանաւանդ գալիք գործերի համեմատութեամբ պիտի ունենայ շատ թերութիւններ:

Բայց չնայած այդ անխուսափելի պակասներին՝ Արփիարեան պիտի մնայ մեր գրականութեան պատմութեան մէջ որպէս տաղանդաւոր, առաջամարտիկ գրագէտ: Եւ այն, ոչ միայն արուեստի, այլ եւ գաղափարների սահմանում:





ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԹԻԻ 4

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

*Լոյս է տեսել*

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆ

*Մամուլի տակ են*

ՀԵՐԱՆՈՒՇ ԼՐՇԱԿԵԱՆ

ՄԵՋԵԶԳԵՅԻՆ ԳԻՆԿԵՏՆԵՐ

*Գրվել*

S. Hakobian, Wien, VII. Mechitaristengasse Nr. 4.

Գրվել է 4 ֆրանկ. լամպիկայի համար՝ 50 սևճի :



ՀՀ Ազգային գրադարան



NL0371979



66.835